

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2014 թ. պետական ավարտական և միասնական  
քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան

**ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ**

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն



**ՉԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013

## Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

Հ 282

### Հեղինակային խումբ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Արամ Նազարյան (պատմ. գիտ. թեկն.), Էդիկ Գևորգյան (պատմ. գիտ. թեկն.), Էդիկ Մինասյան (պատմ. գիտ. դոկտ.), Արման Մալոյան (պատմ. գիտ. թեկն.), Արմինե Սարգսյան (ՀՊՄՀ դասախոս), Թեհմինա Քոչարյան (պատմաբան, մանկավարժ), Սուսաննա Սերոբյան (ԵՊՀ ասիստենտ), Կարինե Եղիազարյան (պատմ. գիտ. թեկն.), Մարինե Գևորգյան (պատմ. գիտ. թեկն.), Հակոբ Մուրադյան (պատմ. գիտ. թեկն.)

### Խմբագրական կազմ՝

Աշոտ Մելքոնյան, Արամ Նազարյան, Էդիկ Գևորգյան, Էդիկ Մինասյան

Հ 282 Հայոց պատմություն: 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան: Գիրք 1.—Եր.: Զանգակ, 2013.— 424 էջ:

Առաջադրանքների շտեմարանը նախատեսված է «Հայոց պատմություն» առարկայի 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների համար:

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

ISBN 978-9939-68-228-0

© Հեղինակային խումբ, 2013

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2013

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայոց պատմություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների սույն շտեմարանը լրամշակվել է 2013 թ. հաստատված «Հայոց պատմություն. պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց»-ի պահանջների և մոտեցումների հիման վրա: Այն լիովին ընդգրկում է ուղեցույցում տրված «Բովանդակային դասիչ»-ով նախատեսված թեմաները: Առաջադրանքները ներառում են 2009–2011 թթ. լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10–12–րդ դասարանների «Հայոց պատմության» դասագրքերի (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Մելքոնյանի և Ա. Սիմոնյանի խմբագրությամբ) ուսումնական նյութը:

Հաշվի է առնվել նաև ուղեցույցում տեղ գտած «Դասագրքերում առկա վրիպակներ» բաժինը, և առաջադրանքները կազմվել են արդեն ուղղված տարբերակների հիման վրա:

Շտեմարանի առաջին գիրքը կազմված է չորս մասից՝ Մաս Ա. Հայկական քաղաքակրթության ձևավորումն ու զարգացումը, Մաս Բ. Հայկական քաղաքակրթությունը Միջին դարերում, Մաս Գ. Հայկական քաղաքակրթությունը Նոր շրջանում և Մաս Դ. Հայկական քաղաքակրթությունը Նորագույն շրջանում:

Սույն գրքի յուրաքանչյուր մաս ներկայացված է առաջադրանքների 8 տիպերով: Դրանք ներառում են ուղեցույցի «Բովանդակային դասիչ»-ով նախատեսված բաժինների և թեմաների ամբողջ բովանդակությունը: Իրենց բարդության աստիճանով առաջադրանքները համապատասխանում են պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի համար ուղեցույցով որոշված Ա և Բ մակարդակներին:

ԳԹԿ-ն տեղեկացնում է, որ 2013 թ. հաստատված «Հայոց պատմություն. պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց»-ի համաձայն՝ հայոց պատմության շտեմարանի առաջին և երկրորդ գրքերը հրատարակվում են լրամշակված տարբերակով, լույս կտեսնի նաև երրորդ գիրքը, որտեղ կգետեղվեն ուղեցույցով որոշված նոր տեսակի առաջադրանքները: Շտեմարանի երեք գրքերի առաջադրանքներից են կազմվելու 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը:

Շտեմարանի նպատակն է օգնել պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվող ՀՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտներին և դիմորդներին:

*Հաջողություն ձեզ, սիրելի շրջանավարտներ և դիմորդներ:*

**1. ՏԱՐԵԹՎԵՐ**

---

**1. Երբ է հայերենն անջատվել հնդեվրոպական մայր լեզվից.**

- 1) Ք. ա. VI հազարամյակի սկզբին
- 2) Ք. ա. VI հազարամյակի վերջին
- 3) Ք. ա. IV հազարամյակի վերջին
- 4) Ք. ա. V հազարամյակի սկզբին

**2. Ո՞ր դարերից է հիշատակվում Թորգոմա տուն կամ Թեգարամա երկիրը.**

- 1) Ք. ա. XXIII–XX դդ.
- 2) Ք. ա. XX–XVIII դդ.
- 3) Ք. ա. XIX–XV դդ.
- 4) Ք. ա. XVIII–XV դդ.

**3. Երբ է առաջացել առաջին համահայկական միասնական պետությունը.**

- 1) Ք. ա. I հազարամյակի երկրորդ կեսին
- 2) Ք. ա. II հազարամյակի առաջին կեսին
- 3) Ք. ա. I հազարամյակի առաջին կեսին
- 4) Ք. ա. II հազարամյակի երկրորդ կեսին

**4. Գիտության մեջ երբ ի հայտ եկան հայերի տեղաբնիկությունը կասկածի տակ առնող նոր տեսություններ.**

- 1) XVII դարի երկրորդ կեսին
- 2) XVIII դարի երկրորդ կեսին
- 3) XIX դարի երկրորդ կեսին
- 4) XX դարի երկրորդ կեսին

**5. Մինչև երբ է հիշատակվում Ուրարտուն ասուրա–բաբելական և արքեմենյան արքաների արձանագրություններում.**

- 1) Ք. ա. VI դ. առաջին կեսը
- 2) Ք. ա. IV դ. առաջին կեսը
- 3) Ք. ա. IV դ. երկրորդ կեսը
- 4) Ք. ա. VI դ. երկրորդ կեսը

**6. Արամ անունով երկիրը հիշատակվում էր դեռևս.**

- 1) Ք. ա. XVIII դարում
- 2) Ք. ա. XXI դարում
- 3) Ք. ա. XXIII դարում
- 4) Ք. ա. XXIV դարում

**7. Երբ է գահակալել Սարգուրի I-ը.**

- 1) Ք. ա. մոտ 835–825 թթ.
- 2) Ք. ա. մոտ 859–843 թթ.
- 3) Ք. ա. մոտ 825–810 թթ.
- 4) Ք. ա. մոտ 843–835 թթ.

**8. Երբ է գահակալել Իշպուինին.**

- 1) Ք. ա. մոտ 835–825 թթ.
- 2) Ք. ա. մոտ 786–764 թթ.
- 3) Ք. ա. մոտ 810–786 թթ.
- 4) Ք. ա. մոտ 825–810 թթ.

**9. Երբ է գահակալել Մենուան.**

- 1) ք. ա. մոտ 764–735 թթ.
- 2) ք. ա. մոտ 786–764 թթ.
- 3) ք. ա. մոտ 825–810 թթ.
- 4) ք. ա. մոտ 810–786 թթ.

**10. Երբ է գահակալել Արգիշտի I-ը.**

- 1) ք. ա. 764–735 թթ.
- 2) ք. ա. 786–781 թթ.
- 3) ք. ա. մոտ 810–786 թթ.
- 4) ք. ա. 786–764 թթ.

**11. Երբ է Արգիշտի I-ը տերությանը միացրել Աբիլիանի երկիրը.**

- 1) ք. ա. 785 թ.
- 2) ք. ա. 782 թ.
- 3) ք. ա. 784 թ.
- 4) ք. ա. 781 թ.

**12. Վանի թագավորության զորքերը երբ գրավեցին Կեխունի երկիրը.**

- 1) ք. ա. 784 թ.
- 2) ք. ա. 783 թ.
- 3) ք. ա. 782 թ.
- 4) ք. ա. 781 թ.

**13. Ո՞ր թվականներին է Արգիշտի I-ը հաղթական պատերազմ մղել Ասորեստանի դեմ.**

- 1) ք. ա. 790–780 թթ.
- 2) ք. ա. 786–784 թթ.
- 3) ք. ա. 781–778 թթ.
- 4) ք. ա. 768–762 թթ.

**14. Ո՞ր թվականին Ասորեստանը կարողացավ կասեցնել Վանի թագավորության՝ դեպի Բաբելոն շարժվող զորքերը.**

- 1) ք. ա. 743 թ.
- 2) ք. ա. 735 թ.
- 3) ք. ա. 716 թ.
- 4) ք. ա. 719 թ.

**15. Երբ է գահակալել Ռուսա I-ը.**

- 1) ք. ա. 786–764 թթ.
- 2) ք. ա. 735–մոտ 710–ական թթ.
- 3) ք. ա. մոտ 685–645 թթ.
- 4) ք. ա. 764–735 թթ.

**16. Ո՞ր թվականին Ռուսա I-ի հետ բախման արդյունքում Սարգոն II-ը անհաջողություն կրեց.**

- 1) ք. ա. 719 թ.
- 2) ք. ա. 716 թ.
- 3) ք. ա. 735 թ.
- 4) ք. ա. 714 թ.

**17. Ո՞ր հազարամյակից է Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցել համադաշնությունների համակարգը.**

- 1) ք. ա. IV հազարամյակից
- 2) ք. ա. III հազարամյակից
- 3) ք. ա. II հազարամյակից
- 4) ք. ա. I հազարամյակից

**18. Հայկական լեռնաշխարհում 17 երկրների դաշինքը դր դարերում էր հայտնի.**

- 1) ք. ա. XXIII–XXII դարերում
- 2) ք. ա. XX–XIX դարերում
- 3) ք. ա. XIX–XVIII դարերում
- 4) ք. ա. XVIII–XVII դարերում

**19. Երբ է վերականգնվել Հայկազունների տոհմի իշխանությունը.**

- 1) ք. ա. IV դարում
- 2) ք. ա. VII դարում
- 3) ք. ա. VI դարում
- 4) ք. ա. VIII դարում

- 20. Երբ են Սինաքերիբի հայրասպան որդիները փախել Հայաստան.**
- 1) ք. ա. 618 թ. 3) ք. ա. 681 թ.  
2) ք. ա. 612 թ. 4) ք. ա. 609 թ.
- 21. Երբ է Պարոյր Նահապետը թագադրվել և ճանաչվել Հայաստանի թագավոր.**
- 1) ք. ա. 681 թ. 3) ք. ա. 612 թ.  
2) ք. ա. 621 թ. 4) ք. ա. 618 թ.
- 22. Մարաստանի, Բաբելոնի և Հայաստանի դաշնակից զորքերը Երբ արշավեցին դեպի Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ.**
- 1) ք. ա. 612 թ. 3) ք. ա. 605 թ.  
2) ք. ա. 609 թ. 4) ք. ա. 621 թ.
- 23. Երբ է սկսվել Մարաստանի դեմ Կյուրոս Մեծի գլխավորած ապստամբությունը.**
- 1) ք. ա. 555 թ. 3) ք. ա. 550 թ.  
2) ք. ա. 535 թ. 4) ք. ա. 553 թ.
- 24. Երբ է Տիգրան Երվանդյանը, դաշնակից զորքերի գլուխ անցած, գրավել Բաբելոնը.**
- 1) ք. ա. 553 թ. 3) ք. ա. 529 թ.  
2) ք. ա. 524 թ. 4) ք. ա. 538 թ.
- 25. Երբ է կործանվել Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն.**
- 1) ք. ա. 643 թ. 3) ք. ա. 590 թ.  
2) ք. ա. 612 թ. 4) ք. ա. 553 թ.
- 26. Երբ է գահակալել Դարեհ I-ը.**
- 1) ք. ա. 529–522 թթ. 3) ք. ա. 486–480 թթ.  
2) ք. ա. 522–486 թթ. 4) ք. ա. 336–331 թթ.
- 27. Երբ է Աքեմենյան տերությունը բաժանվել վարչական 20 մեծ շրջանների.**
- 1) ք. ա. 523 թ. 3) ք. ա. 520 թ.  
2) ք. ա. 521 թ. 4) ք. ա. 529 թ.
- 28. Երբ է Դարեհ III Կողոմանոսը դառնում ողջ Աքեմենյան տերության տիրակալ.**
- 1) ք. ա. 331 թ. 3) ք. ա. 336 թ.  
2) ք. ա. 334 թ. 4) ք. ա. 335 թ.
- 29. Ո՞ր թվականից է գահակալել Արշամ Երվանդականը.**
- 1) ք. ա. մոտ 260 թ. 3) ք. ա. մոտ 240 թ.  
2) ք. ա. մոտ 220 թ. 4) ք. ա. մոտ 201 թ.
- 30. Ո՞ր թվականներին է իշխել Շամ (Սամոս) Երվանդականը.**
- 1) ք. ա. մոտ 260–240 թթ. 3) ք. ա. մոտ 580–570 թթ.  
2) ք. ա. մոտ 240–220 թթ. 4) ք. ա. մոտ 220–201 թթ.

**31. Երբ է գահակալել Երվանդ Վերջինը.**

- |                          |                          |
|--------------------------|--------------------------|
| 1) ք. ա. մոտ 240–220 թթ. | 3) ք. ա. մոտ 580–570 թթ. |
| 2) ք. ա. մոտ 220–201 թթ. | 4) ք. ա. մոտ 260–240 թթ. |

**32. Ալեքսանդր Մակեդոնացու տերությունը իր թվականին բաժանվեց մի քանի մասերի.**

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 313 թ. | 3) ք. ա. 201 թ. |
| 2) ք. ա. 301 թ. | 4) ք. ա. 189 թ. |

**33. Երբ են Հայաստանի տարածքում առաջին անգամ հիշատակվում Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես առանձին վարչական միավորներ.**

- |                     |                    |
|---------------------|--------------------|
| 1) ք. ա. VII դարում | 3) ք. ա. VI դարում |
| 2) ք. ա. V դարում   | 4) ք. ա. IV դարում |

**34. Երբ է կնքվել Ապամեայի հաշտության պայմանագիրը.**

- |                 |                 |                 |                 |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 190 թ. | 2) ք. ա. 188 թ. | 3) ք. ա. 189 թ. | 4) ք. ա. 179 թ. |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|

**35. Երբ են անկախ հռչակվել Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Մոփքը և Կոմմագենեն.**

- |                 |                 |                 |                 |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 201 թ. | 2) ք. ա. 189 թ. | 3) ք. ա. 190 թ. | 4) ք. ա. 188 թ. |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|

**36. Երբ Արտաշես I-ը վճռական հակահարված հասցրեց Անտիոքոս IV թագավորին.**

- |                 |                 |                 |                 |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 165 թ. | 2) ք. ա. 175 թ. | 3) ք. ա. 185 թ. | 4) ք. ա. 160 թ. |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|

**37. Երբ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) ք. ա. մոտ 185 թ. | 3) ք. ա. մոտ 165 թ. |
| 2) ք. ա. մոտ 175 թ. | 4) ք. ա. մոտ 160 թ. |

**38. Երբ է տեղի ունեցել Մազնեսիայի ճակատամարտը.**

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 220 թ. | 3) ք. ա. 230 թ. |
| 2) ք. ա. 188 թ. | 4) ք. ա. 190 թ. |

**39. Երբ է հրապարակվել Արտաշես I-ի հրամանագիրը հողային բարեփոխման վերաբերյալ.**

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 165 թ. | 3) ք. ա. 160 թ. |
| 2) ք. ա. 180 թ. | 4) ք. ա. 140 թ. |

**40. Երբ է գահակալել Արտավազդ I-ը.**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) ք. ա. 180–160 թթ. | 3) ք. ա. 115–95 թթ. |
| 2) ք. ա. 160–115 թթ. | 4) ք. ա. 95–55 թթ.  |

**41. Երբ է գահակալել Տիգրան I-ը.**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) ք. ա. 160–115 թթ. | 3) ք. ա. 115–95 թթ. |
| 2) ք. ա. 95–55 թթ.   | 4) ք. ա. 55–34 թթ.  |

**42. Երբ է գահակալել Տիգրան II-ը.**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) ք. ա. 115–95 թթ. | 3) ք. ա. 160–115 թթ. |
| 2) ք. ա. 55–34 թթ.  | 4) ք. ա. 95–55 թթ.   |

**43. Երբ է Տիգրան Մեծը Ծովքը միավորել իր թագավորությանը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 95 թ. | 3) ք. ա. 94 թ. |
| 2) ք. ա. 93 թ. | 4) ք. ա. 87 թ. |

**44. Երբ է կառուցվել մայրաքաղաք Տիգրանակերտը.**

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) ք. ա. 90–80–ական թթ. | 3) ք. ա. 80–70–ական թթ. |
| 2) ք. ա. 60–50–ական թթ. | 4) ք. ա. 70–60–ական թթ. |

**45. Երբ է Տիգրան Մեծը Կորդուքը միացրել Մեծ Հայքին.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 84 թ. | 3) ք. ա. 88 թ. |
| 2) ք. ա. 93 թ. | 4) ք. ա. 94 թ. |

**46. Ո՞ր թվականին հայկական բանակը նվաճեց Պտղոմայիս քաղաքը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 84 թ. | 3) ք. ա. 69 թ. |
| 2) ք. ա. 71 թ. | 4) ք. ա. 66 թ. |

**47. Երբ է ընթացել հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) ք. ա. 69–67 թթ. | 3) ք. ա. 68–67 թթ. |
| 2) ք. ա. 69–68 թթ. | 4) ք. ա. 68–66 թթ. |

**48. Երբ է ընթացել հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 68 թ. | 3) ք. ա. 65 թ. |
| 2) ք. ա. 66 թ. | 4) ք. ա. 64 թ. |

**49. Լուկուլլոսի բանակը երբ դուրս եկավ Կորդուքից և շարժվեց դեպի Արտաշատ.**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) ք. ա. 68 թ. ձմռանը | 3) ք. ա. 68 թ. աշնանը  |
| 2) ք. ա. 68 թ. ամռանը | 4) ք. ա. 68 թ. գարնանը |

**50. Երբ Հրահատ III-ը պաշարեց Արտաշատը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 68 թ. | 3) ք. ա. 67 թ. |
| 2) ք. ա. 66 թ. | 4) ք. ա. 65 թ. |

**51. Պոմպեոսի և Տիգրան Մեծի միջև երբ սկսվեցին հաշտության բանակցությունները.**

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) ք. ա. 64 թ. օգոստոսին   | 3) ք. ա. 66 թ. սեպտեմբերին |
| 2) ք. ա. 67 թ. հոկտեմբերին | 4) ք. ա. 65 թ. սեպտեմբերին |

**52. Հռոմեական բանակը Լուկուլլոսի գլխավորությամբ երբ մտավ Հայաստան.**

- |                        |                            |
|------------------------|----------------------------|
| 1) ք. ա. 69 թ. ամռանը  | 3) ք. ա. 68 թ. սեպտեմբերին |
| 2) ք. ա. 69 թ. գարնանը | 4) ք. ա. 66 թ. աշնանը      |

**53. Երբ է կնքվել Արտաշատի պայմանագիրը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ք. ա. 69 թ. | 3) ք. ա. 66 թ. |
| 2) ք. ա. 68 թ. | 4) ք. ա. 65 թ. |

**54. Երբ է գահակալել Արտավազդ II-ը.**

- |                     |                    |
|---------------------|--------------------|
| 1) ք. ա. 115–95 թթ. | 3) ք. ա. 55–34 թթ. |
| 2) ք. ա. 95–55 թթ.  | 4) ք. ա. 30–20 թթ. |



**55. Երբ է կնքվել Արտավազդ II-ի և Օրոդես II-ի միջև հայ-պարթևական պայմանագիրը.**

- 1) Բ. ա. 35 թ.      2) Բ. ա. 40 թ.      3) Բ. ա. 54 թ.      4) Բ. ա. 53 թ.

**56. Երբ է տեղի ունեցել Խառանի ճակատամարտը.**

- 1) Բ. ա. 53 թ. հոկտեմբերի 6-ին      3) Բ. ա. 54 թ. հոկտեմբերի 6-ին  
2) Բ. ա. 54 թ. մայիսի 6-ին      4) Բ. ա. 53 թ. մայիսի 6-ին

**57. Երբ է Անտոնիոսը Պարթևստանի դեմ արշավելու նպատակով ժամանել Արևելք.**

- 1) Բ. ա. 34 թ.      2) Բ. ա. 43 թ.      3) Բ. ա. 53 թ.      4) Բ. ա. 36 թ.

**58. Անտոնիոսը 60-հազարանոց զորքով երբ արշավեց Հայաստան.**

- 1) Բ. ա. 50 թ. ամռանը      3) Բ. ա. 36 թ. գարնանը  
2) Բ. ա. 43 թ. գարնանը      4) Բ. ա. 34 թ. ամռանը

**59. Երբ է գահակալել Արտաշես II-ը.**

- 1) Բ. ա. 34-30 թթ.      3) Բ. ա. 20-8 թթ.  
2) Բ. ա. 30-20 թթ.      4) Բ. ա. 55-34 թթ.

**60. Երբ է գահակալել Տիգրան III-ը.**

- 1) Բ. ա. 30-20 թթ.      3) Բ. ա. 20-8 թթ.  
2) Բ. ա. 8-5 թթ.      4) Բ. ա. 5-2 թթ.

**61. Երբ է առաջին անգամ գահակալել Տիգրան IV-ը.**

- 1) Բ. ա. 5-2 թթ.      3) Բ. ա. 2-1 թթ.  
2) Բ. ա. 8-5 թթ.      4) Բ. ա. 20-8 թթ.

**62. Երբ է գահակալել Արտավազդ III-ը.**

- 1) Բ. ա. 5-2 թթ.      3) Բ. ա. 8-5 թթ.  
2) Բ. ա. 20-8 թթ.      4) Բ. ա. 2-1 թթ.

**63. Երբ է Հայաստանում գահակալել Արիոբարզանեսը.**

- 1) Բ. ա. 2-1 թթ.      2) 4-6 թթ.      3) 2-4 թթ.      4) 6-12 թթ.

**64. Երբ է գահակալել Արտավազդ IV-ը.**

- 1) 4-6 թթ.      2) 2-4 թթ.      3) 12-16 թթ.      4) 6-12 թթ.

**65. Երբ է գահակալել Ջենոն-Արտաշեսը.**

- 1) 35-37 թթ.      2) 18-34 թթ.      3) 34-35 թթ.      4) 12-16 թթ.

**66. Երբ է առաջին անգամ Մեծ Հայքում գահակալել Միհրդատ Իբերացին.**

- 1) 18-34 թթ.      2) 34-35 թթ.      3) 51-56 թթ.      4) 35-37 թթ.

**67. Երբ է Հայաստանում գահ բարձրացել Հռոմի դրածո Տիգրան VI-ը.**

- 1) 58 թ.      2) 60 թ.      3) 59 թ.      4) 65 թ.

- 68. Երբ է Կորբուլոնը սկսել բանակցությունները Վաղարշի ու Տրդատի հետ՝ վերջինիս թագադրելու՝ Ներոնի առաջարկի շուրջ.**
- 1) 64 թ.                      2) 60 թ.                      3) 62 թ.                      4) 65 թ.
- 69. Երբ է Տրդատը մեկնում Հռոմ՝ թագը Ներոնից ստանալու նպատակով.**
- 1) 64 թ.                      2) 66 թ.                      3) 65 թ.                      4) 62 թ.
- 70. Երբ է Տրդատ I-ը ալաններին վտարել Հայաստանից.**
- 1) 70 թ.                      2) 72 թ.                      3) 76 թ.                      4) 82 թ.
- 71. Երբ է գահակալել Սանատրուկ II-ը.**
- 1) 117–140 թթ.              2) 110–117 թթ.              3) 88–110 թթ.              4) 66–88 թթ.
- 72. Ո՞ր թվականին է հայոց գահը հանձնվել Բակուր Արշակունուն.**
- 1) 140 թ.                      2) 160 թ.                      3) 161 թ.                      4) 164 թ.
- 73. Մինչև երբ է գահակալել Սոհեմոս–Տիգրանը.**
- 1) 164 թվականը                      3) 185 թվականը  
2) 163 թվականը                      4) 198 թվականը
- 74. Երբ է գահակալել հայոց Խոսրով I թագավորը.**
- 1) 185–198 թթ.                      3) 164–185 թթ.  
2) 198–215 թթ.                      4) 216–252 թթ.
- 75. Երբ է գահակալել Տրդատ II-ը.**
- 1) 252–260 թթ.                      3) 185–198 թթ.  
2) 198–215 թթ.                      4) 216–252 թթ.
- 76. Երբ է Տրդատ Արշակունին մենամարտում հաղթել գործերի իշխանին.**
- 1) 267 թ.                      2) 296 թ.                      3) 276 թ.                      4) 279 թ.
- 77. Երբ է տեղի ունեցել Ոսխայի ճակատամարտը.**
- 1) 297 թ.                      2) 298 թ.                      3) 287 թ.                      4) 276 թ.
- 78. Երբ է կնքվել Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.**
- 1) 278 թ.                      2) 297 թ.                      3) 298 թ.                      4) 287 թ.
- 79. Երբ է Տրդատ III-ը վերջնականապես հաստատվել հայոց գահին.**
- 1) 287 թ.                      2) 297 թ.                      3) 276 թ.                      4) 298 թ.
- 80. Երբ է Հայաստանում սկսվել հելլենիզմի դարաշրջանը.**
- 1) Ք. ա. II դարից                      3) Ք. ա. V դարից  
2) Ք. ա. I դարից                      4) Ք. ա. III դարից
- 81. Երբ է արգելվել հայկական մեհենագրության գործածությունը.**
- 1) I դարում                      2) V դարում                      3) II դարում                      4) IV դարում

**82. Ո՞ր դարերով են թվագրվում Հայաստանում հայտնաբերված արամեատառ արձանագրությունները.**

- 1) ք. ա. VI – ք. հ. IV դդ.
- 2) ք. ա. III – ք. հ. II դդ.

- 3) ք. ա. IV – ք. հ. IV դդ.
- 4) ք. ա. II – ք. հ. II դդ.

**83. Երբ է գահակալել Արշակ I Արշակունին.**

- 1) 34–35 թթ.
- 2) 35–37 թթ.

- 3) 37–43 թթ.
- 4) 43–51 թթ.

**84. Ո՞ր թվականից հետո Արևելյան Հայաստանի արքունի գրագրության մեջ սկսեց կիրառվել պահլավերենը (միջին պարսկերեն).**

1) 301 թ.

2) 234 թ.

3) 387 թ.

4) 451 թ.

**85. Երբ է թագավոր հռչակվել Անտիոքոս I Երվանդականը.**

- 1) ք. ա. 93 թ.
- 2) ք. ա. 70 թ.

- 3) ք. ա. 84 թ.
- 4) ք. ա. 71 թ.

**86. Երբ է Տրդատ I-ը կառուցել Գառնիի ամրոցը.**

1) 72 թ.

2) 86 թ.

3) 76 թ.

4) 75 թ.

**87. Երբ է գտնվել Անահիտ աստվածուհու բրոնզաձուլ արձանի գլուխը.**

1) XVII դարում

2) XVIII դարի վերջին

3) XIX դարում

4) XX դարի սկզբին

**88. Երբ է գրի առնվել հայերի ծագման մասին վրացական ավանդազրույցը.**

1) V–VI դարերում

2) VII–VIII դարերում

3) IX–XI դարերում

4) XI–XIII դարերում

**89. Ո՞ր թվականին Արգիշտի I-ի զորքերը հասան մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր.**

1) ք. ա. 784 թ.

2) ք. ա. 781 թ.

3) ք. ա. 782 թ.

4) ք. ա. 779 թ.

**90. Երբ է գահակալել Սարգուրի II-ը.**

1) ք. ա. 786–764 թթ.

2) ք. ա. 764–735 թթ.

3) ք. ա. մոտ 835–825 թթ.

4) ք. ա. 735–մոտ 710–ական թթ.

**91. Ո՞ր արշավանքի ժամանակ Սարգոն II-ը թալանեց Խալդիի գլխավոր տաճարը.**

1) ք. ա. 719 թ.

2) ք. ա. 714 թ.

3) ք. ա. 716 թ.

4) ք. ա. 743 թ.

**92. Երբ է գահակալել Արտաշես I-ը.**

1) ք. ա. 189–160 թթ.

2) ք. ա. 220–201 թթ.

3) ք. ա. 160–115 թթ.

4) ք. ա. 115–95 թթ.

**93. Երբ է տեղի ունեցել Ակցիումի ճակատամարտը.**

1) Ք. ա. 30 թ. սեպտեմբերի 2-ին

3) Ք. ա. 32 թ. սեպտեմբերի 2-ին

2) Ք. ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին

4) Ք. ա. 33 թ. սեպտեմբերի 2-ին

**94. Երբ է տեղի ունեցել Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտը.**

1) 61 թ.

2) 60 թ.

3) 65 թ.

4) 62 թ.

**95. Երբ է գահընկեց արվել Բակուր Արշակունին.**

1) 161 թ.

2) 185 թ.

3) 164 թ.

4) 163 թ.

**96. Երբ է Տրդատ III-ը հաստատվել հայոց գահին.**

1) 276 թ.

2) 287 թ.

3) 278 թ.

4) 297 թ.

ZANGAK

## 2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

---

1. Ո՞րն է Մերձավոր Արևելքի միակ գործող հրաբխային գագաթը.  
1) Սիփան 3) Արագած  
2) Նեմրուֆ 4) Թոնդուրեկ
2. Ո՞րն է ՀՀ-ի ամենաբարձր լեռնագագաթը.  
1) Արարատ 3) Արագած  
2) Սիփան 4) Կապուտջուղ
3. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը.  
1) Արագած 3) Արարատ  
2) Նեմրուֆ 4) Սիփան
4. Որտեղից է սկիզբ առնում Արևմտյան Տիգրիսը.  
1) Ծովք լճից 3) Ծաղկանց լեռներից  
2) Հայկական Տավրոսից 4) Ծաղկավետ լեռներից
5. Որքան է Վանա լճի բարձրությունը ծովի մակերևույթից.  
1) 1916 մ 2) 1545 մ 3) 1113 մ 4) 1720 մ
6. Որքան է Կուր գետի երկարությունը.  
1) 500 կմ 2) 1113 կմ 3) 1000 կմ 4) 1720 կմ
7. Որքան է Արաքս գետի երկարությունը.  
1) մոտ 345 կմ 3) մոտ 400 կմ  
2) մոտ 500 կմ 4) մոտ 1000 կմ
8. Որքան է Եփրատ գետի երկարությունը Հայաստանի մասում.  
1) 400 կմ 2) 345 կմ 3) 1113 կմ 4) 500 կմ
9. Ո՞ր գետն է սկիզբ առնում Սևանա լճից.  
1) Աղստև 2) Արփա 3) Հրազդան 4) Որոտան
10. Մեծ Հայքի ո՞ր նահանգն է կոչվել Չորրորդ Հայք.  
1) Բարձր Հայք 3) Ծովք  
2) Աղձնիք 4) Կորդուք
11. Քանի նահանգ ուներ Մեծ Հայքն ըստ «Աշխարհացույցի».  
1) 15 2) 5 3) 20 4) 37

**12. Որքան էր Մեծ Հայքի տարածքը.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) 80 հազ. քառ. կմ  | 3) 250 հազ. քառ. կմ |
| 2) 311 հազ. քառ. կմ | 4) 411 հազ. քառ. կմ |

**13. Որքան էր Կիլիկյան Հայաստանի տարածքը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) մոտ 50 հազ. քառ. կմ | 3) մոտ 80 հազ. քառ. կմ |
| 2) մոտ 30 հազ. քառ. կմ | 4) մոտ 70 հազ. քառ. կմ |

**14. Որտեղ է գտնվում Սիփան լեռը.**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) Սևանա լճից հյուսիս | 3) Ուրմիո լճից հյուսիս |
| 2) Վանա լճից հյուսիս  | 4) Արարատյան դաշտում   |

**15. Ինչ անունով է հայտնի Սևանա լիճը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) Բզնունյաց ծով | 3) Կապուտան ծով  |
| 2) Գեղամա ծով    | 4) Ծովակ Հյուսիս |

**16. Քանի գետակ է թափվում Սևանա լիճը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) շուրջ 20 | 3) շուրջ 30 |
| 2) շուրջ 50 | 4) շուրջ 40 |

**17. Որտեղից է սկիզբ առնում Արևմտյան Եփրատը.**

- |                         |                      |
|-------------------------|----------------------|
| 1) Խաչափայտի լեռներից   | 3) Ծաղկավետ լեռներից |
| 2) Բյուրակնյան լեռներից | 4) Ծաղկանց լեռներից  |

**18. Ո՞ր քաղաքի մոտ են միախառնվում Եփրատի արևելյան ու արևմտյան ճյուղերը.**

- |         |            |
|---------|------------|
| 1) Դվին | 3) Ակն     |
| 2) Կարս | 4) Արտաշատ |

**19. Որտեղից է սկիզբ առնում Արևելյան Տիգրիսը.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Հայկական Պարից    | 3) Ծովք լճից          |
| 2) Հայկական Տավրոսից | 4) Խաչափայտի լեռներից |

**20. Ո՞ւր է թափվում Կուրը.**

- |               |                    |
|---------------|--------------------|
| 1) Կասպից ծով | 3) Սև ծով          |
| 2) Պարսից ծոց | 4) Միջերկրական ծով |

**21. Ո՞ր գետն է իր ամբողջ երկարությամբ հոսում Հայկական լեռնաշխարհով.**

- |          |           |
|----------|-----------|
| 1) Կուր  | 3) Եփրատ  |
| 2) Արաքս | 4) Տիգրիս |

**22. Քանի գավառ ուներ Վասպուրական նահանգը.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 34 | 2) 37 | 3) 29 | 4) 20 |
|-------|-------|-------|-------|

**23. Քանի գավառ ուներ Այրարատ նահանգը.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 37 | 2) 28 | 3) 20 | 4) 17 |
|-------|-------|-------|-------|

**24. Ըստ հայոց ծագումնաբանական նոր տեսության՝ ումից է սերում Հայկ Նահապետի հայր Թորգոմը.**

- 1) Սեմից                      2) Հաբեթից                      3) Քամից                      4) Արմենիոսից

**25. Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը.**

- 1) Հայկ                      2) Արամ                      3) Հայ(ա)                      4) Հայոս

**26. Ըստ հայկական ավանդության՝ ո՞ւմ անունից են առաջացել «արմեն» և «Արմենիա» անվանումները.**

- 1) Արամի                      3) Արամանյակի  
2) Արմենոսի                      4) Արամայիսի

**27. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությունը.**

- 1) Արատտա                      3) Էթիունի  
2) Ուրարտու                      4) Միտաննի

**28. Ո՞ր գետերի ակունքների հետ է կապվում Հայա աստծո պաշտամունքը.**

- 1) Կուր և Արաքս                      3) Եփրատ և Կուր  
2) Եփրատ և Տիգրիս                      4) Ճորոխ և Տիգրիս

**29. Ո՞ր պատմական իրադարձությունն է համարվում Քուն Հայոց տոմարի սկիզբը.**

- 1) Արարատ լեռան վրա Նոյի հանգրվանելը  
2) աշխարհի արարումը  
3) Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակը  
4) քրիստոնեության ընդունումը

**30. Որտե՞ղ էր գտնվում Կոլխիդան.**

- 1) Սև ծովի արևելյան ափին                      3) Կասպից ծովի արևմտյան ափին  
2) Միջերկրական ծովի արևելյան ափին                      4) Պարսից ծոցի հյուսիսային ափին

**31. Հայկական լեռնաշխարհում Ք. ա. IX դ. 80–70–ական թթ. հիշատակվող պետական կազմավորումներից են.**

- 1) Ծուփանա և Արամ                      3) Սուբարտու և Կուտի(ում)  
2) Միտաննի և Հայասա                      4) Ուրարտու և Նաիրի

**32. Ո՞ր թագավորությունն է Ք. ա. 830–ական թվականներից աստիճանաբար իր իշխանության ներքո միավորել Հայկական լեռնաշխարհը.**

- 1) Արմանի                      3) Հայասա  
2) Միտաննի                      4) Նաիրի

**33. Որտե՞ղ էր գտնվում Արամ երկիրը.**

- 1) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում  
2) Վանա և Ուրմիո լճերի միջև  
3) Հայկական լեռնաշխարհի հյուսիս–արևմուտքում  
4) Արարատյան դաշտում

34. Ք. ա. 830–ական թվականներին Հայկական լեռնաշխարհում հայտնի համադաշնություններից որն էր ամենամեծը.

- 1) Դիաուլսի
- 2) Էթիունի
- 3) Մելիտեա
- 4) Զաբախա

35. Իշպուհինի օրոք որ երկիրը ներառվեց Վանի թագավորության մեջ.

- 1) Պարսուա
- 2) Արդինի–Մուսասիր
- 3) Դիաուլսի
- 4) Ալզի

36. Որքան էր Մենուայի ջրանցքի երկարությունը.

- 1) 82 կմ
- 2) 25 կմ
- 3) 72 կմ
- 4) 52 կմ

37. Ո՞ր արքայի առաջնորդությամբ է ստեղծվել Վանի աշխարհակալությունը.

- 1) Ռուսա III–ի
- 2) Ռուսա II–ի
- 3) Սարդուրի I–ի
- 4) Արգիշտի I–ի

38. Ո՞ր երկիրը կրկին գրավեց Արգիշտի I–ը իր թագավորության չորրորդ տարում.

- 1) Աբիլիանի
- 2) Մելիտեա
- 3) Վեդուրի–Էթիունի
- 4) Պարսուա

39. Վանի թագավորության որ արքան է արձանագրություններում իրեն կոչում «Նաիրի երկրի արքա, մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա...».

- 1) Իշպուհինի
- 2) Ռուսա III
- 3) Արամու
- 4) Սարդուրի I

40. Հարավարևմտյան ուղղությամբ արշավանքի ժամանակ Մենուայի բանակները հասան մինչև՝

- 1) Մելիտեա և Մանա
- 2) Կումենու և Ասորեստան
- 3) Դիալա գետի ավազան
- 4) Զագրոսյան լեռներից դեպի արևելք

41. Ուրարտական որ արքայի օրոք է սկսվել դաշնային աշխարհագրի փոխարինումը արհեստավարժ կանոնավոր բանակով.

- 1) Արգիշտի I–ի
- 2) Իշպուհինի
- 3) Ռուսա I–ի
- 4) Սարդուրի II–ի

42. Ո՞ր պետության դեմ է ուղղել Սարդուրի II–ն իր առաջին խոշոր արշավանքը.

- 1) Մանա
- 2) Պարսուա
- 3) Կուլխա
- 4) Մելիտեա

43. Ո՞ր երկրի դեմ է երկու արշավանք ձեռնարկել Սարդուրի II–ը Ք. ա. 740–ական թթ.

- 1) Մանա
- 2) Մելիտեա
- 3) Կուլխա
- 4) Արմե



**44. Սարգուրի II-ի տերությունը հյուսիսից հարավ ձգվում էր՝**

- 1) Սև ծովից մինչև Պարսից ծոց, ներառյալ Բաբելոնը
- 2) Կասպից ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան
- 3) Կասպից ծովից մինչև Պարսից ծոց, ներառյալ Բաբելոնը
- 4) Սև ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան

**45. Ք. ա. 735 թ. Ասորեստանի դր արքան արշավեց դեպի Տուշպա.**

- 1) Սալմանասար III
- 2) Թիգլաթպալասար III
- 3) Սինաքերիբ
- 4) Սարգոն II

**46. Ինչ բարեփոխումներ է կատարել Ռուսա I-ը.**

- 1) պետական համակարգի և կրոնական
- 2) կրոնական և բանակի
- 3) պետական համակարգի և բանակի
- 4) դրամական և բանակի

**47. Ո՞վ էր Վանի թագավորության հստակ թվագրվող վերջին արքան.**

- 1) Էրիմենա
- 2) Ռուսա II
- 3) Ռուսա III
- 4) Սարգուրի III

**48. Ովքեր էին հյուսիսից Ք. ա. 715–714 թթ. արշավել Վանի թագավորության դեմ.**

- 1) կոլխերը
- 2) կիմերները
- 3) սկյութները
- 4) մարերը

**49. Ք. ա. VII դ. առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի դր մասում է ձևավորվել Հայկազունների նոր իշխանությունը.**

- 1) հարավարևելյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևմտյան

**50. Ո՞վ էր Արգիշտի II-ի որդին.**

- 1) Սարգուրի III-ը
- 2) Ռուսա III-ը
- 3) Ռուսա II-ը
- 4) Էրիմենան

**51. Ո՞ւմ որդին էր Ռուսա III-ը.**

- 1) Իշպուլինիի
- 2) Ռուսա II-ի
- 3) Սարգուրի II-ի
- 4) Էրիմենայի

**52. Արգիշտի I-ը գահակալման իրերորդ տարում է արշավանք ձեռնարկել Փոքր Ասիայի տարածք.**

- 1) չորրորդ
- 2) հինգերորդ
- 3) վեցերորդ
- 4) յոթերորդ

53. Ո՞ր թագավորն ավարտեց կախյալ թագավորությունների միավորումը միասնական պետության մեջ.

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Սարգսի II | 3) Ռուսա II  |
| 2) Ռուսա I   | 4) Ռուսա III |

54. Ո՞վ էր Վանի թագավորությունում զինված ուժերի գերագույն հրամանատարը.

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) սպարապետը | 3) կուսակալը        |
| 2) թագավորը  | 4) առաջին սպարապետը |

55. Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատը սպասարկող անձնակազմը քանի մարդուց էր բաղկացած.

- |         |         |         |         |
|---------|---------|---------|---------|
| 1) 3907 | 2) 5507 | 3) 5160 | 4) 6507 |
|---------|---------|---------|---------|

56. Ո՞ր թագավորի օրոք Վանի բանակում առանձնացվեց «արքայական գունդը».

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Արգիշտի I-ի | 3) Ռուսա I-ի  |
| 2) Սարգսի II-ի | 4) Ռուսա II-ի |

57. Ի՞նչ դարակազմիկ փոփոխություն տեղի ունեցավ հայոց պետականության պատմության մեջ Վանի թագավորության ժամանակաշրջանում.

- 1) դաշնային կառավարման համակարգից անցում կենտրոնացված պետության
- 2) համադաշնային կառավարման համակարգից անցում կենտրոնացված պետության
- 3) դաշնային կառավարման համակարգից անցում գերկենտրոնացված պետության
- 4) համադաշնային կառավարման համակարգից անցում ժողովրդավարության

58. Քանի զինվորից էր բաղկացած ուրարտական բանակի յուրաքանչյուր գունդ.

- |         |         |
|---------|---------|
| 1) 1000 | 3) 2000 |
| 2) 3000 | 4) 5000 |

59. Որքան էր Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվն ըստ «Սարգսիյան տարեգրության».

- |              |              |
|--------------|--------------|
| 1) 150 հազար | 3) 450 հազար |
| 2) 250 հազար | 4) 350 հազար |

60. Սեպագիր աղբյուրներում հիշատակվող ճոր պետական կազմավորմանն է համապատասխանում Հայկազունների իշխանությունը.

- |                 |                    |
|-----------------|--------------------|
| 1) Ուրմե        | 3) Արդինի-Մուսասիր |
| 2) Արմե-Շուբրիա | 4) Ալզի            |

61. Ի՞նչ տարածք միավորեց Պարույրն իր իշխանության ներքո.

- 1) Վանա լճից մինչև Արաքս ընկած ողջ տարածքը
- 2) Ուրմիա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը
- 3) Ուրմիա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը
- 4) Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը

**62. Որքան էր հայոց բանակի թիվը Երվանդ Սակավակյացի օրոք.**

- 1) 48 հազար
- 2) 50 հազար
- 3) 40 հազար
- 4) 68 հազար

**63. Ո՞վ է հաջորդել Կյուրոս II Մեծին.**

- 1) Կամբիզը
- 2) Դարեհ III-ը
- 3) Դարեհ I-ը
- 4) Արտաքսերքսես II-ը

**64. Ի՞նչ էր անվանվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում.**

- 1) Արատտա
- 2) Ուրարտու
- 3) Արմինա
- 4) Հարմինույա

**65. Ի՞նչ էր անվանվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում.**

- 1) Հարմինույա
- 2) Արմինա
- 3) Ուրարտու
- 4) Արատտա

**66. Նշված երկրներից որի վրա չէր տարածվում Տիգրան Երվանդյանի իշխանությունը.**

- 1) Կապադովկիայի
- 2) Աղվանքի
- 3) Բաբելոնի
- 4) Վրաստանի

**67. Ո՞վ էր ղեկավարում Բաբելոնում Դարեհ I-ի դեմ բռնկված ապստամբությունը.**

- 1) Արախան
- 2) Դադարշիշը
- 3) Խալդիտան
- 4) Վահումիսան

**68. Ո՞վ էր Հայաստանի սատրապը Ք. ա. 401 թ.**

- 1) Երվանդ I-ը
- 2) Երվանդ II-ը
- 3) Տիրիբազը
- 4) Երվանդ III-ը

**69. Պարույր Նահապետը ո՞ր երկրների հետ դաշինք կնքեց.**

- 1) Ասորեստանի և Մարաստանի
- 2) Մարաստանի և Բաբելոնի
- 3) Մարաստանի և Աքեմենյան տերության
- 4) Բաբելոնի և Ասորեստանի

**70. Ո՞ւմ կինն էր Տիգրան I Երվանդյանի քույրը.**

- 1) Կյուրոս Մեծի
- 2) Կիաքսարի
- 3) Աժդահակի
- 4) Դարեհ I-ի

**71. Ո՞վ էր գլխավորում պարսկական այն զորաբանակը, որը Ք. ա. 522–521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ պարտություն կրեց հայերից Հյուսիսային Միջագետքում.**

- 1) Դադարշիշը
- 2) Վահումիսան
- 3) Կամբիզը
- 4) Միթրաուստեսը

**72. Պարսից իր արքայի դեմ էր ապստամբել Կյուրոս Կրտսերը.**

- |                 |                      |
|-----------------|----------------------|
| 1) Կյուրոս II-ի | 3) Արտաքսերքսես II-ի |
| 2) Դարեհ I-ի    | 4) Դարեհ III-ի       |

**73. Ո՞վ էր Կյուրոս Կրտսերի կողմից վարձված հունական զորքի հրամանատարը.**

- |               |              |
|---------------|--------------|
| 1) Ստրաբոնը   | 3) Քսենոփոնը |
| 2) Հերոդոտոսը | 4) Օրոնտեսը  |

**74. Ո՞վ էր Աքեմենյան վերջին տիրակալը.**

- |                         |               |
|-------------------------|---------------|
| 1) Դարեհ III Կողոմանոսը | 3) Դարեհ II-ը |
| 2) Արտաքսերքսես II-ը    | 4) Քսերքսեսը  |

**75. Ո՞վ է եղել Կյուրոս Մեծի տերության արևմտյան կեսի փոխարքան.**

- |                      |                |
|----------------------|----------------|
| 1) Տիրիբազը          | 3) Տիմարքոսը   |
| 2) Տիգրան Երվանդյանը | 4) Երվանդ II-ը |

**76. Ո՞վ է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները.**

- |              |                |
|--------------|----------------|
| 1) Երվանդ I  | 3) Արշամ       |
| 2) Երվանդ II | 4) Շամ (Սամոս) |

**77. Ովքեր էին առաջնորդում արեմենյան զորքի աջ թևը Գավգամելայի ճակատամարտում.**

- |                                |                               |
|--------------------------------|-------------------------------|
| 1) Արտաշեսը և Զարեհը           | 3) Երվանդ II-ը և Միթրաուստեսը |
| 2) Երվանդ III-ը և Միթրաուստեսը | 4) Երվանդ IV-ը և Զարեհը       |

**78. Որտեղ էր կառուցվել Սամոսատ քաղաքը.**

- |                   |                 |
|-------------------|-----------------|
| 1) Ծովքում        | 3) Փոքր Հայքում |
| 2) Կապադովկիայում | 4) Կոմմագենեում |

**79. Ալեքսանդր Մակեդոնացին Մեծ Հայքի իր նահանգն ուղարկեց իր զորաբանակներից մեկը.**

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Աղձնիք      | 3) Սյունիք    |
| 2) Տուրուբերան | 4) Բարձր Հայք |

**80. Անտիոքոս III-ի զորքերը իր զորավարների գլխավորությամբ արշավեցին Հայաստանի դեմ.**

- |                           |                        |
|---------------------------|------------------------|
| 1) Երվանդի և Միթրաուստեսի | 3) Արտաշեսի ու Երվանդի |
| 2) Արտաշեսի ու Զարեհի     | 4) Շամի և Արշամի       |

**81. Ո՞րն էր Երվանդունյաց Հայաստանի հոգևոր կենտրոնը.**

- |                |              |
|----------------|--------------|
| 1) Երվանդաշատը | 3) Արտաշատը  |
| 2) Բագարանը    | 4) Բագրևանդը |

**82. Ո՞րն էր Հայկազուն–Երվանդականների բանակի գլխավոր հարվածային ուժը.**

- 1) աշխարհագործ
- 2) հետևակը
- 3) մարտակառքերը
- 4) հեծելազորը

**83. Ովքեր էին առաջնորդում աշխարհագորային զորամասերը Երվանդունիների բանակում.**

- 1) սպարապետները
- 2) բղեջիները
- 3) գավառակալ իշխանները
- 4) մաղխազները

**84. Ո՞ր գետերի ջրկիցում է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.**

- 1) Երասխ և Ախուրյան
- 2) Երասխ և Հրազդան
- 3) Երասխ և Մեծամոր
- 4) Երասխ և Արփա

**85. Ո՞ր պատմիչն է հավաստում, թե Արտաշատի տեղանքն ընտրել է հռչակավոր զորավար Հաննիբալը.**

- 1) Պոլիբիոս
- 2) Պլուտարքոս
- 3) Ստրաբոն
- 4) Խորենացի

**86. Ի՞նչ լեզվով են գրված արտաշեսյան սահմանաքարերի արձանագրությունները.**

- 1) լատիներեն
- 2) հայերեն
- 3) արամեերեն
- 4) պարսկերեն

**87. Ո՞վ էր Ծոփքում նշանակված հայազգի սելևկյան կառավարիչը.**

- 1) Արտաշեսը
- 2) Զարեհը
- 3) Երվանդը
- 4) Տիգրանը

**88. Թագավոր հռչակվելուց հետո ի՞ր դինաստիայի շառավիղ է իրեն ներկայացրել Արտաշես I-ը.**

- 1) Բագրատունի
- 2) Երվանդական
- 3) Արտաշեսյան
- 4) Արշակունի

**89. Արևմուտքում Արտաշես I-ը ի՞ր երկրամասերն է միացրել Մեծ Հայքին.**

- 1) Փայտակարանը և Կասպեից երկիրը
- 2) Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները
- 3) Գուգարքը
- 4) Տմորիքը

**90. Հյուսիսում Արտաշես I-ը ի՞ր երկրամասն է միացրել Մեծ Հայքին.**

- 1) Փայտակարանը և Կասպեից երկիրը
- 2) Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները
- 3) Գուգարքը
- 4) Տմորիքը

**91. Ո՞ր գետը սահմանային ճանաչվեց Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում.**

- 1) Արաքս                      2) Եփրատ                      3) Տիգրիս                      4) Կուր

**92. Որքան էր Տիգրան Մեծի տերության մեջ ընդգրկված բուն հայկական տարածքը.**

- 1) շուրջ 400 հազ. քառ. կմ                      3) շուրջ 1 մլն քառ. կմ  
2) շուրջ 2 մլն քառ. կմ                      4) շուրջ 360 հազ. քառ. կմ

**93. Որքան էր Տիգրան Մեծի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրների տարածքը.**

- 1) շուրջ 1 մլն քառ. կմ                      3) շուրջ 2 մլն քառ. կմ  
2) շուրջ 400 հազ. քառ. կմ                      4) շուրջ 360 հազ. քառ. կմ

**94. Ո՞րն էր Տիգրան Մեծի եղբայր Գուրասի նստավայրը.**

- 1) Մծբին                      2) Տարսուն                      3) Անտիոք                      4) Ադանա

**95. Ո՞ւմ էր Ասորիքում փոխարքա նշանակել Տիգրան Մեծը.**

- 1) Մեհրուժանին                      2) Միհրդատին                      3) Բագարատին                      4) Գուրասին

**96. Մեծ Հայքի ո՞ր նահանգում Տիգրան II-ը կառուցեց նոր մայրաքաղաք.**

- 1) Ծովք                      3) Կորդուք  
2) Աղձնիք                      4) Տուրուբերան

**97. Արտավազդ I-ի օրոք Հայաստանը ո՞ր պարթև արքայի հարձակումներին էր ենթարկվում.**

- 1) Գողերձ II-ի                      3) Միհրդատ I-ի  
2) Միհրդատ II-ի                      4) Օրոդեսի

**98. Ո՞վ էր Տիգրան II-ի հետ ռազմական ընդհարման ժամանակ սպանված Ծովքի թագավորը.**

- 1) Չարեիը                      3) Միհրդատը  
2) Արտանեսը                      4) Արշամը

**99. Որտե՞ղ է կնքվել հայ-պոնտական պայմանագիրը.**

- 1) Պոնտոսում                      3) Արտաշատում  
2) Տիգրանակերտում                      4) Կապադովկիայում

**100. Հայոց տերության տարածքը որքան էր կազմում Տիգրան Մեծի օրոք.**

- 1) շուրջ 2 մլն քառ. կմ                      3) 700 հազար քառ. կմ  
2) շուրջ 3 մլն քառ. կմ                      4) 600 հազար քառ. կմ

**101. Քանի՞ կարգի տարածքներ կային Տիգրան II-ի տերությունում.**

- 1) 2                      2) 3                      3) 4                      4) 5

**102. Ո՞րն էր Տիգրան II-ի տերության ամենազարգացած շրջանը.**

- |              |                          |
|--------------|--------------------------|
| 1) Մեծ Հայքը | 3) Ասորիքը               |
| 2) Կիլիկիան  | 4) Հյուսիսային Միջագետքը |

**103. Տիգրան II-ը որքան մարդ տեղափոխեց Կապադովկիայից Հայաստան.**

- |              |                   |
|--------------|-------------------|
| 1) 100 հազար | 3) 300 հազար      |
| 2) 120 հազար | 4) մոտ կես միլիոն |

**104. Տիգրան II-ը որքան մարդ էր Կիլիկիայից տեղափոխել Հայաստան.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) 50 հազար | 3) 100 հազար |
| 2) 70 հազար | 4) 120 հազար |

**105. Ո՞վ էր գլխավորում Տիգրանակերտի պաշտպանությունը Ք. ա. 69 թ.**

- |              |               |
|--------------|---------------|
| 1) Մանկայոսը | 3) Մեիրուծանը |
| 2) Բագարատը  | 4) Գուրասը    |

**106. Որքան էր հայկական զինուժի թվաքանակը Տիգրանակերտի ճակատամարտում.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) մոտ 60–70 հազար | 3) մոտ 70–80 հազար |
| 2) մոտ 50–60 հազար | 4) մոտ 80–90 հազար |

**107. Տիգրան Մեծին նվիրված քանի օպերա է գրվել ռուսերեն և եվրոպական լեզուներով.**

- |            |                 |
|------------|-----------------|
| 1) շուրջ 5 | 3) ավելի քան 20 |
| 2) մոտ 10  | 4) ավելի քան 30 |

**108. Հռոմը չէր կարող հաշտվել այն իրողության հետ, որ Հայկական տերությունը դուրս էր եկել ..... ու մոտեցել էր ..... սահմաններին.**

- |                           |                               |
|---------------------------|-------------------------------|
| 1) Սև ծով, Վրաստանի       | 3) Միջերկրական ծով, Կիլիկիայի |
| 2) Կասպից ծով, Պարթևստանի | 4) Միջերկրական ծով, Եգիպտոսի  |

**109. Ովքեր էին հայ-հռոմեական պատերազմի ժամանակ Հայաստան ուղարկված երկու հռոմեացի զորավարները.**

- |                                 |                                      |
|---------------------------------|--------------------------------------|
| 1) Մարկոս Կրասոս, Գնեոս Պոմպեոս | 3) Օկտավիանոս, Մարկոս Անտոնիոս       |
| 2) Կորբոլոն, Կեսար              | 4) Լուկիոս Լուկուլլոս, Գնեոս Պոմպեոս |

**110. Ո՞ր զորավարի հրամանատարությամբ Տիգրանակերտի կայազորը հետ մղեց հռոմեացիների գրոհները.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Ադդոնի     | 3) Մանկայոսի  |
| 2) Մեիրուծանի | 4) Տերենտիոսի |

**111. Որքան էր Լուկուլլոսի դեմ ուղարկված Մեիրուծանի զորաջոկատի թվակազմը.**

- |         |         |         |         |
|---------|---------|---------|---------|
| 1) 2000 | 2) 3000 | 3) 6000 | 4) 8000 |
|---------|---------|---------|---------|

**112. Որքան էր բուն հռոմեական բանակի թիվը Տիգրանակերտի ճակատամարտի նախօրյակին.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 50 հազար | 3) 35 հազար |
| 2) 22 հազար | 4) 60 հազար |

**113. Որքան էր Միհրդատ VI-ին՝ Տիգրան Մեծի տրամադրած հայկական զորքի թիվը, որը պետք է Պոնտոսում մարտնչեր հռոմեացիների դեմ.**

- |            |             |
|------------|-------------|
| 1) 3 հազար | 3) 8 հազար  |
| 2) 6 հազար | 4) 10 հազար |

**114. Որտեղ ձմեռեցին հռոմեական լեգեոնները Տիգրանակերտի ճակատամարտից հետո.**

- |              |                  |
|--------------|------------------|
| 1) Աղձնիքում | 3) Կորդուքում    |
| 2) Ծովքում   | 4) Բարձր Հայքում |

**115. Ո՞ր քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերը հաղթանակ տարան հռոմեացիների նկատմամբ.**

- |            |           |
|------------|-----------|
| 1) Փրասսպա | 3) Զելա   |
| 2) Մաժակ   | 4) Անտիոք |

**116. Ո՞ր պատմիչն է նկարագրում Տիգրան II-ի ու Պոմպեոսի հանդիպումը Արտաշատի մոտ.**

- |                    |               |
|--------------------|---------------|
| 1) Տակիտոս         | 3) Պլուտարքոս |
| 2) Մովսես Խորենացի | 4) Բուզանդ    |

**117. Ո՞ւր ուղարկեց Պոմպեոսը գերեվարված Տիգրան Կրտսերին.**

- |           |         |
|-----------|---------|
| 1) Պոնտոս | 3) Հռոմ |
| 2) Կիպրոս | 4) Ղրիմ |

**118. Որտեղ է կնքվել Արտավազդ II-ի և Օրոդես II-ի միջև հայ-պարթևական պայմանագիրը.**

- |                |                   |
|----------------|-------------------|
| 1) Փրասսպայում | 3) Արտաշատում     |
| 2) Էկբատանում  | 4) Տիգրանակերտում |

**119. Ո՞րն էր Ատրպատականի մայրաքաղաքը.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Տիգրոն  | 3) Էկբատան    |
| 2) Փրասսպա | 4) Պերսեպոլիս |

**120. Որքան էր հռոմեական բանակի կորուստը (սպանված և գերի) Խառանի ճակատամարտում.**

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) մոտ 40 հազար | 3) մոտ 30 հազար |
| 2) մոտ 50 հազար | 4) մոտ 10 հազար |



**121. Որքան էր Անտոնիոսի տրամադրության տակ եղած բանակի թիվը Պարթևական արշավանքի սկզբին.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) 80 հազար | 3) 100 հազար |
| 2) 50 հազար | 4) 120 հազար |

**122. Որքան զինվոր կորցրեց Անտոնիոսը Փրասպայի պարիսպների տակ.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 10 հազար | 3) 20 հազար |
| 2) 30 հազար | 4) 40 հազար |

**123. Ո՞ւմ միջև է մղվել Ակցիոմի ճակատամարտը.**

- |                            |                           |
|----------------------------|---------------------------|
| 1) Կրասոսի և Անտոնիոսի     | 3) Պոմպեոսի և Օկտավիանոսի |
| 2) Անտոնիոսի և Օկտավիանոսի | 4) Անտոնիոսի և Կեսարի     |

**124. Առաջին եռապետության անդամներից ո՞վ ստացավ Արևելքը և Պարթևստանի դեմ արշավելու հրամանատարությունը.**

- |                  |                    |
|------------------|--------------------|
| 1) Գնեոս Պոմպեոս | 3) Հուլիոս Կեսար   |
| 2) Մարկոս Կրասոս | 4) Մարկոս Անտոնիոս |

**125. Ինչքան զինվոր խոստացավ Կրասոսին տրամադրել Արտավազդ II-ը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 50 հազար | 3) 40 հազար |
| 2) 16 հազար | 4) 24 հազար |

**126. Որքան էր հռոմեական բանակի կորուստը Խառանի ճակատամարտում.**

- 1) մոտ 30 հազար սպանված, 20 հազար գերի
- 2) մոտ 20 հազար սպանված, 10 հազար գերի
- 3) 40 հազար սպանված, 12 հազար գերի
- 4) 24 հազար սպանված, 16 հազար գերի

**127. Ի՞նչ պատվանունով է հայտնի Արտավազդ II-ը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Աշխարհակալ | 3) Աստվածային |
| 2) Բարեպաշտ   | 4) Մեծ        |

**128. Ո՞ր երկրի թագավորին պարտության մատնեց Արտաշես II-ը և այդ երկիրը միացրեց Հայոց թագավորությանը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Կապադովկիա | 3) Կոմմագենե  |
| 2) Պոնտոս     | 4) Ատրպատական |

**129. Ո՞ր քոչվոր ցեղերի դեմ տեղի ունեցող ճակատամարտում է զոհվել Տիգրան IV-ը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) սկյութների | 3) սարմատների |
| 2) կիմերների  | 4) ալանների   |

**130. Ի՞նչ տիտղոս էր դրոշմված Արտաշես II-ի դրամների վրա.**

- |                   |                      |
|-------------------|----------------------|
| 1) «Մեծ թագավոր»  | 3) «Հայոց թագավոր»   |
| 2) «Արքայից արքա» | 4) «Արևելքի թագավոր» |

**131. Որտեղ դավադրաբար սպանվեց Արտաշես II-ը.**

- |                   |               |
|-------------------|---------------|
| 1) Տիգրանակերտում | 3) Հռոմում    |
| 2) Անտիոքում      | 4) Արտաշատում |

**132. Քանի տարի էր Արտավազդ III-ը ապրել Հռոմում.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 15 | 2) 20 | 3) 25 | 4) 30 |
|-------|-------|-------|-------|

**133. Ինչ դինաստիական անուններ էին տրվում Հռոմի կողմից Հայաստանում գահ բարձրացված՝ Արտաշեսյան արքայատոհմի հետ հեռավոր արյունակցական կապ ունեցող անձանց.**

- |                            |                             |
|----------------------------|-----------------------------|
| 1) «Արտավազդ» կամ «Տիգրան» | 3) «Արտաշես» կամ «Արտավազդ» |
| 2) «Արտաշես» կամ «Զարեհ»   | 4) «Արտաշես» կամ «Տիգրան»   |

**134. Զենոն–Արտաշեսը միակն է առաջին դարի սկզբներին Հայաստանում գահակալած թագավորներից, որ՝**

- 1) գահընկեց եղավ հայերի կողմից, սակայն մահացավ իր բնական մահով
- 2) գահընկեց եղավ Հռոմի կողմից, սակայն մահացավ իր բնական մահով
- 3) գահընկեց չեղավ հայերի կողմից և մահացավ իր բնական մահով
- 4) գահընկեց չեղավ հայերի կողմից, սակայն Հռոմի կազմակերպած դավադրության զոհ դարձավ

**135. Ո՞ր երկրի թագավորական տան ներկայացուցիչ էր Զենոնը.**

- |              |               |
|--------------|---------------|
| 1) Պարթևստան | 3) Պոնտոս     |
| 2) Վրաստան   | 4) Ատրպատական |

**136. 2 թ. հակահռոմեական հուժկու ապստամբության ընթացքում իր ամրոցն էր հերոսաբար պայքարում հռոմեացիների դեմ.**

- |            |             |
|------------|-------------|
| 1) Լեգարդա | 3) Անի      |
| 2) Դարոյնք | 4) Արտագերս |

**137. Ո՞ր ամրոցում փակված հայկական ուժերն են դիմադրություն ցույց տվել հռոմեացիներին Կորբուլոնի արշավանքի ժամանակ.**

- |           |             |
|-----------|-------------|
| 1) Գառնի  | 3) Արտագերս |
| 2) Ողական | 4) Լեգարդա  |

**138. Որտեղ է կնքվել Կորբուլոնի և Տրդատի միջև խաղաղության պայմանագիրը.**

- |                   |                |
|-------------------|----------------|
| 1) Տիգրանակերտում | 3) Հռանդեայում |
| 2) Արտաշատում     | 4) Հռոմում     |

**139. Ո՞րն էր Սանատրուկ II-ի աթոռանիստը.**

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Դվին        | 3) Վաղարշապատ |
| 2) Տիգրանակերտ | 4) Մծուրք     |

**140. Մեծ Հայքի զորքի նահանգի գավառներից էր Դարանաղին.**

- |               |           |
|---------------|-----------|
| 1) Գուգարք    | 3) Տայք   |
| 2) Բարձր Հայք | 4) Աղձնիք |

**141. Ո՞ր արքայից է Արշակունիների թագավորական իշխանությունը Մեծ Հայքում դարձել ժառանգական.**

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Խոսրով II | 3) Վաղարշ I  |
| 2) Տրդատ II  | 4) Վաղարշ II |

**142. Ո՞ր կայսեր ուղարկած զորքն են հայերը Տրդատ II-ի գլխավորությամբ ջախջախել և վտարել Հայաստանից.**

- |                     |             |
|---------------------|-------------|
| 1) Սեպտիմիոս Սևերոս | 3) Կարակալա |
| 2) Մակրինոս         | 4) Ներոն    |

**143. Ո՞վ էր Սասանյան արքայատոհմի հիմնադիրը Պարսկաստանում.**

- |               |                    |
|---------------|--------------------|
| 1) Վաղարշ I-ը | 3) Շապուհ I-ը      |
| 2) Արտաշիրը   | 4) Որմիզդ-Արտաշիրը |

**144. Ո՞րն էր Սասանյան Պարսկաստանի պետական կրոնը.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) հեթանոսություն    | 3) քրիստոնեություն    |
| 2) մահմեդականություն | 4) զրադաշտականություն |

**145. Դայակները զորքապետ էին տարել Պարթև Անակի որդուն՝ Գրիգորին.**

- |           |                  |
|-----------|------------------|
| 1) Եդեսիա | 3) Մաժակ-Կեսարիա |
| 2) Մծբին  | 4) Բաբելոն       |

**146. Գտնել բաց թողնված թիվը.**

Հայաստանում ստեղծված իրավիճակը նկարագրելով՝ Մովսես Խորենացին նշում էր, որ «մեր երկիրը կառավարվեց պարսիկ գործակալների միջոցով ... տարի»:

- |       |       |
|-------|-------|
| 1) 40 | 3) 26 |
| 2) 30 | 4) 16 |

**147. Ո՞վ էր հայոց հնագույն աստվածը.**

- |          |          |          |            |
|----------|----------|----------|------------|
| 1) Տորքը | 2) Արամը | 3) Հայկը | 4) Թորգոմը |
|----------|----------|----------|------------|

**148. Հայոց հնագույն աստվածներից ո՞ւմ անունը տոտեմական ծագում ունի.**

- |         |          |          |           |
|---------|----------|----------|-----------|
| 1) Տիրի | 2) Արայի | 3) Հայկի | 4) Անգեղի |
|---------|----------|----------|-----------|

**149. Ի՞նչ պաշտամունք էր մարմնավորում հայոց հնագույն դիցարանի Արա աստվածը.**

- 1) սրբազան կենդանիների և անասնապահության
- 2) երկրագործության, մեռնող և հարություն առնող բնության
- 3) արհեստագործության և արվեստների
- 4) ընտանեկան օջախի և ռազմի

**150. Ո՞ւմ աշխատություններում են առկա «Հայկի ու Բելի» մասին զրույցի արձագանքները.**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Անանիա Շիրակացու | 3) Տակիտոսի             |
| 2) Եզնիկ Կողբացու   | 4) Մովսես Կաղանկատվացու |

**151. Հույն հեղինակներից ո՞ւմ աշխատության մեջ է արտացոլվել «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը.**

- |               |              |
|---------------|--------------|
| 1) Արիստոտելի | 3) Սոկրատեսի |
| 2) Պլատոնի    | 4) Պորփյուրի |

**152. Ո՞ր համաստեղությունն է կոչվել Հայկի անունով.**

- |              |               |
|--------------|---------------|
| 1) Մեծ Արջի  | 3) Օրիոնի     |
| 2) Փոքր Արջի | 4) Աղեղնավորի |

*Ո՞ր վայրերից են սկզբնավորվում Հայկական լեռնաշխարհի նշանավոր գեղերը.*

1. Ճորոխ
2. Արևելյան Եփրատ
3. Արևելյան Տիգրիս
4. Արևմտյան Եփրատ
5. Արևմտյան Տիգրիս
6. Արաքս

- ա. Բյուրակնյան լեռներից
- բ. Ծովք լճից
- գ. Ծաղկավետ լեռներից
- դ. Հայկական Տավրոսից
- ե. Խաչափայտի լեռներից
- զ. Ծաղկանց լեռներից

- 1) 1-ե, 2-գ, 3-դ, 4-գ, 5-բ, 6-ա
- 2) 1-ե, 2-գ, 3-դ, 4-գ, 5-բ, 6-ա

- 3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-գ, 5-դ, 6-ե
- 4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-գ, 5-դ, 6-ա

**14. Երկիրը համապատասխանեցնել թագավորի անվանը.**

1. Տիգրան II
2. Միհրդատ VI Եվպատոր
3. Արտանես
4. Միհրդատ II
5. Պողոմես XI
6. Անտիոքոս IV

- ա. Եգիպտոս
- բ. Սելևկյան պետություն
- գ. Կապադովկիա
- դ. Մեծ Հայք
- ե. Պոնտոս
- զ. Ծովք
- է. Պարթևստան

- 1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-է, 5-ա, 6-բ
- 2) 1-է, 2-ե, 3-գ, 4-դ, 5-բ, 6-ա

- 3) 1-բ, 2-է, 3-գ, 4-ե, 5-ա, 6-դ
- 4) 1-դ, 2-ե, 3-գ, 4-է, 5-ա, 6-բ

**15. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

1. Արտավազդ III
2. Տիգրան I
3. Արտավազդ I
4. Արտաշես I
5. Տիգրան IV և Էրատո

- ա. Ք. ա. 160-115 թթ.
- բ. Ք. ա. 189-160 թթ.
- գ. Ք. ա. 2-Ք. հ. 1 թթ.
- դ. Ք. ա. 95-55 թթ.
- ե. Ք. ա. 5-2 թթ.
- զ. Ք. ա. 115-95 թթ.

- 1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-գ
- 2) 1-գ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-ե

- 3) 1-գ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-ե
- 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ, 5-գ

**16. Հայոց աստվածների անունները համապատասխանեցնել հունական աստվածների անուններին՝ հելլենիստական դարաշրջանում ընդունված համադրությամբ.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1. Ափրոդիտե | ա. Արեգ-Միհր |
| 2. Արտեմիս  | բ. Արամազդ   |
| 3. Հերակլես | գ. Աստղիկ    |
| 4. Հելիոս   | դ. Անահիտ    |
| 5. Զևս      | ե. Նանե      |
| 6. Ապոլոն   | զ. Վահագն    |
|             | է. Տիր       |

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-է, 6-բ | 3) 1-գ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-բ, 6-է |
| 2) 1-գ, 2-դ, 3-է, 4-ա, 5-բ, 6-զ | 4) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ, 6-է |

**17. Կատարել պատմական իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.**

- ա) Հռոդամիզդի կողմից իր հորեղբոր սպանությունը և հայոց գահին բազմելը
- բ) Վաղարշ I Արշակունու գահակալումը Պարթևստանում
- գ) Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայք
- դ) Հռանդեսայի պայմանագրի կնքումը
- ե) Տրդատ I-ի գահակալումը
- զ) Սասանյանների հաստատումը պարսից գահին
- է) Խոսրով II-ի որդի Տրդատի մենամարտը գոթական իշխանի հետ
- ը) Ոսխայի ճակատամարտը
- թ) Մծբինի պայմանագրի կնքումը

- |              |                |
|--------------|----------------|
| 1) 51 թ.     | 6) 51-80 թթ.   |
| 2) 298 թ.    | 7) 297 թ.      |
| 3) 276 թ.    | 8) 64 թ.       |
| 4) 66-88 թթ. | 9) 58 թ.       |
| 5) 226 թ.    | 10) 88-110 թթ. |

- 1) ա-8, բ-10, գ-1, դ-9, ե-4, զ-7, է-5, ը-2, թ-3
- 2) ա-1, բ-6, գ-9, դ-8, ե-10, զ-2, է-3, ը-5, թ-7
- 3) ա-9, բ-4, գ-1, դ-8, ե-10, զ-3, է-7, ը-5, թ-2
- 4) ա-1, բ-6, գ-9, դ-8, ե-4, զ-5, է-3, ը-7, թ-2

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ, ՊԵՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

---

### 1. ՀՀ-ի կազմում գավառներ են ընդգրկված Մեծ Հայքի հետևյալ նահանգներից.

- 1) Այրարատ, Գուգարք, Սյունիք, Արցախ
- 2) Գուգարք, Սյունիք, Այրարատ, Ուտիք
- 3) Ուտիք, Այրարատ, Սյունիք, Տայք
- 4) Սյունիք, Գուգարք, Տայք, Այրարատ

### 2. Ո՞ր շարքի բոլոր մայրաքաղաքներն են գտնվել Այրարատ նահանգում.

- 1) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Վան, Բագարան
- 2) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Տիգրանակերտ, Անի, Դվին, Երևան
- 3) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Վան, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան
- 4) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Երազգավորս, Անի, Դվին, Երևան

### 3. Հայկական լեռնաշխարհը արևելքից սահմանակից է՝

- 1) Կասպից ծովին, Իրանական բարձրավանդակին և Ուրմիո լճին
- 2) Փոքրասիական սարահարթին, Կասպից ծովին և Ուրմիո լճին
- 3) Իրանական բարձրավանդակին, Փոքրասիական սարահարթին, Կասպից ծովին
- 4) Փոքրասիական սարահարթին, Իրանական բարձրավանդակին և Պարսից ծոցին

### 4. Տրված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

- ա) Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակնյան (Սրմանց) լեռներից և խառնվելով Կուր գետին՝ թափվում է Կասպից ծով:
- բ) Ճորոխն ունի 345 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծովք լճից և միախառնվելով Տիգրիսին՝ թափվում է Պարսից ծոց:
- գ) Եփրատ գետն ունի երկու ճյուղ՝ Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ (Արա-ձանի), որոնք միախառնվում են Ակն քաղաքի մոտ:
- դ) Տիգրիսը, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասում է, Հայաստանով անցնում է 400 կմ և նույնպես ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան:
- ե) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1916 մ և ունի 4 կղզի:

- 1) բ, ե
- 2) բ, դ

- 3) ա, գ
- 4) ա, ե

**5. Ընտրել այն շարքը, որը կազմված է բացառապես Վանա լճի կղզիներից.**

- 1) Լիմ, Կտուց, Արճակ, Նազիկ
- 2) Լիմ, Կտուց, Արտեր, Աղթամար
- 3) Արտեր, Աղթամար, Բերկրի, Նազիկ
- 4) Բերկրի, Նազիկ, Աղթամար, Կտուց

**6. Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

- ա. Քանի որ 1980–ական թթ. հաստատվեց, որ Հայկական լեռնաշխարհը կազմել է հնդեվրոպական նախահայրենիքի մի մասը, ուստի ինքնըստինքյան վերացավ նաև հայերի եկվոր լինելու վարկածի արժանահավատությունը:
- բ. Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ամբողջությամբ ընդգրկում է միայն Մեծ Հայքի Այրարատ աշխարհը, իսկ ԼՂՀ–ն՝ Արցախ աշխարհը:
- գ. Իմաստության և տիեզերական ջրերի Հայ(ա) աստծո պաշտամունքը կապվում էր Հայկական լեռնաշխարհի Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների հետ:
- դ. Հայկական լեռնաշխարհում առաջին խոշոր երկրաշարժի մասին տվյալները վերաբերում են Ք. ա. 341 թ., ըստ որոնց՝ այդ երկրաշարժի պատճառը Թոնդուրեկ և Նեմրուֆ հրաբուխների ժայթքումն էր:
- ե. Ըստ վրացական ավանդության, որը գրի է առնվել XI–XIII դդ., Թարգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, իսկ մնացած վեց որդիներից՝ կովկասյան վեց ժողովուրդները:
- զ. Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի տապանը հանգրվանել է «Արարատ լեռների վրա», և բոլոր ազգերն առաջացել են Նոյի երեք որդիներից:
- է. Հունական ավանդազրույցի համաձայն՝ Յասոնի հետ Կոլխիդա նավարկած թրակիացի Արմենոսը, որն աչքի էր ընկել իր քաջագործություններով, գրավում է Հայաստանը, դառնում առաջին թագավորը, և նրա պատվին էլ Հայաստանը կոչվում է «Արմենիա»:

- 1) բ, գ, է
- 2) գ, դ, ե
- 3) ա, գ, զ
- 4) ա, դ, զ

**7. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն Նոյ նահապետը՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում «Արարատ լեռների վրա»:
- 2) Բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հայկից, Բելից, Թորգոմից:
- 3) Վրացական ավանդությունը գրի է առնվել V–VII դարերում վրաց հեղինակների կողմից:

- 4) Բնիկ հայկական պատմական ավանդազրույցը մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ, ավանդազրույցի առանձին դրվագներ ի մի են բերվել XVIII դարում Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» էջերում:
- 5) Վրացական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:

**8. Ընտրել այն հնդեվրոպական լեզուները, որոնք ինքնուրույն և առանձին լեզվաճյուղեր են.**

- |               |              |
|---------------|--------------|
| ա) գերմաներեն | դ) հայերեն   |
| բ) հունարեն   | ե) ռուսերեն  |
| գ) իտալերեն   | զ) ալբաներեն |
- 
- |            |            |
|------------|------------|
| 1) ա, գ, դ | 3) բ, դ, զ |
| 2) բ, գ, դ | 4) դ, ե, զ |

**9. Գտնել սխալ փաստարկները.**

- 1) Բյուրակնյան լեռներից սկիզբ առնող Երասխը կոչվել է Երաստի անունից:
- 2) Դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում հիշատակվող Թեգարաման գտնվել է Տիգրիսի ավազանում:
- 3) Տիգրան Մեծի օրոք Միջերկրական ծովի հարավ–արևմուտքում ընկած Կիլիկիայից Հայաստան բերվեց 100000 մարդ:
- 4) Հայաստանի տարածքում Արմենիա մայր և Արմենիա մինոր վարչական միավորները առաջին անգամ հիշատակվում են Մագնեսիայի ճակատամարտի առնչությամբ:
- 5) Արամեատառ հողաբաժան սահմանաքարերը թվագրվում են Ք. ա. II դարով:
- 6) Մարկոս Կրաստոն արշավանքը սկսեց՝ անցնելով հռոմա–պարթևական սահման Եփրատը:
- 7) Մենուայի բանակը հարավարևմտյան ուղղությամբ հասավ մինչև Կումենու և Ասորեստան:

**10. Ընտրել երկու ճիշտ պնդումները.**

- ա. Ք. ա. IX դ. 80–70–ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող պետական կազմավորումներից նշանավոր էին հարավում՝ Միտանին, իսկ հյուսիսում՝ Հայասան:
- բ. Ք. ա. 859–843 թթ. ասորեստանյան արշավանքներին դիմակայած Արամուն ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան էր:

գ. Արամու Ուրարտացին ոչ միայն ջախջախել է ասորեստանցի նվաճողներին, այլև գրավել Մարաստանն ու Փոքր Ասիայի զգալի մասը և հաղթական արշավանքներով հասել մինչև Պարսից ծոցի և Սև ծովի ափերը:

դ. Հայկական լեռնաշխարհում առաջացած պետական կազմավորումներից Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 880–ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը միավորել իր իշխանության ներքո:

ե. Քանի որ «Ուրարտուն» դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակում են այդ անունով հիշատակել նաև Նաիրի թագավորությունը:

- 1) ա, բ                      2) բ, ե                      3) դ, ե                      4) գ, ե

**11. Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի տարածքում որո՞նք էին երեք խոշոր համադաշնությունները.**

ա) Արատտա

դ) Նաիրի

բ) Հայասա

ե) Դիաուխի

գ) Էթիունի

զ) Ծուփանի

- 1) ա, գ, զ                      2) բ, ե, զ                      3) գ, դ, ե                      4) գ, դ, զ

**12. Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

ա. Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում կազմավորվել էր Էթիունի երկրի համադաշնությունը:

բ. Արգիշտի I–ի օրոք Վանի թագավորությունը (Բիայնիլի–Ուրարտու–Արարատ) հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:

գ. Արգիշտի II–ը, թեև գահ բարձրացավ դժվարին ժամանակաշրջանում, սակայն կարողացավ զարկ տալ քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:

դ. Ռուսա III–ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:

ե. Հնագիտական պեղումներից հայտնաբերված արձանագիր առարկաները վկայում են, որ Սարգուրի I–ի ռազմաքաղաքական ազդեցության ոլորտը տարածված էր մինչև Հյուսիսային Կովկաս:

զ. Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:

է. Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանում նշանակալի տերություն դառնալու գործում կարևոր դեր խաղացին Իշպուինիի և Մենուայի կատարած բարեփոխումները:

- 1) ա, գ, զ                      2) բ, դ, է                      3) գ, դ, ե                      4) բ, գ, է

**13. Ո՞ր տարածքներով էին անցնում Վանի թագավորության սահմանները Սարդուրի II-ի օրոք.**

- 1) հարավում՝ Հայկական Տավրոս, հյուսիս-արևմուտքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հյուսիսում՝ Բաբելոնով դեպի Պարսից ծոց և հարավ-արևելքում՝ Միջերկրական ծով
- 2) հյուսիսում՝ Սև ծով, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Բաբելոնով դեպի Պարսից ծոց և հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով
- 3) Ուրմիայի ավազանի հարավից մինչև Զավախք, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև անդրեփրատյան աջափնյա շրջաններ, Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան
- 4) Պարսուայից մինչև Ուրմիո լճի ավազան, Կասպից ծովից դեպի Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններ

**14. Նշվածներից ո՞րը ուրարտական պետական գործակալության անվանում չէ.**

- 1) սահմանապահ կուսակալ
- 2) աշխարհակալ
- 3) երկրապահ կուսակալ
- 4) գավառակալ

**15. Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորության սահմանները հասնում էին՝**

- 1) հյուսիս-արևելքում՝ Կուր գետին, հյուսիս-արևմուտքում՝ Եփրատ գետի ավազանին, արևելքում՝ Կասպից ծովին, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետքին
- 2) հյուսիս-արևելքում՝ Կուր գետին, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծովին, արևելքում՝ Կասպից ծովին, իսկ հարավում՝ Հարավային Միջագետքին
- 3) հյուսիս-արևելքում՝ Կուր գետին, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծովին, արևելքում՝ Մարաստանին, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետքին
- 4) հյուսիս-արևելքում՝ Կուր գետին, հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխ գետի ավազանին, արևելքում՝ Մարաստանին, իսկ հարավում՝ Հարավային Միջագետքին

**16. Բեհիսթունյան արձանագրությունը ո՞ր լեզուներով է գրված.**

- 1) էլամերեն, արամեերեն, պարսկերեն
- 2) հայերեն, բաբելոներեն, արամեերեն
- 3) հայերեն, էլամերեն, պարսկերեն
- 4) էլամերեն, բաբելոներեն, պարսկերեն

**17. Արտաշես I-ի մասին Մովսես Խորենացին ի՞նչ վիպերգեր է գրի առել.**

- 1) «Արտաշես և Տիգրան», «Արտաշես և Արտավազր»
- 2) «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազր»
- 3) «Տիգրան և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ»
- 4) «Արտաշես և Երվանդ», «Տիգրան և Արտաշես»



**18. Ո՞ր շարքի բոլոր երկրներն են Տիգրան Մեծի տերության հպատակ թագավորություններ.**

- 1) Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե, Ասորիք, Աղվանք, Հրեաստան, Փյունիկիա, Կիլիկիա, Կոմմագենե, Մարաստան
- 2) Ասորիք, Աղվանք, Պարթևստան, Փյունիկիա, Կիլիկիա, Կոմմագենե, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե
- 3) Փյունիկիա, Կիլիկիա, Ասորիք, Աղվանք, Պարթևստան, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե
- 4) Փյունիկիա, Կիլիկիա, Ասորիք, Աղվանք, Մարաստան, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե

**19. Ո՞ր մայրաքաղաքներն էր միմյանց կապում «Արքունի պողոտան».**

- 1) Արմավիր, Տիգրանակերտ, Էկբատան
- 2) Արտաշատ, Դվին, Անտիոք
- 3) Արտաշատ, Տիգրանակերտ, Անտիոք
- 4) Արտաշատ, Տիգրանակերտ, Էկբատան

**20. Առանձնացնել այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Գոդերծ II-ի միջև կնքված հայ-պարթևական հաշտության պայմանագրում.**

- ա. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Ասորպատականի վրա, որի տարածքը ստանալու էր Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պարթևստանը:
- բ. Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց Պարթևստանը ճանաչում էր Տիգրան Մեծի գերիշխանությունը:
- գ. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլած Յոթանասուն հովիտները:
- դ. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այնուհետև կրելու էին Տիգրանն ու իր հաջորդները:
- ե. Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստանում էր օգնական ուժեր տրամադրել Գոդերծ II-ին:
- զ. Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվում էին Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:
- է. Հօգուտ Պարթևստանի՝ Հայաստանը հրաժարվում էր Մարաստանից և Ասորպատականից:

- 1) գ, դ, զ                      2) գ, դ, է                      3) բ, գ, է                      4) ա, գ, զ

**21. Առանձնացնել այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի միջև կնքված հայ-պոնտական դաշինքում.**

- 1) Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:
- 2) Հռոմի դեմ Տիգրան Մեծի պատերազմելու ողջ ընթացքում Միհրդատ Եվպատորը խոստանում էր պահպանել չեզոքություն:

- 3) Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Հայաստանը:
- 4) Պոնտոսը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Հայաստանը՝ արևմուտքում:
- 5) Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է ստանար Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պոնտոսը:
- 6) Դաշինքն ամրապնդելու նպատակով Միհրդատ Եվպատորն իր դուստր Կլեոպատրային կնության էր տալիս Տիգրան Մեծին:
- 7) Պոնտոսը Հռոմի դեմ պատերազմում Տիգրան Մեծից զորք ստանալու դիմաց համաձայնում էր Փոքր Հայքը զիջել Հայոց թագավորությանը:

**22. Գտնել իրադարձությունների այն շարքը, որոնք տեղի են ունեցել Ք. ա. 94 թ.**

- 1) Սուլլայի արշավանքը Կապադովկիա, Ծոփքի միացումը Մեծ Հայքին, հայ-պոնտական դաշինքի կնքումը
- 2) Վիրքի և Աղվանքի հպատակեցումը Տիգրան Մեծի օրոք, հայ-պոնտական դաշինքի կնքումը, Կորդուքի միացումը Մեծ Հայքին
- 3) Ծոփքի միացումը Մեծ Հայքին, Կորդուքի վերամիավորումը Տիգրան Մեծի կողմից, հայ-պոնտական դաշինքի կնքումը
- 4) Պտղոմայիսի գրավումը հայկական գորքերի կողմից, Ասորիքի գրավումը Տիգրան Մեծի կողմից, Ծոփքի միացումը Մեծ Հայքին

**23. Տրված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված հայ-հռոմեական պայմանագրում.**

- 1) Հայկական պետությունը պահպանում էր իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
- 2) Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Ասորիքից, Պաղեստինից, Փյունիկիայից և Կիլիկիայից:
- 3) Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Ատրպատականից, Ադիաբենեից, Միգդոնիայից և Օսրոյենեից:
- 4) Հօգուտ Պարթևստանի՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Մարաստանից, Ատրպատականից, Ադիաբենեից, Միգդոնիայից և Օսրոյենեից:
- 5) Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր 60 հազար տաղանդ՝ ռազմատուգանք և տարեկան 6 հազար տաղանդ՝ հարկ, սակայն դրանք վճարվելու էին Ծոփքի արքայական գանձարաններից:
- 6) Հայաստանից անջատվելու էին Փոքր Հայքն ու Կոմմագենեն, որտեղ թագավոր էր հաստատվելու Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան Մեծի մահից հետո դրանք միավորվելու էին Մեծ Հայքի հետ որպես մեկ պետություն՝ Տիգրան Կրտսերի գահակալությամբ:
- 7) Հայաստանից անջատվելու էին Կորդուքն ու Ծոփքը, որտեղ թագավոր էր հաստատվելու Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան Մեծի մահից հետո դրանք միավորվելու էին Մեծ Հայքի հետ որպես մեկ պետություն՝ Տիգրան Կրտսերի գահակալությամբ:

#### **24. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս եկավ Կորդոբից և անցնելով Հայկական պարը՝ Տիգրիս գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ:
- 2) Ք. ա. 67 թ. հայկական բանակները ազատագրեցին Ծոփքը, ներխուժեցին Կապադովկիա:
- 3) Պոմպեոսը Արևելք ժամանեց Ք. ա. 66 թ. գարնանը:
- 4) Պոմպեոսը պարթևներին խոստացել էր վերադարձնել Մարաստանը, Հյուսիսային Միջագետքը և Կորդոբը:
- 5) Թագաժառանգ Տիգրան Կրտսերը գնաց պարթևների թագավոր Օրոդես II-ի մոտ, որն ի դեմս նրա դաշնակից գտավ:
- 6) Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:

#### **25. Առանձնացնել այն կետերը, որոնք չեն վերաբերում Արտաշատի պայմանագրին.**

- 1) Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Հայաստանը հրաժարվում էր Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Կիլիկիայից, այսինքն՝ Միջերկրական ծովի առափնյա երկրներից:
- 2) Հայկական պետությունը պահպանում էր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
- 3) Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում:
- 4) Կողմերը միացյալ ուժերով պետք է գրավեին Միջագետքը:
- 5) Հայաստանից անջատվելու էին Ծոփքն ու Կորդոբը, որտեղ թագավոր էր հռչակվելու Տիգրան Կրտսերը:
- 6) Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր 6 հազար տաղանդ, Հայաստանը հայտարարվում էր «հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից»:
- 7) Դաշինքն ամրապնդվում էր արքայի քրոջ և հռոմեական արքայազնի ամուսնությամբ:

#### **26. Տրված փաստարկներից որոնք են սխալ.**

- 1) Ք. ա. 54 թ. գարնանը հռոմեական 50-հազարանոց բանակը Կրասոսի գլխավորությամբ ժամանեց Ասորիք:
- 2) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև զորավար Օրոդեսը ջախջախեց հռոմեական բանակը:
- 3) Անտոնիոսը 60-հազարանոց բանակով Ք. ա. 34 թ. ամռանը արշավում է Հայաստան և շարժվում դեպի Արտաշատ:
- 4) Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք. ա. 31 թ. Ալցիումի մոտ:
- 5) Օկտավիանոսը, որը Ք. ա. 31 թ. պաշտոնապես իրեն հայտարարեց Օգոստոս (Աշխարհակալ), հիմք դրեց հռոմեական կայսերական վարչակարգին:
- 6) Ք. ա. 20 թ. Արտաշատում դավադրաբար սպանվում է Արտաշես II-ը:

**27. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Ք. ա. 36 թ. աշնանը՝ նահանջի 17-րդ օրը, հռոմեացիները հասան Արաքսին, և նրանց ընդհանուր կորուստը կազմում էր 40 հազար զինվոր:
- 2) Անտոնինոսը, չնայած ցանկանում էր վրեժխնդիր լինել Արտավազդից, Ք. ա. 36 թ. անհաջողությունից հետո շտապեց բանակը դուրս բերել Հայաստանից ու մեկնել Եգիպտոս՝ իր կնոջ՝ թագուհի Կլեոպատրայի մոտ:
- 3) Հռոմում Անտոնինոսը կազմակերպեց հաղթահանդես, որի ընթացքում հայոց արքան ու նրա ընտանիքն անցնում էին քաղաքի փողոցներով:
- 4) Անտոնինոսի ու Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք. ա. 34 թ. Ալեքսանդրիայի մոտ:
- 5) Արտավազդ II-ը իր կենդանության օրոք հռչակվել է «Աստվածային» պատվանունով:

**28. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը գահընկեց է անում Տիգրան IV-ին:
- 2) Տիգրան III-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Արտաշես III-ին:
- 3) Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց իր կամակատար Արիոբարզանեսին:
- 4) Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ատրիիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
- 5) Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները, այլև Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:
- 6) Ք. ա. I դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:
- 7) Արտաշես I-ի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը ջախջախում է վրացական բանակը և Հայաստանին է վերադարձնում Գուգարք նահանգը:

**29. Ստորև բերված զոր շարքն է ընդգրկում բացառապես Մեծ Հայքի Արշակունի թագավորների.**

- 1) Տիգրան Մեծ, Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Արշակ II
- 2) Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Խոսրով I, Արտավազդ II
- 3) Տրդատ I, Տիգրան I, Աշոտ I, Խոսրով I, Պապ
- 4) Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Վաղարշ II, Խոսրով I

**30. Տրված փաստարկներից որոնք են սխալ.**

- 1) Վաղարշ II-ը կառավարել է 185–201 թթ.:
- 2) Կիլիկիայում՝ Խոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, Սեպտիմոս Սևերոսը սպանվում է:

- 3) Կարակալան 215 թ. Ասորիք է հրավիրում Խոսրով I-ին ու ձերբակալում:
- 4) Տրդատ II-ին Մակրինոս կայսրը թագ է ուղարկում:
- 5) Տրդատ II-ին հաջորդած Խոսրով II-ից հետո հայոց գահին անցնում է Տրդատ III-ին:
- 6) Մծբինում կնքվեց հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագիր:
- 7) Տրդատ II-ին հաջորդած Արտավազդից հետո հայոց գահին անցնում է Խոսրով II-ին:

### 31. Ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Հայոց դիցարաններում չեն եղել չար կամ չարագործ աստվածներ, իսկ չար ուժերը ոգիների մակարդակից վեր չեն բարձրացվել:
  - բ. Միայն Վանի թագավորության շրջանի դիցարանին է բնորոշ եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ:
  - գ. Հելլենիզմի դարաշրջանի հայոց դիցարանում թեև եղել են չար կամ չարագործ աստվածություններ, սակայն միշտ մեծարվել են գիտությունները, արվեստներն ու ընտանիքը:
  - դ. Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ, սակայն հայոց դիցարանները ղեկավարվում էին աստվածների գերագույն եռյակի կողմից:
  - ե. Հայոց դիցարանները, ի տարբերություն հունական և հռոմեական դիցարանների, բաղկացած չէին ազգակից աստվածներից, այսինքն՝ չէին ներկայանում իբրև աստվածային ընտանիք:
  - զ. Հայոց դիցարաններում չեն եղել չար կամ չարագործ աստվածներ, ընդհակառակը՝ միշտ մեծարվել են բարին, լույսը, ընտանիքը, գիտություններն ու արվեստները:
  - է. Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել երկմիասնականությունը, բոլոր հայկական դիցարանները ղեկավարվել են աստվածների գերագույն երկյակի կողմից:
- 1) բ, դ, գ                      2) ա, գ, ե                      3) դ, գ, է                      4) ա, դ, գ

### 32. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Հելլենիստական մշակույթը և հունարենը Հայաստանում տարածում գտան գերագանցապես արքունիքում և ավագանու շրջանում:
- 2) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ ուրարտական երևույթ է:
- 3) Զրադաշտականությունը դուալիստական կրոն էր, այսինքն՝ դրա հետևորդները հավատում էին, որ կան երկու գերագույն աստվածներ՝ չար և բարի:
- 4) Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Երազամույն վայրում:
- 5) Հայոց դիցարանին բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ Աստծո գլխավորությամբ:
- 6) Արամեական այբուբենը կազմված էր 22 տառից, գրվել է աջից ձախ:

**33. Թվարկվածներից որո՞նք հայոց հին հավատքի բնորոշ գծերից չեն.**

- 1) Հայոց դիցարանին բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ աստծո գլխավորությամբ:
- 2) Հայոց դիցարանում ստորադաս աստվածները միշտ ձգտել են դիրք զբաղեցնելու գերագույն եռյակում:
- 3) Հայոց դիցարանը բաղկացած էր ազգակից աստվածներից:
- 4) Հայոց դիցարանի կորիզը կազմում էին կիսաառասպելական և պատմական գործիչները:
- 5) Հայոց դիցարանները ղեկավարվում էին գերագույն եռյակի կողմից:
- 6) Հայոց դիցարանում առկա են եղել չար ու բարի համագոր աստվածներ:
- 7) Հայոց դիցարանում չկան չար աստվածներ, քանի որ չար ուժերը ոգիների մակարդակից չեն բարձրացվել:
- 8) Մեծարվել են լույսը, ընտանիքը, գիտությունները, արվեստներն ու ամենայն բարին:

**34. Ընտրել երկու ճիշտ պնդումները.**

- ա. Արտավազդ Երկրորդը հիշատակվում է որպես պատմական երկերի հեղինակ:  
բ. Արտավազդ Երկրորդը հիշատակվում է որպես կատակերգությունների հեղինակ:  
գ. Արտավազդ Երկրորդը հիշատակվում է որպես քարոզների հեղինակ:  
դ. Արտավազդ Երկրորդը հիշատակվում է որպես ճառերի և ողբերգությունների հեղինակ:  
ե. Արտավազդ Երկրորդը հիշատակվում է որպես առակների և վիպասքերի հեղինակ:

1) ա, ե

2) ա, դ

3) բ, դ

4) գ, ե

**35. Թվարկվածներից որո՞նք այբուբեններն են կազմված 22 տառից.**

ա) հունական

գ) պահլավական

բ) արամեական

դ) ասորական

ե) հայկական

1) ա, բ, գ,

3) բ, դ, ե

2) ա, գ, դ

4) բ, գ, դ,

**36. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանի մշակութային կյանքը նշանավորվում է երկու տեսակի՝ ժողովրդական և հունալեզու թատրոնների առկայությամբ:
- 2) Ապպիանոս պատմիչի (Ք. ա. II-I դդ.) վկայությամբ՝ Արտավազդ II արքայի գրած ողբերգությունները նրա մահվանից մեկուկես դար անց էլ հայտնի էին հռոմեացի ընթերցասերներին:
- 3) 234–235 թթ. գրված «Պատմություն» աշխատության մեջ հույն մատենագիրը հայերին հիշատակում է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:

- 4) Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում քանդակագործության զարգացած լինելու մասին են վկայում նաև Նեմրուֆ լեռան սրբավայրը կառուցող Անտիոքոս Երվանդունու, աստվածների ու թագավորի նախնիների բարձրարվեստ քանդակները:
- 5) Վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից էին Վաղարշապատում բացված Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը, մարմարե և կավե արձանները, զարդերը, զինատեսակներն ու աշխատանքային գործիքները:

**37. Գտնել Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթների ճիշտ դասավորությունն ըստ դրանց բարձրության նվազման հաջորդականության.**

- |               |              |
|---------------|--------------|
| ա) Սիփան      | դ) Արագած    |
| բ) Կապուտջուղ | ե) Մեծ Մասիս |
| գ) Փոքր Մասիս |              |
- 
- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) ե, ա, դ, գ, բ | 3) ե, դ, գ, ա, բ |
| 2) ե, դ, բ, ա, գ | 4) ե, ա, գ, դ, բ |

**38. Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

- 1) Հունական աղբյուրները Երվանդ IV–ի մասին գրում են, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:
- 2) Մինչև Ք. ա. III դարի վերջը Հայաստանին տիրելու Սելևկյան տերության փորձերն ապարդյուն են անցնում, քանի որ Մեծ և Փոքր Հայքերը գործում էին միասնաբար:
- 3) Կամբիզի մահվանից հետո Աքեմենյան տերության մեջ սկսվում են գահակալական կռիվներ, որոնք ավարտվում են Դարեհ I–ի հաղթանակով, սակայն նրա իշխանության իրավականությունը Հայաստանը չի ճանաչում:
- 4) Հայաստանի սատրապ Երվանդ III–ը ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II–ի դստեր հետ, բարձր դիրք էր զբաղում տերության մեջ և նույնիսկ իր սեփական պատկերով ոսկեդրամ էր հատել:
- 5) Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III–ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հոչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախությունը:
- 6) Մենոն զորավարին հաջողվեց գրավել Բարձր Հայքի ոսկու հանքերը, որից հետո Ալեքսանդրն այլևս նոր զորք չուղարկեց Հայաստան:
- 7) Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը Ք. ա. 301 թ. բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակից Սելևկյան պետությունն էր:

**39. Ընտրել այն կետերը, որոնք վերաբերում են Բ. ա. 87 թ. կնքված հայ-պարթևական պայմանագրին.**

- 1) Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում:
- 2) Կողմերը միացյալ ուժերով պետք է հարձակվեին Կապադովկիայի վրա:
- 3) Պարթևները վերադարձնում էին Հայաստանից խլած «70 հովիտները»:
- 4) Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվելու էին Մարաստանից և Հյուսիսային Միջագետքից:
- 5) Մեծ Հայքը հրաժարվում էր Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Կիլիկիայից:
- 6) Մեծ Հայքը պետք է վճարեր 6 հազար տաղանդ ոսկամատուցանք:
- 7) Պարթևները կորցնում էին «արքայից արքա» տիտղոսը, որը կրելու էին Տիգրանն ու նրա հաջորդները:
- 8) Հայաստանից անջատվելու էին Ծոփքն ու Կորդուքը:
- 9) Դաշինքն ամրապնդվեց հայոց թագավորի քրոջ և պարթևների թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:

**40. Ովքեր են կազմել Հռոմի Առաջին եռապետությունը.**

- |                     |                  |
|---------------------|------------------|
| ա) Մարկոս Անտոնինոս | դ) Օկտավիանոս    |
| բ) Գնեոս Պոմպեոս    | ե) Լուկուլլոս    |
| գ) Հուլիոս Կեսար    | զ) Մարկոս Կրասոս |

- |            |            |
|------------|------------|
| 1) բ, գ, ե | 3) բ, գ, զ |
| 2) ա, բ, դ | 4) ա, գ, զ |

**41. Գտնել սխալ պնդումները.**

- ա. Զենոն-Արտաշեսը, թեև մեծացել ու դաստիարակվել էր հայերի մեջ և յուրացրել էր հայոց լեզուն ու սովորույթները, սակայն չէր վարում Հայաստանի պետական շահերից բխող քաղաքականություն:
- բ. Միհրդատ Իբերացու գահակալումը Հայաստանում նշանավորվեց սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած հակահռոմեական հուժկու ապստամբությամբ, որի հետևանքով Հայաստանը մինչև 34 թ. լիովին վերականգնեց իր անկախությունը:
- գ. Հայոց գահին ամրանալու Հռոմի հարկի ջանքերը դատապարտված էին անհաջողության, որովհետև նա իր հանցավոր գործողություններով ատելի էր հայ ժողովրդին:
- դ. Կապադովկիայի հռոմեական կուսակալը, Հռոմի հարկից կաշառվելով, նրան ապօրինաբար թագադրում է մայրաքաղաք Արտաշատում:
- ե. 54 թ. ցրտաշունչ ձմռանը Հռոմի հարկը վերադարձավ Արտաշատ և որոշեց հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ, սակայն զինված ժողովուրդը շրջապատեց պալատը, իսկ Հռոմի հարկը կնոջ հետ փախուստի դիմեց:



գ. Հայերը ցանկանում էին ազատվել Հռոմեացիներից ու հռոմեական միջամտությունից, ուստի ընտրեցին Պարթևստանի առաջարկությունը, քանզի պարթևները չէին սպառնում հայոց պետականության գոյությանը և կենցաղով, բարքերով ու սովորույթներով մոտ էին հայերին:

է. Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

1) ա, բ, է

2) բ, դ, ե

3) ա, բ, ե

4) գ, զ, է

#### 42. Գտնել սխալ պնդումները.

ա. Տրդատ I-ի 22-ամյա գահակալության ընթացքում միջազգային ասպարեզում Հայաստանի վիճակը կայունանում է:

բ. Մծուրք քաղաքը հիմնադրվել էր Արևմտյան Եփրատի ափին՝ Մշո դաշտում, որտեղով անցնում էր Տիգրանակերտից Անտիոք գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհը:

գ. Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

դ. Տրդատ II-ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ հաջողությամբ պսակվեց, և պարթև Արշակունիներին ոչ միայն հաջողվեց փրկվել բնաջնջվելուց, այլև նրանք վերականգնեցին Պարթևական թագավորությունը:

ե. Մծբինում կնքված հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրով Սասանյան Ներսես I թագավորը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

1) գ, դ

2) բ, ե

3) ա, բ

4) բ, դ

# ՄԱՍ Բ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. ՏԱՐԵԹՎԵՐ

---

- 1. Երբ է կառուցվել Վաղարշապատի Ս. Էջմիածին Մայր տաճարը.**  
1) 305 թ.                      2) 303 թ.                      3) 313 թ.                      4) 301 թ.
- 2. Երբ է քրիստոնեությունը Հայաստանում հռչակվել պետական կրոն.**  
1) 305 թ.                      2) 303 թ.                      3) 300 թ.                      4) 301 թ.
- 3. Երբ է հաստատվել Հայ առաքելական եկեղեցու նվիրապետությունը.**  
1) I դ.                            2) IV դ.                            3) III դ.                            4) II դ.
- 4. Մինչև ո՞ր թվականն է գահակալել Տրդատ III Մեծը.**  
1) 298                            2) 320                            3) 338                            4) 330
- 5. Երբ է գահակալել Տիրան Արշակունին.**  
1) 339–350 թթ.    3) 330–338 թթ.  
2) 350–368 թթ.    4) 309–379 թթ.
- 6. Երբ է գումարվել առաջին տիեզերական ժողովը Նիկեայում.**  
1) 313 թ.                            2) 335 թ.                            3) 354 թ.                            4) 325 թ.
- 7. Երբ է գումարվել Աշտիշատի եկեղեցական ժողովը.**  
1) 350 թ.                            2) 355 թ.                            3) 345 թ.                            4) 354 թ.
- 8. Երբ է կնքվել հռոմեա–պարսկական պայմանագիրը («ամոթալի»).**  
1) 336 թ.                            2) 363 թ.                            3) 360 թ.                            4) 365 թ.
- 9. Երբ է տեղի ունեցել Ձիրավի ճակատամարտը.**  
1) 373 թ.                            2) 371 թ.                            3) 372 թ.                            4) 370 թ.
- 10. Արշակ II-ի կառավարման շրջանում երբ պատերազմ սկսվեց Հռոմի ու Պարսկաստանի միջև.**  
1) 354 թ.                            2) 359 թ.                            3) 364 թ.                            4) 367 թ.
- 11. Երբ է Մուշեղ սպարապետը զորքով շարժվել Գանձակ.**  
1) 368 թ.                            2) 372 թ.                            3) 379 թ.                            4) 378 թ.
- 12. Երբ է գահակալել Վարազդատ թագավորը.**  
1) 370–374 թթ.    3) 350–368 թթ.  
2) 374–378 թթ.    4) 378–387 թթ.

**13. Երբ է գահակալել Արշակ III-ը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) 388–414 թթ. | 3) 370–374 թթ. |
| 2) 374–378 թթ. | 4) 378–387 թթ. |

**14. Երբ է գահակալել Վռամշապուհը.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) 378–387 թթ. | 3) 388–414 թթ. |
| 2) 422–428 թթ. | 4) 415–419 թթ. |

**15. Երբ է գահակալել Արտաշես Արշակունին.**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) 388–414 թթ. | 3) 415–428 թթ. |
| 2) 415–419 թթ. | 4) 422–428 թթ. |

**16. Երբ է վախճանվել Սահակ Պարթևը.**

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1) 440 թ. սեպտեմբերի 7–ին | 3) 439 թ. սեպտեմբերի 7–ին |
| 2) 440 թ. փետրվարի 17–ին  | 4) 439 թ. փետրվարի 17–ին  |

**17. Երբ է վախճանվել Մեսրոպ Մաշտոցը.**

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1) 439 թ. փետրվարի 17–ին  | 3) 440 թ. փետրվարի 17–ին  |
| 2) 439 թ. սեպտեմբերի 7–ին | 4) 440 թ. սեպտեմբերի 7–ին |

**18. Երբ է գումարվել Շահապիվանի եկեղեցական ժողովը.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 440 թ. | 2) 444 թ. | 3) 434 թ. | 4) 449 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

**19. Երբ է տեղի ունեցել Խաղխաղի ճակատամարտը.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 451 թ. | 2) 447 թ. | 3) 449 թ. | 4) 450 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

**20. Երբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 451 թ. մայիսի 6–ին  | 3) 451 թ. մայիսի 26–ին |
| 2) 451 թ. մայիսի 28–ին | 4) 450 թ. մայիսի 26–ին |

**21. Երբ են հայ նախարարները ժամանել Տիզրոն.**

- |                   |                       |
|-------------------|-----------------------|
| 1) 449 թ. աշնանը  | 3) 450 թ. հոկտեմբերին |
| 2) 450 թ. ապրիլին | 4) 451 թ. ձմռանը      |

**22. Երբ պարսից գերությունից հայրենիք վերադարձան ողջ մնացած հայ նախարարները.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 459 թ. | 2) 460 թ. | 3) 462 թ. | 4) 464 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

**23. Երբ է Վահան Մամիկոնյանը ստանձնել ապստամբության ղեկավարությունը.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 480 թ. | 2) 483 թ. | 3) 482 թ. | 4) 481 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

**24. Երբ է տեղի ունեցել Ակոռիի ճակատամարտը.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 483 թ. | 2) 482 թ. | 3) 484 թ. | 4) 481 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

25. Երբ է տեղի ունեցել Ճարմանայի ճակատամարտը.  
 1) 483 թ.                    2) 482 թ.                    3) 481 թ.                    4) 484 թ.
26. Երբ է կնքվել Նվարսակի պայմանագիրը.  
 1) 485 թ.                    2) 483 թ.                    3) 484 թ.                    4) 486 թ.
27. Երբ է կնքվել պայմանագիրը Վահան Մամիկոնյանի ու Նիխորի միջև.  
 1) 482 թ.                    2) 484 թ.                    3) 485 թ.                    4) 506 թ.
28. Ո՞ր թվականից է գահակալել Վաչագան Բարեպաշտը.  
 1) 481                    2) 480                    3) 485                    4) 484
29. Երբ է Բաբգեն Ա-ն գումարել Դվինի եկեղեցական ժողովը.  
 1) 554 թ.                    2) 545 թ.                    3) 504 թ.                    4) 506 թ.
30. Հովհաննես և Արտավան Արշակունիների գլխավորած հակաբյուզանդական ապստամբությունը սկսվել է՝  
 1) 536 թ.                    2) 540 թ.                    3) 539 թ.                    4) 548 թ.
31. Երբ է տեղի ունեցել Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև.  
 1) 590 թ.                    2) 532 թ.                    3) 571 թ.                    4) 591 թ.
32. Երբ է խոսքով II-ը գումարել Տիգրանի ժողովը.  
 1) 618 թ.                    2) 615 թ.                    3) 614 թ.                    4) 607 թ.
33. Երբ է Կոմիտաս Մամիկոնյանը օժվել հայոց կաթողիկոս.  
 1) 615 թ.                    2) 618 թ.                    3) 614 թ.                    4) 631 թ.
34. Երբ է կառավարել մարզպան Վարազտիրոց Բագրատունին.  
 1) 615–628 թթ.                    3) 628–632 թթ.  
 2) 610–641 թթ.                    4) 641–668 թթ.
35. Երբ է տեղի ունեցել Քաղիսիայի ճակատամարտը.  
 1) 637 թ.                    2) 639 թ.                    3) 636 թ.                    4) 640 թ.
36. Երբ է Թեոդորոս Ռշտունին վերամիավորել Հայաստանը.  
 1) 652 թ.                    2) 642 թ.                    3) 650 թ.                    4) 639 թ.
37. Երբ է կնքվել հայ-արաբական դաշնագիրը.  
 1) 639 թ.                    2) 643 թ.                    3) 647 թ.                    4) 652 թ.
38. Երբ է Կոստանդին II-ի գլխավորած 100-հազարանոց բանակը ներխուժել Հայաստան.  
 1) 652 թ.                    2) 653 թ.                    3) 656 թ.                    4) 661 թ.

39. Վրաց եկեղեցին ճիշդ ընդունեց քաղկեդոնականություն և անջատվեց Հայ եկեղեցուց.

- 1) 607–608 թթ. 3) 606–607 թթ.  
2) 605–606 թթ. 4) 608–609 թթ.

40. Երբ հաջափայտը վերադարձվեց Երուսաղեմ.

- 1) 631 թ. սեպտեմբերի 14–ին 3) 632 թ. սեպտեմբերի 14–ին  
2) 635 թ. սեպտեմբերի 14–ին 4) 630 թ. սեպտեմբերի 14–ին

41. Երբ է կազմվել Արմինիա փոխարքայությունը.

- 1) 699 թ. 2) 701 թ. 3) 700 թ. 4) 703 թ.

42. Երբ է Արմինիայի կենտրոն դարձել Պարտավը.

- 1) VII դ. վերջին 3) VIII դ. վերջին  
2) VIII դ. սկզբին 4) IX դ. սկզբին

43. Երբ է տեղի ունեցել հայերի հակաարաբական առաջին ապստամբությունը.

- 1) 701 թ. 2) 705 թ. 3) 725 թ. 4) 703 թ.

44. Երբ է անցկացվել Հերթի աշխարհագիրը.

- 1) 705 թ. 2) 715 թ. 3) 725 թ. 4) 748 թ.

45. Երբ է տեղի ունեցել Արճեշի ճակատամարտը.

- 1) 775 թ. ապրիլի 25–ին 3) 774 թ. ապրիլի 15–ին  
2) 774 թ. ապրիլի 25–ին 4) 775 թ. ապրիլի 15–ին

46. Երբ է տեղի ունեցել Արձնիի ճակատամարտը.

- 1) 774 թ. ապրիլի 15–ին 3) 775 թ. ապրիլի 15–ին  
2) 774 թ. ապրիլի 25–ին 4) 775 թ. ապրիլի 25–ին

47. Երբ է Աշոտ Բագրատունին (Մսակեր) ճանաչվել հայոց իշխան.

- 1) 855 թ. 2) 826 թ. 3) 804 թ. 4) 814 թ.

48. Երբ է Սմբատ սպարապետի որդի Աշոտ Բագրատունին ճանաչվել հայոց իշխան ու սպարապետ.

- 1) 862 թ. 2) 850 թ. 3) 855 թ. 4) 804 թ.

49. Երբ է տեղի ունեցել Արյան լճի ճակատամարտը.

- 1) 850 թ. 2) 855 թ. 3) 853 թ. 4) 852 թ.

50. Բուղան ճիշդ ուղարկվեց Հայաստան.

- 1) 851 թ. 2) 854 թ. 3) 853 թ. 4) 852 թ.

51. Երբ է հայոց իշխան և սպարապետ Աշոտ Բագրատունին ճանաչվել հայոց իշխանաց իշխան.

- 1) 869 թ. 2) 885 թ. 3) 862 թ. 4) 855 թ.

**52. Երբ է գումարվել Շիրակականի եկեղեցական ժողովը.**

- 1) 885 թ.                      2) 869 թ.                      3) 865 թ.                      4) 876 թ.

**53. Երբ է Ջաքարիա Ձագեցու նախաձեռնությամբ հրավիրվել հայ իշխանների հատուկ ժողովը.**

- 1) 876 թ.                      2) 885 թ.                      3) 867 թ.                      4) 869 թ.

**54. Երբ է Աշոտ I Բագրատունին օծվել հայոց թագավոր.**

- 1) 885 թ. հունվարի 6-ին                      3) 885 թ. հունվարի 28-ին  
2) 885 թ. օգոստոսի 26-ին                      4) 885 թ. ապրիլի 25-ին

**55. Երբ է գահակալել Սմբատ I Բագրատունին.**

- 1) 885–890 թթ.                      3) 928–953 թթ.  
2) 914–928 թթ.                      4) 890–914 թթ.

**56. Երբ է գահակալել Աշոտ II Բագրատունին.**

- 1) 885–890 թթ.                      3) 890–914 թթ.  
2) 928–953 թթ.                      4) 914–928 թթ.

**57. Երբ է խալիֆը Աշոտ II-ին ճանաչել Հայաստանի շահնշահ.**

- 1) 921 թ.                      2) 915 թ.                      3) 922 թ.                      4) 925 թ.

**58. Երբ է գահակալել Աբաս Բագրատունին.**

- 1) 953–977 թթ.                      3) 914–928 թթ.  
2) 928–953 թթ.                      4) 890–914 թթ.

**59. Երբ է գահակալել Աշոտ III Բագրատունին.**

- 1) 953–977 թթ.                      3) 928–953 թթ.  
2) 914–928 թթ.                      4) 977–990 թթ.

**60. Երբ է գահակալել Սմբատ II Բագրատունին.**

- 1) 990–1020 թթ.                      3) 928–953 թթ.  
2) 977–990 թթ.                      4) 953–977 թթ.

**61. Երբ է Դվինի ամիրայությունը միացվել Բագրատունյաց թագավորությանը.**

- 1) 987 թ.                      2) 977 թ.                      3) 978 թ.                      4) 989 թ.

**62. Երբ է գահակալել Գագիկ I Բագրատունին.**

- 1) 977–990 թթ.                      3) 989–1048 թթ.  
2) 1020–1041 թթ.                      4) 990–1020 թթ.

**63. Երբ է գահակալել Դավիթ Անհողինը.**

- 1) 1029–1065 թթ.                      3) 1042–1045 թթ.  
2) 989–1048 թթ.                      4) 990–1020 թթ.

**64. Երբ է ավարտվել Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը.**

- 1) 1001 թ.                      2) 1010 թ.                      3) 1000 թ.                      4) 1011 թ.

**65. Տայքը Բյուզանդական կայսրությանը միացվեց՝**

- 1) 998 թ.    3) 1001 թ.  
2) 1000 թ.    4) 1021 թ.

**66. Կաթողիկոսական աթոռը Աղթամար կղզուց Երբ Արգինայի վանք տեղափոխվեց.**

- 1) 922 թ.    3) 921 թ.  
2) 948 թ.    4) 928 թ.

**67. Երբ է հիմնադրվել Վասպուրականի թագավորությունը.**

- 1) 921 թ.                      2) 915 թ.                      3) 908 թ.                      4) 963 թ.

**68. Երբ է հիմնադրվել Տաշիր-Ձորագետի թագավորությունը.**

- 1) 987 թ.                      2) 978 թ.                      3) 908 թ.                      4) 963 թ.

**69. Երբ է հիմնադրվել Վանանդի թագավորությունը.**

- 1) 978 թ.                      2) 987 թ.                      3) 961 թ.                      4) 963 թ.

**70. Երբ է հիմնադրվել Սյունիքի թագավորությունը.**

- 1) 987 թ.                      2) 963 թ.                      3) 978 թ.                      4) 966 թ.

**71. Երբ է Տարոնի Բագրատունիների իշխանությունը բռնակցվել Բյուզանդիային.**

- 1) 1001 թ.                      2) 966 թ.                      3) 1021 թ.                      4) 1065 թ.

**72. Երբ է գահակալել Գագիկ II Բագրատունին.**

- 1) 1020–1041 թթ.    3) 1042–1045 թթ.  
2) 989–1048 թթ.    4) 1029–1065 թթ.

**73. Վասպուրականի թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց՝**

- 1) 1113 թ.    3) 1021 թ.  
2) 1022 թ.    4) 1065 թ.

**74. Ո՞ր թվականներին է գոյություն ունեցել Վանանդի (Կարսի) թագավորությունը.**

- 1) 964–1065 թթ.    3) 963–1065 թթ.  
2) 967–1064 թթ.    4) 968–1067 թթ.

**75. Երբ է սելջուկյան բանակն առաջին անգամ ներխուժել Հայաստան.**

- 1) 1047 թ.                      2) 1045 թ.                      3) 1048 թ.                      4) 1054 թ.

**76. Երբ է սելջուկյան բանակը երկրորդ անգամ արշավել Հայաստան.**

- 1) 1045 թ.                      2) 1047 թ.                      3) 1048 թ.                      4) 1054 թ.

77. Երբ է սելջուկյան բանակը երրորդ անգամ արշավել Հայաստան.  
 1) 1047 թ.                    2) 1054 թ.                    3) 1048 թ.                    4) 1045 թ.
78. Երբ է Ալփ-Ասլանի գլխավորած սելջուկյան բանակը ներխուժել Հայաստան.  
 1) 1054 թ.                    2) 1071 թ.                    3) 1065 թ.                    4) 1064 թ.
79. Երբ է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը.  
 1) 1071 թ.                    2) 1065 թ.                    3) 1064 թ.                    4) 1080 թ.
80. Երբ է Սարգիս Զաքարյանը ստացել ամիրսպասալարի պաշտոնը.  
 1) 1174 թ.                    2) 1184 թ.                    3) 1185 թ.                    4) 1125 թ.
81. Երբ են հայ-վրացական ուժերն ազատագրել Ամբերդը.  
 1) 1203 թ.                    2) 1206 թ.                    3) 1199 թ.                    4) 1196 թ.
82. Երբ են հայ-վրացական ուժերը վերջնականապես ազատագրել Անին.  
 1) 1199 թ.                    2) 1209 թ.                    3) 1203 թ.                    4) 1206 թ.
83. Երբ են հայ-վրացական ուժերն ազատագրել Կարսը.  
 1) 1203 թ.                    2) 1209 թ.                    3) 1206 թ.                    4) 1199 թ.
84. Երբ են հայ-վրացական ուժերն ազատագրել Դվինը.  
 1) 1209 թ.                    2) 1203 թ.                    3) 1199 թ.                    4) 1206 թ.
85. Երբ է մոնղոլական բանակը Չարմաղանի գլխավորությամբ ներխուժել Հայաստան.  
 1) 1236 թ.                    2) 1232 թ.                    3) 1231 թ.                    4) 1220 թ.
86. Մոնղոլները երբ գրավեցին Հարավային Հայաստանի շրջանները՝ Տարոնը, Վասպուրականը և Աղձնիքը.  
 1) 1244 թ.                    2) 1245 թ.                    3) 1249 թ.                    4) 1236 թ.
87. Ցեղապետ Թեմուչինը ընտրվեց խան՝  
 1) 1220 թ.                    2) 1206 թ.                    3) 1209 թ.                    4) 1249 թ.
88. Երբ անեցիները քաղաքը հանձնեցին Շաղհադյաններին.  
 1) 1125 թ.                    2) 1135 թ.                    3) 1138 թ.                    4) 1126 թ.
89. Անեցիները երբ պատվիրակություն ուղարկեցին վրաց թագավոր Դավիթ Շինարարի մոտ և հայտնեցին քաղաքը նրան հանձնելու իրենց մտադրության մասին.  
 1) 1125 թ.                    2) 1124 թ.                    3) 1126 թ.                    4) 1113 թ.
90. Երբ է գահակալել Դավիթ Շինարարը.  
 1) 1089–1125 թթ.                    3) 1184–1207 թթ.  
 2) 1090–1125 թթ.                    4) 1156–1184 թթ.



**91. Երբվանից են հայերը Կիլիկիայի բնակչության մեջ գերակշիռ մեծամասնություն կազմել.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) IX դ. վերջերից  | 3) XI դ. վերջերից  |
| 2) XI դ. սկզբներից | 4) XII դ. վերջերից |

**92. Երբ է Ապլղարիպ Արծրունին նշանակվել Կիլիկիայի կառավարիչ.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1082 թ. | 2) 1042 թ. | 3) 1072 թ. | 4) 1065 թ. |
|------------|------------|------------|------------|

**93. Ո՞ր թվականներին է գոյություն ունեցել Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1082–1117 թթ. | 3) 1072–1117 թթ. |
| 2) 1082–1090 թթ. | 4) 1072–1090 թթ. |

**94. Ո՞ր թվականներին է գոյություն ունեցել Գող Վասիլի իշխանությունը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1082–1117 թթ. | 3) 1082–1090 թթ. |
| 2) 1072–1090 թթ. | 4) 1072–1117 թթ. |

**95. Երբ է հիմնադրվել Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1065 թ. | 2) 1072 թ. | 3) 1080 թ. | 4) 1082 թ. |
|------------|------------|------------|------------|

**96. Երբ խաչակիրները գրավեցին Եդեսիան.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1097 թ. | 2) 1098 թ. | 3) 1099 թ. | 4) 1100 թ. |
|------------|------------|------------|------------|

**97. Երբ է ստեղծվել Անտիոքի իշխանությունը.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1096 թ. | 3) 1100 թ. |
| 2) 1098 թ. | 4) 1097 թ. |

**98. Երբ է իշխել Թորոս I-ը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1095–1100 թթ. | 3) 1129–1137 թթ. |
| 2) 1145–1169 թթ. | 4) 1100–1129 թթ. |

**99. Երբ է գահակալել Լևոն I իշխանը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1137–1145 թթ. | 3) 1129–1137 թթ. |
| 2) 1145–1169 թթ. | 4) 1145–1169 թթ. |

**100. Երբ է գահակալել Թորոս II-ը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1100–1129 թթ. | 3) 1145–1169 թթ. |
| 2) 1169–1175 թթ. | 4) 1129–1137 թթ. |

**101. Երբ է գահակալել Սլեհը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1169–1175 թթ. | 3) 1175–1187 թթ. |
| 2) 1145–1169 թթ. | 4) 1187–1198 թթ. |

**102. Երբ է գահակալել Ստեփանեի որդի Ռուբեն իշխանը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1169–1175 թթ. | 3) 1187–1198 թթ. |
| 2) 1145–1169 թթ. | 4) 1175–1187 թթ. |

**103. Երբ է Լևոն II Ռուբինյանը օծվել հայոց թագավոր.**

- |                          |                          |
|--------------------------|--------------------------|
| 1) 1187 թ. հունվարի 6-ին | 3) 1198 թ. հունվարի 6-ին |
| 2) 1189 թ. հունվարի 6-ին | 4) 1194 թ. հունվարի 6-ին |

**104. Երբ է Լևոն Մեծագործը գրավել Լամբրոնը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1198 թ. | 2) 1202 թ. | 3) 1216 թ. | 4) 1219 թ. |
|------------|------------|------------|------------|

**105. Երբ է Լևոն Մեծագործը գրավել Անտիոքը և իշխանությունը հանձնել Ռայմոնդ-Ռուբենին.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1219 թ. | 2) 1202 թ. | 3) 1198 թ. | 4) 1216 թ. |
|------------|------------|------------|------------|

**106. Միրիոկեֆալոնի ճակատամարտը տեղի է ունեցել՝**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1176 թ. | 3) 1184 թ. |
| 2) 1178 թ. | 4) 1185 թ. |

**107. Որո՞նք են սուլթան Սալահ ադ Դինի կառավարման տարիները.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1169–1190 թթ. | 3) 1174–1198 թթ. |
| 2) 1169–1193 թթ. | 4) 1178–1192 թթ. |

**108. Հայոց կաթողիկոսությունը Հռոմկա փոխադրվեց՝**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1151 թ. | 2) 1153 թ. | 3) 1154 թ. | 4) 1155 թ. |
|------------|------------|------------|------------|

**109. Երբ է Ջաբելը հռչակվել Կիլիկիայի թագաժառանգ.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1216 թ. | 2) 1219 թ. | 3) 1222 թ. | 4) 1217 թ. |
|------------|------------|------------|------------|

**110. Երբ է գահակալել Հերթում I-ը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 1222–1270 թթ. | 3) 1226–1270 թթ. |
| 3) 1219–1226 թթ. | 4) 1270–1289 թթ. |

**111. Երբ է տեղի ունեցել Մառիի ճակատամարտը.**

- |                           |                          |
|---------------------------|--------------------------|
| 1) 1266 թ. ապրիլի 16-ին   | 3) 1266 թ. հունվարի 6-ին |
| 2) 1266 թ. օգոստոսի 23-ին | 4) 1266 թ. մայիսի 31-ին  |

**112. Երբ է գահակալել Լևոն II Հերթումյանը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 2) 120–140 հազար զինվոր | 4) 20–40 հազար զինվոր  |

**180. Ովքեր էին գլխավորում Հայոց կաթողիկոսական աթոռը Ս. Էջմիածնում վերահաստատելու գործը.**

- 1) Թովմա Մեծոփեցին և Կիրակոս Վիրապեցին
- 2) Հովհաննես Հերմոնացին և Թովմա Մեծոփեցին
- 3) Հովհաննես Հերմոնացին և Կիրակոս Վիրապեցին
- 4) Թովմա Մեծոփեցին և Գրիգոր կաթողիկոսը

**181. Մերձավոր Արևելքի հայության կրոնական ու աշխարհիկ կյանքը կարգավորում էր՝**

- |                                      |                                |
|--------------------------------------|--------------------------------|
| 1) Սսի կաթողիկոսությունը             | 3) Գանձասարի կաթողիկոսությունը |
| 2) Երուսաղեմի հայոց պատրիարքությունը | 4) Աղվանից եկեղեցին            |

**182. Որքան հայ է գաղթեցվել շահ Աբասի հրամանով.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) մոտ 400 հազար | 3) մոտ 600 հազար |
| 2) մոտ 300 հազար | 4) մոտ 200 հազար |

**183. Որտեղ է հիմնադրվել Օսմանյան պետությունը.**

- |                                |                           |
|--------------------------------|---------------------------|
| 1) Փոքր Ասիայի հարավում        | 3) Փոքր Ասիայի հյուսիսում |
| 2) Փոքր Ասիայի արևմտյան մասում | 4) Միջին Ասիայի հարավում  |

**184. Ո՞ւմ օրոք է հայոց թագավոր օծվել Սմբատ Արծրունին.**

- |                             |                  |
|-----------------------------|------------------|
| 1) Իսքանդար Կարա–կոյունլուի | 3) Կարա–Յուսուֆի |
| 2) Ջահանշահի                | 4) Լենկ Թեմուրի  |

**185. Ո՞վ է հրավիրել 1547 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը.**

- |                          |                         |
|--------------------------|-------------------------|
| 1) Միքայել Սեբաստացին    | 3) Ջաքարիա Աղթամարցին   |
| 2) Ստեփաննոս Սալմաստեցին | 4) Ստեփաննոս Աղթամարցին |

**186. Ո՞վ էր գլխավորում 1562 թ. Վենետիկ մեկնած պատվիրակությունը.**

- |                         |                          |
|-------------------------|--------------------------|
| 1) Ստեփաննոս Աղթամարցին | 3) Աբգար Թոխաթեցին       |
| 2) Միքայել Սեբաստացին   | 4) Ստեփաննոս Սալմաստեցին |

**187. Ո՞ր գավառում քրիստոնեություն քարոզելիս Մաշտոցը մտադրվեց գտնելու կամ ստեղծելու հայերենի նշանագրերը.**

- |          |             |
|----------|-------------|
| 1) Տարոն | 3) Նախիջևան |
| 2) Խաչեն | 4) Գողթն    |

**188. Ո՞վ է հղկել, գեղագրել Մաշտոցի ստեղծած նշանագրերը.**

- |                 |                      |
|-----------------|----------------------|
| 1) Հռոփանոսը    | 3) Կորյունը          |
| 2) Փիլոստրատոսը | 4) Դանիել եպիսկոպոսը |

**189. Ո՞րն է Սուրբ Գրքից հայերեն թարգմանված և գրված առաջին նախադասությունը.**

- 1) «Լաւ է կոյր աջօք, քան կոյր մտօք»:
- 2) «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:
- 3) «Ո՞ւր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»:
- 4) «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

**190. Հայաստանի ո՞ր քաղաքում է հիմնադրվել առաջին բարձրագույն դպրոցը.**

- |                  |              |
|------------------|--------------|
| 1) Արտաշատում    | 3) Ամարասում |
| 2) Վաղարշապատում | 4) Ուռհայում |

**191. Ո՞ր կայսրն է Մաշտոցին թույլատրել Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացել.**

- |                  |                     |
|------------------|---------------------|
| 1) Թեոդոսիոս I-ը | 3) Թեոդոսիոս II-ը   |
| 2) Վաղեսը        | 4) Հուստինիանոս I-ը |

**192. Մեսրոպ Մաշտոցը ո՞ր քաղաքում հանդիպեց հունարեն գրչության արվեստի խորագիտակ Հռոփանոսին.**

- |            |           |
|------------|-----------|
| 1) Սամոսատ | 3) Տարսոն |
| 2) Եղեսիա  | 4) Ամիդ   |

**193. Ո՞ր պատմիչի աշխատությունն է նվիրված Հայաստանում քրիստոնեության տարածմանն ու պետականորեն ընդունմանը.**

- |                |                    |
|----------------|--------------------|
| 1) Կորյուն     | 3) Փավստոս Բուզանդ |
| 2) Ագաթանգեղոս | 4) Ղազար Փարպեցի   |

**194. Ո՞ր պատմիչն է առաջին անգամ շարադրել հայոց ամբողջական պատմությունը.**

- |                     |                   |
|---------------------|-------------------|
| 1) Մովսես Խորենացին | 3) Եղիշեն         |
| 2) Փավստոս Բուզանդը | 4) Ղազար Փարպեցին |

**195. Ո՞ր պատմիչի աշխատությունն է նվիրված Վարդանանց ապստամբությանը.**

- |            |                |          |            |
|------------|----------------|----------|------------|
| 1) Բուզանդ | 2) Ագաթանգեղոս | 3) Եղիշե | 4) Կորյուն |
|------------|----------------|----------|------------|

**196. Ո՞ւմ մեկենասությամբ է գրվել Խորենացու կոթողային աշխատությունը.**

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Սմբատ Բագրատունու | 3) Վահան Մամիկոնյանի |
| 2) Սահակ Պարթևի      | 4) Սահակ Բագրատունու |

**197. Ո՞ր պատմիչին է շարունակել Ղազար Փարպեցին.**

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Մովսես Խորենացուն | 3) Փավստոս Բուզանդին |
| 2) Եղիշեին           | 4) Ագաթանգեղոսին     |

**198. Քանի գրքերից է բաղկացած Պատմահոր երկը.**

- |      |      |      |      |
|------|------|------|------|
| 1) 2 | 2) 4 | 3) 3 | 4) 5 |
|------|------|------|------|

**199. Ո՞ր պատմիչի աշխատությունն է VI-VII դդ. իրադարձությունների մասին կարևոր սկզբնաղբյուր.**

- |                    |                        |
|--------------------|------------------------|
| 1) Մովսես Խորենացի | 3) Ղազար Փարպեցի       |
| 2) Սեբեոս          | 4) Մովսես Կաղանկատվացի |

**200. Ո՞ր եկեղեցական ժողովն է սահմանել Հայոց Մեծ թվականը.**

- |             |               |
|-------------|---------------|
| 1) Աշտիշատի | 3) Դվինի      |
| 3) Աղունի   | 4) Շիրակավանի |

**201. Առաջին հայկական մանրանկարներից քանիսն են պահպանվել.**

- |      |      |      |      |
|------|------|------|------|
| 1) 6 | 2) 2 | 3) 4 | 4) 7 |
|------|------|------|------|

**202. Որքան էր տևում ուսումնառությունը վարդապետարանում.**

- |             |               |
|-------------|---------------|
| 1) 4-5 տարի | 3) 8-10 տարի  |
| 2) 7-8 տարի | 4) 10-12 տարի |

**203. Թվարկված գործիչներից ո՞վ գիտամանկավարժական գործունեություն չի ծավալել Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում.**

- |                       |                   |
|-----------------------|-------------------|
| 1) Հովհաննես Երզնկացի | 3) Վարդան Արևելցի |
| 2) Դավիթ Ալավկատորի   | 4) Գրիգոր Տաթևացի |

**204. Ո՞վ էր Անիի վարդապետարանի ուսուցչապետը, որ մշակել էր վարդապետական կրթության նոր ծրագիր.**

- |                         |                      |
|-------------------------|----------------------|
| 1) Սամուել Անեցի        | 3) Մխիթար Գոշը       |
| 2) Հովհաննես Իմաստասերը | 4) Գրիգոր Մագիստրոսը |

**205. Ո՞ւմ ուսուցչապետության օրոք է ծաղկում ապրել Նոր Գետիկի վարդապետարանը.**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Անանիա Նարեկացու | 3) Հովհաննես Իմաստասերի |
| 2) Եսայի Նչեցու     | 4) Մխիթար Գոշի          |

**206. Ո՞ւմ ընդունապետության օրոք է հայտնի դառնում Գլաձորի համալսարանը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) Ներսես Մշեցու   | 3) Եսայի Նչեցու    |
| 2) Վահրամ Բաբունու | 4) Գրիգոր Տաթևացու |

**207. Ո՞ւմ անունն էր կրում Սսի համալսարանը.**

- |                     |                       |
|---------------------|-----------------------|
| 1) Վահրամ Բաբունու  | 3) Լևոն Մեծագործի     |
| 2) Ներսես Շնորհալու | 4) Ներսես Լամբրոնացու |

**208. Թվարկված դպրոցներից ո՞րը չէր գտնվում Կիլիկիայում.**

- |            |          |
|------------|----------|
| 1) Ծործոր  | 3) Ակներ |
| 2) Դրազարկ | 4) Սկևռա |

**209. Շուրջ քանի՞ տարի է գոյատևել Սկևռայի դպրոցը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 50 տարի  | 3) 100 տարի |
| 2) 300 տարի | 4) 200 տարի |

**210. Ո՞ւմ ռաբունապետության տարիներին Աղբերց վանքի դպրոցը հայտնի դարձավ Գլաձորի համալսարան անունով.**

- |                  |                     |
|------------------|---------------------|
| 1) Եսայի Նչեցու  | 3) Մխիթար Գոշի      |
| 2) Ներսես Մշեցու | 4) Հովհան Որոտնեցու |

**211. Ո՞ր պատմիչն է մանրամասն շարադրել Սմբատ I-ի և Աշոտ Երկաթի ժամանակաշրջանի պատմությունը.**

- |                                |                              |
|--------------------------------|------------------------------|
| 1) Արիստակես Լաստիվերցին       | 3) Հովհաննես Դրասխանակերտցին |
| 2) Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) | 4) Վարդան Արևելցի            |

**212. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում 1000–1071 թթ. իրադարձությունները.**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) Մովսես Կաղանկատվացի  | 3) Հովհաննես Դրասխանակերտցի |
| 2) Արիստակես Լաստիվերցի | 4) Հովհան Մամիկոնյան        |

**213. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում հնագույն շրջանից մինչև 1004 թ. ընկած ժամանակաշրջանի պատմությունը.**

- |                             |                         |
|-----------------------------|-------------------------|
| 1) Ստեփանոս Տարոնեցի        | 3) Վարդան Արևելցի       |
| 2) Հովհաննես Դրասխանակերտցի | 4) Արիստակես Լաստիվերցի |

**214. Ո՞վ է Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության շարադրանքի ժանրի հիմնադիրը հայ պատմագրության մեջ.**

- |                         |                    |
|-------------------------|--------------------|
| 1) Ստեփանոս Օրբելյանը   | 3) Թովմա Արծրունին |
| 2) Մովսես Կաղանկատվացին | 4) Սամուել Անեցին  |

**215. Ո՞վ է հայ պատմագրության մեջ ժամանակագրության ժանրի հիմնադիրը.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Սմբատ Գունդստաբլը | 3) Սամուել Անեցին     |
| 2) Ասողիկը           | 4) Մատթեոս Ուռհայեցին |

**216. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ներառում 951–1272 թթ. իրադարձությունները.**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Մատթեոս Ուռհայեցի | 3) Սմբատ Գունդստաբլ |
| 2) Վարդան Արևելցի    | 4) Սամուել Անեցի    |

**217. Քանի բաժիններից է բաղկացած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Տիեզերական պատմություն»-ը.**

- 1) 1                    2) 3                    3) 5                    4) 7

**218. Նշված պատմագիրներից հայոց կաթողիկոս է եղել՝**

- 1) Վարդան Արևելցին  
2) Կիրակոս Գանձակեցին  
3) Արիստակես Լաստիվերցին  
4) Հովհաննես Դրասխանակերտցին

**219. Ո՞վ է հայկական առաջին դատաստանագրքի ստեղծողը.**

- 1) Սմբատ Գունդստաբլը                    3) Մխիթար Գոշը  
2) Դավիթ Ալավկատրոդին                4) Ներսես Շնորհալին

**220. Ո՞վ է հունարենից թարգմանել Էվկլիդեսի «Տարերք երկրաչափության» աշխատությունը.**

- 1) Անանիա Նարեկացին                    3) Գրիգոր Մագիստրոս Պահլավունին  
2) Հովհաննես Սարկավազը                4) Հովհաննես Երզնկացին

**221. Թվարկվածներից որը Գրիգոր Տաթևացու աշխատություններից չէ.**

- 1) «Ամռան հատոր»                        3) «Ձմռան հատոր»  
2) «Թուղթ ընդհանրական»            4) «Գիրք հարցմանց»

**222. Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հասարակության կյանքը կարգավորելուն ծառայեց շուրջ՝**

- 1) 200 տարի                                    3) 700 տարի  
2) 500 տարի                                    4) 3 դար

**223. Ո՞ւմ նախագծով է կառուցվել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին.**

- 1) Տրդատի                    2) Պողոսի                    3) Մանվելի                    4) Մոմիկի

**224. Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու որմնանկարներում ովքեր են պատկերված.**

- 1) Տրդատ III-ը և Սբ Գրիգոր Լուսավորիչը  
2) Աշոտ III Ողորմածը և Խոսրովանույշ թագուհին  
3) Գագիկ I-ը և Կատրամիդե թագուհին  
4) Գագիկ II-ը և Սբ Գրիգոր Լուսավորիչը

**225. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում ո՞վ է պատկերված.**

- 1) Աշոտ Ողորմածը                        3) Գագիկ II-ը  
2) Գագիկ Արծրունին                    4) Աշոտ Երկաթը

**226. Ո՞վ է հայ առաջին տպագրիչը.**

- 1) Աբգար դպիր Թոխատեցին            3) Խաչատուր Կեսարացին  
2) Հովհաննես Քարմատանենցը        4) Հակոբ Մեղապարտը

**227. Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը.**

- |                  |                 |
|------------------|-----------------|
| 1) «Ուրբաթագիրք» | 3) «Տօնացոյց»   |
| 2) «Տաղարան»     | 4) «Սաղմոսարան» |

**228. Ո՞վ էր Դրիմի Անտոնի անապատի դպրոցի ուսուցչապետը.**

- |                       |                         |
|-----------------------|-------------------------|
| 1) Հովհաննես Մեծփեցին | 3) Հովհաննես Հերմոնացին |
| 2) Գրիգոր Խլաթեցին    | 4) Սարգիս Փիլիսոփան     |

**229. Որտե՞ղ է գործել Հերմոնի դպրոցը.**

- |                   |               |
|-------------------|---------------|
| 1) Սյունիքում     | 3) Գուգարքում |
| 2) Վասպուրականում | 4) Այրարատում |

**230. Ո՞վ է հիմնադրել Հովհաննավանքի դպրոցը.**

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| 1) Ներսես Մոկացին  | 3) Գրիգոր Տաթևացին  |
| 2) Մովսես Տաթևացին | 4) Վարդան Բաղիշեցին |

**231. Ո՞վ էր հիմնադրել Նոր Ջուղայի դպրոցը.**

- |                       |                         |
|-----------------------|-------------------------|
| 1) Խաչատուր Կեսարացին | 3) Հակոբ Ջուղայեցին     |
| 2) Կոստանդ Ջուղայեցին | 4) Աղեքսանդր Ջուղայեցին |

**232. Թվարկված պատմագիրներից ո՞վ է ուսանել Հովհաննավանքի դպրոցում.**

- |                              |                       |
|------------------------------|-----------------------|
| 1) Հովհաննես Դրասխանակերտցին | 3) Զաքարիա Քանաքեռցին |
| 2) Հովհաննես Մեծփեցին        | 4) Գրիգոր Խլաթեցին    |

**233. Որտեղից էր Ներսես Մոկացին տեղափոխվել Հարանց անապատի դպրոց.**

- |                            |                                 |
|----------------------------|---------------------------------|
| 1) Բաղեշի Ամիրդոլու վանքից | 3) Գլաձորի համալսարանից         |
| 2) Տաթևի համալսարանից      | 4) Դրիմի Անտոնի անապատի դպրոցից |

**234. Թվարկվածներից ո՞վ է դասավանդել Հարանց անապատի դպրոցում.**

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1) Անանիա Մոկացին  | 3) Ներսես Մոկացին     |
| 2) Գրիգոր Տաթևացին | 4) Հովհաննես Մեծփեցին |

**235. Ո՞վ է «Համառօտ լուծումն Առաքինութեանցն Արիստոտելի» աշխատության հեղինակը.**

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1) Աբգար Թոխաթեցին | 3) Խաչատուր Կեսարացին |
| 2) Գրիգոր Խլաթեցին | 4) Գրիգոր Տաթևացին    |

**236. «Խառնայինթուր տումարի. գեղեցիկ ու պիտանի» տոմարացույցի երկրորդ նկարում ի՞նչ է պատկերված.**

- 1) հայերեն տպատառերը ձեռքին՝ Աբգար դպիրը և իր որդին՝ Հռոմի պապի և Վենետիկի դոժի առջև
- 2) Աբգարը՝ կանգնած Վենետիկի դոժի և խորհրդականների առջև ընդունելության ժամանակ
- 3) Աբգարը Էջմիածնի Մայր տաճարում
- 4) Աբգարը «Խորհրդավոր ընթրիք» կտավի առջև



**237. Որտե՞ղ է տպագրվել «Խառնային» տոմարի. գեղեցիկ ու պիտանի» տոմարացույցը.**

- |                  |               |
|------------------|---------------|
| 1) Վիեննայում    | 3) Վենետիկում |
| 2) Ֆլորենցիայում | 4) Լվովում    |

**238. Ո՞ր հայ պատմիչի աշխատությունն է տպագրվել հեղինակի կենդանության օրոք.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Գրիգոր Դարանաղցի | 3) Առաքել Դավրիժեցի |
| 2) Հակոբ Կարնեցի    | 4) Զաքարիա Քանաքեցի |

**239. Ո՞ր պատմիչն է մանրամասն նկարագրել Լենկ Թեմուրի և նրա հաջորդների օրոք Հայաստանում և հարակից երկրներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Գրիգոր Դարանաղցի | 3) Առաքել Դավրիժեցի |
| 2) Թովմա Մեծոփեցի   | 4) Զաքարիա Քանաքեցի |

**240. Ո՞վ է իր աշխատության մեջ կարևոր տեղեկություններ հաղորդել շահ Աբաս I-ի, նրա հաջորդների, հայերի բռնազաղթի և թուրք-պարսկական պատերազմների մասին.**

- |                      |                    |
|----------------------|--------------------|
| 1) Առաքել Դավրիժեցին | 3) Թովմա Մեծոփեցին |
| 2) Գրիգոր Դարանաղցին | 4) Սիմեոն Լեհացին  |

**241. XVII դարի պատմագիրներից ո՞վ է իր «Պատմություն»-ը սկսել Արշակունիների թագավորության հաստատումից.**

- |                               |                      |
|-------------------------------|----------------------|
| 1) Զաքարիա Քանաքեցին          | 3) Թովմա Մեծոփեցին   |
| 2) Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը | 4) Առաքել Դավրիժեցին |

**242. Նոր Զուլայի արվեստագետներից ո՞վ է հաստատվել Մոսկվայում և մեծ դեր կատարել ռուսական արվեստի զարգացման գործում.**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Հովհաննես Միրաքը  | 3) Բոգդան Սալթանովը |
| 2) Հովհաննես Մրքուզը | 4) Թորոս Ռոսլինը    |

**243. XVII դարի առաջին տասնամյակներին ուղեգրական տպավորությունների տեսքով մեծարժեք աշխատություն է շարադրել՝**

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1) Հակոբ Կարնեցին  | 3) Առաքել Դավրիժեցին |
| 2) Թովմա Մեծոփեցին | 4) Սիմեոն Լեհացին    |

**244. Ովքե՞ր են զոհվել Ճարմանայի ճակատամարտում.**

- 1) Վահան Մամիկոնյանը, Վարդ Պատրիկը
- 2) Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնյանը
- 3) Ներսես Կամսարականը, Վասակ Մամիկոնյանը
- 4) Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնյանը

**245. Ո՞ր գավառում էր Բագավանի տաճարը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Դարանաղի | 3) Արտազ    |
| 2) Եկեղյաց  | 4) Բագրևանդ |

**246. Ո՞ր գետում է Լուսավորիչը մկրտել հայոց արքունիքին, զորքին ու ժողովրդի հոծ բազմությանը.**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Մեղրագետ | 3) Արաքս   |
| 2) Ախուրյան | 4) Արածանի |

**247. Որտեղ էր Տրդատը նկատել, որ Գրիգորը չի մասնակցել զոհեր մատուցելու արարողությանը.**

- 1) Եկեղյաց գավառում՝ Անահիտ աստվածուհու տաճարում
- 2) Դերջան գավառում՝ Արամազդ աստծո տաճարում
- 3) Թիլ ավանում՝ Նանեի տաճարում
- 4) Աշտիշատում՝ Վահագնի պաշտամունքի գլխավոր կենտրոնում

**248. Որտեղ է գտնվում Քարքե լեռը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Կոգովիտում | 3) Աշտիշատում |
| 2) Տարոնում   | 4) Արտազում   |

**249. Որքան էր Արշակունյաց Հայաստանի կանոնավոր բանակի թվակազմը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 60–70 հազար   | 3) 130–150 հազար |
| 2) 100–120 հազար | 4) 160–180 հազար |

**250. Մեծ Հայքի ավատատիրական աստիճանակարգում ինչ սկզբունք էր գործում.**

- 1) Իմ վասալի վասալը իմ թշնամին է:
- 2) Իմ վասալի վասալը իմ վասալը չէ:
- 3) Իմ վասալի վասալը իմ վասալն է:
- 4) Իմ վասալի թշնամին իմ բարեկամն է:

**251. Որտեղ էր ճգնավորի կյանքով ապրել Սուրբ Գրիգորը.**

- 1) Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում
- 2) Սեպուհ լեռան Մանյա Այրք քարայրում
- 3) Քարքե լեռան մոտակայքում
- 4) Հայոց Արևելից կողմերում

**252. Աշտիշատի առաջին ժողովը ո՞ր եկեղեցում է հրավիրվել.**

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) Ս. Գայանե | 3) Ս. Կարապետ       |
| 2) Մայր      | 4) Ս. Երրորդություն |

**253. Որտեղ են հուղարկավորել Սահակ Պարթևին.**

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) Օշականում  | 3) Արտաշատում    |
| 2) Աշտիշատում | 4) Վաղարշապատում |

**254. Հայոց իշխանի պաշտոնում ո՞վ է հաջորդել Ներսեհ Կամսարականին.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Աշոտ Բագրատունին  | 3) Մանվել Մամիկոնյանը |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Գրիգոր Մամիկոնյանը |

**255. Որտե՞ղ է Աշոտ I Բագրատունին օծվել հայոց թագավոր.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Դվինում    | 3) Տարսնում   |
| 2) Բագավանում | 4) Բագարանում |

**256. Ո՞ր քաղաքի պատճառով սրվեցին հակասությունները Բագրատունիների և Արծրունիների միջև.**

- |             |          |
|-------------|----------|
| 1) Բագարան  | 3) Արճեշ |
| 2) Նախճավան | 4) Դվին  |

**257. Որքա՞ն էր Անիի Բագրատունյաց թագավորության բանակի թիվը պատերազմների ժամանակ.**

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1) 60–70 հազար  | 3) 120–130 հազար |
| 2) 90–100 հազար | 4) 80–90 հազար   |

**258. Բագրատունի ո՞ր արքայի օրոք է առաջացել Տաշիր–Ձորագետի թագավորությունը.**

- |            |             |             |            |
|------------|-------------|-------------|------------|
| 1) Սմբատ I | 2) Աշոտ III | 3) Սմբատ II | 4) Գագիկ I |
|------------|-------------|-------------|------------|

**259. Ո՞րն էր Շահ–Արմենների ամիրայության կենտրոնը.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Գանձակը | 3) Դվինը      |
| 2) Խլաթը   | 4) Մանազկերտը |

**260. Ո՞ր բերդաքաղաքն է նստավայր դարձրել իշխան Կոստանդինը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Կոռոմոզը | 3) Վահկա    |
| 2) Լամբրոն  | 4) Անավարզա |

**261. Ո՞ւմ իշխանության տարիներին Վահկան դարձավ Ռուբինյան իշխանության կենտրոն.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Ռուբենի | 3) Կոստանդինի |
| 2) Մլեհի   | 4) Թորոսի     |

**262. Կիլիկյան ո՞ր գահակալն է լուծել Գագիկ II Բագրատունու սպանության վրեժը.**

- |         |             |           |            |
|---------|-------------|-----------|------------|
| 1) Մլեհ | 2) Թորոս II | 3) Լևոն I | 4) Թորոս I |
|---------|-------------|-----------|------------|

**263. Ո՞ր հայ պատմիչն է վաստակել «Մեծն Քերթող», «Քերթողահայր» պատվանունները.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) Մովսես Խորենացի | 3) Եղիշե           |
| 2) Ագաթանգեղոս     | 4) Փավստոս Բուզանդ |

**264. Թվարկված իր երկու հանճարեղ այրերի գրչին է պատկանում «Աշխարհացոյց» երկը.**

- 1) Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ
- 2) Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի
- 3) Անանիա Շիրակացի, Եզնիկ Կողբացի
- 4) Անանիա Շիրակացի, Դավիթ Անհաղթ

**265. Ինչպե՞ս է կոչվում Պատմահոր «Պատմութիւն Հայոց» աշխատության առաջին գիրքը.**

- 1) «Հայոց մեծերի ծննդաբանությունը»
- 2) «Հայոց նախնիների նախապատմությունը»
- 3) «Հայոց մեծերի ծագումնաբանությունը»
- 4) «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց»

**266. Ո՞ր վարդապետարանում է կրթություն ստացել Կիրակոս Գանձակեցին.**

- 1) Նոր Գետիկ
- 2) Հաղպատ
- 3) Գլաձոր
- 4) Սանահին

**267. Թվարկված դպրոցներից ի՞րն է գործել Արտազ գավառում.**

- 1) Սկևռայի դպրոցը
- 2) Հռոմկլայի դպրոցը
- 3) Ծործորի դպրոցը
- 4) Մեծքարի դպրոցը

**268. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում «անսկիզբ» ժամանակներից մինչև 1267 թ. ընկած ժամանակաշրջանի պատմությունը.**

- 1) Ստեփանոս Տարոնեցի
- 2) Արիստակես Լաստիվերցի
- 3) Վարդան Արևելցի
- 4) Կիրակոս Գանձակեցի

**269. Ո՞վ էր 564 թ. Հայաստանում նշանակված մարզպանը.**

- 1) Ատրվշնասպը
- 2) Սուրենը
- 3) Հազարավուխտը
- 4) Նիխորը

**270. Սարգիս Զաքարյանից հետո ամիրսպասալարի պաշտոնը ստանձնեց՝**

- 1) Զաքարե Զաքարյանը
- 2) Իվանե Զաքարյանը
- 3) Աբասը
- 4) Վահրամ Զաքարյանը

**271. Թվարկված պատմագիրներից ո՞վ է կրել «Ասողիկ» մականունը.**

- 1) Սամուել Անեցին
- 2) Արիստակես Լաստիվերցին
- 3) Ստեփանոս Տարոնեցին
- 4) Կիրակոս Գանձակեցին

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

**1. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«...երթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Ամմիանոս | 3) Բուզանդ  |
| 2) Խորենացի | 4) Ապպիանոս |

**2. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ փերերիդ վրա փեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը... »:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Ապպիանոս | 3) Խորենացի |
| 2) Բուզանդ  | 4) Ամմիանոս |

**3. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը**

«Այժմ, երբ ինձ փեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- |             |            |
|-------------|------------|
| 1) Բուզանդ  | 3) Սեբեոս  |
| 2) Խորենացի | 4) Փարպեցի |

**4. Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

«Այժմ, երբ ինձ փեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- |               |                      |
|---------------|----------------------|
| 1) Արշակ II   | 3) Մուշեղ Մամիկոնյան |
| 2) Խոսրով III | 4) Վասակ Մամիկոնյան  |

**5. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«... [վերականգնում է] հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսինն էր մեծ գետ Կուրը»:

- |            |             |
|------------|-------------|
| 1) Սեբեոս  | 3) Բուզանդ  |
| 2) Փարպեցի | 4) Խորենացի |

**6. Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:

- |                      |                        |
|----------------------|------------------------|
| 1) Աշոտ Բագրատունին  | 3) Բագարատ Բագրատունին |
| 2) Սահակ Բագրատունին | 4) Սմբատ Բագրատունին   |

**7. Հայոց ո՞ր արքան է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**

«... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, Եր փուր, Ուռհա (Եղեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուսփի, եթե չես ուզում, որ խոռովություն ծագի մեր մեջ, Եր փուր»:

- 1) Արշակ II                      2) Տիրան                      3) Խոսրով III                      4) Պապ

**8. Հայոց արքան ո՞ւմ է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**

«... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, Եր փուր, Ուռհա (Եղեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուսփի, եթե չես ուզում, որ խոռովություն ծագի մեր մեջ, Եր փուր»:

- 1) Շապուհ II                      3) Թեոդոսիոս I  
2) Շապուհ III                      4) Վաղես

**9. Լրացնել բաց թողնված անձնանունը.**

«...Բայց մինչև ես . . . էի՝ հսկա էի, մի ուրս հենում էի մի լեռան վրա, իսկ մյուսն էլ՝ մյուս լեռան ... Այդ երկու լեռներից մեկը դու էիր, իսկ մյուսն էլ՝ հունաց թագավորը»:

- 1) Մուշեղ                              3) Վաչե  
2) Վասակ                              4) Վարդան

**10. Հայոց ո՞ր սպարապետն է ասել հետևյալ խոսքերը.**

«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրփինք թափելու... հատուցումն այս եղավ: Բայց այս մահը երանի՜ թե ձիու վրա ինձ հասներ»:

- 1) Վասակ Մամիկոնյան                      3) Մանվել Մամիկոնյան  
2) Մուշեղ Մամիկոնյան                      4) Վահան Մամիկոնյան

**11. Հայոց ո՞ր թագավորի գահընկեցությանը դեմ լինելու առիթով է կաթողիկոսն ասել հետևյալ խոսքերը.**

«Քավ լիցի՜ իմ մուրրված ոչխարը մատնեմ գայլերին»:

- 1) Խոսրով IV                              3) Պապ  
2) Վարազդատ                              4) Արտաշես Արշակունի

**12. Ո՞ր իրադարձությունից հետո ստեղծված իրադրությունն է բնութագրել պատմիչը.**

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուծին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- 1) Պապ թագավորի դավադիր սպանությունը  
2) Մուշեղ Մամիկոնյանի դավադիր սպանությունը  
3) Հայաստանի առաջին բաժանումը  
4) Արտաշես Արշակունու գահազրկումը և արգելափակումը

13. Ո՞ր պատմիչն է, Սահակ Պարթևի գործունեությունը բարձր գնահատելով, գրել, որ նա չդադարեց հոգևոր կաթով սնուցանել «եկեղեցու մանուկներին Մեսրոպի հետ միասին, որին հաստատեց Վաղարշապատ քաղաքի կաթողիկե եկեղեցում, իսկ ինքը մնաց Բագրևանդ գավառում».

- |             |            |
|-------------|------------|
| 1) Բուզանդ  | 3) Եղիշե   |
| 2) Խորենացի | 4) Կորյուն |

14. Ո՞վ է թևավոր դարձած այս խոսքերի հեղինակը.

*«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:*

- |            |             |
|------------|-------------|
| 1) Կորյուն | 3) Եղիշե    |
| 2) Փարպեցի | 4) Խորենացի |

15. «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու ու քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»: Ո՞ր թվականին է կայացվել այս վճիռը.

- |           |           |
|-----------|-----------|
| 1) 354 թ. | 3) 449 թ. |
| 2) 444 թ. | 4) 481 թ. |

16. Ո՞ր ապստամբության մասնակիցներն են ընդունել հետևյալ վճիռը.

*«Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:*

- |                |                |                |           |
|----------------|----------------|----------------|-----------|
| 1) 774–775 թթ. | 2) 481–484 թթ. | 3) 450–451 թթ. | 4) 572 թ. |
|----------------|----------------|----------------|-----------|

17. Պարսից դր արքան է ասել հետևյալ խոսքերը Վահան Մամիկոնյանին.

*«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը, քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:*

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Հազկերտ II      | 3) Վուամ IV       |
| 2) Վաղարշ Սասանյան | 4) Պերոզ Սասանյան |

18. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

*«... եղևավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:*

- |                        |                    |
|------------------------|--------------------|
| 1) Կորյուն             | 3) Մովսես Խորենացի |
| 2) Մովսես Կաղանկատվացի | 4) Եղիշե           |

19. Բյուզանդական դր կայսեր նամակից է մեջբերված հատվածը.

*«Անհնազանդ մի ազգ են... մեր միջև...: Բայց եկ... ես իմս (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ զորականներին) ժողովեմ և Թրակիա ուղարկեմ, և դու քոնը (այսինքն՝ Արևելյան Հայաստանի հայ զորականներին) ժողովիր և հրամայիր Արևելք տանել: Քանզի, եթե մեռնեն, մեր թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք կապրենք խաղաղությամբ: Քանզի, եթե նրանք իրենց երկրում մնան, մեզ հանգիստ չի լինի»:*

- |                 |                   |
|-----------------|-------------------|
| 1) Կոստանդին II | 3) Հուստինիանոս I |
| 2) Թեոդոսիոս I  | 4) Մորիկ          |

**20. Ըստ պատմիչի՝ ո՞ր ճակատամարտի մասնակիցներն են միմյանց քաջալերել հետևյալ խոսքերով..**

*«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:*

- |                 |              |
|-----------------|--------------|
| 1) Արճեշի       | 3) Արյան լճի |
| 2) Վարդանակերտի | 4) Արձնիի    |

**21. Ո՞ւմ է պատկանում ստորև բերված վկայությունը. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:**

- |             |                        |
|-------------|------------------------|
| 1) Սեբեոսին | 3) Կիրակոս Գանձակեցուն |
| 2) Ղևոնդին  | 4) Մատթեոս Ուռհայեցուն |

**22. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

*«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փռոխոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառներ Հայաստանին»:*

- |                             |                   |
|-----------------------------|-------------------|
| 1) Թովմա Արծրունի           | 3) Ասողիկ         |
| 2) Հովհաննես Դրասխանակերտցի | 4) Վարդան Արևելցի |

**23. Հայոց ո՞ր արքան էր մեջբերման մեջ հիշատակված արքայի եղբայրը.**

*«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փռոխոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառներ Հայաստանին»:*

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) Կյուրիկե I | 3) Աշոտ III      |
| 2) Սմբատ II   | 4) Դավիթ Անհողին |

**24. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

*«Հայկական գործվածքներն այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»:*

- |           |            |              |            |
|-----------|------------|--------------|------------|
| 1) Տաբարի | 2) Յակուբի | 3) Բալազուրի | 4) Մասուդի |
|-----------|------------|--------------|------------|

**25. Հայոց գահակալն ո՞ւմ է ասել ստորև բերված խոսքերը.**

*«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:*

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1) Վասիլ II             | 3) Հովհաննես Կոմնենոս |
| 2) Ալեքսիոս III Անգելոս | 4) Կոստանդին Մոնոմախ  |

**26. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

*«... գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ծայնով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:*

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Կորյուն         | 3) Ղազար Փարպեցի  |
| 2) Մովսես Խորենացի | 4) Վարդան Արևելցի |



**27. Ո՞ր պատմիչն է մեջբերված վկայության հեղինակը.**

*«...հնուց հայերեն գիր է եղել, ինչը վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գրավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով... Հայկազուն թագավորների անուններով»:*

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Ասողիկ            | 3) Սմբատ Գունդստաբլ |
| 2) Կիրակոս Գանձակեցի | 4) Վարդան Արևելցի   |

**28. Ո՞վ է ստորև բերված խոսքի հեղինակը. «Այբն է մայր իմաստութեան...»:**

- |                     |             |
|---------------------|-------------|
| 1) Ղազար Փարպեցին   | 3) Կորյունը |
| 2) Մովսես Խորենացին | 4) Եղիշեն   |

**29. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

*«Ո՞ւր հասան է գիտություն, ուր ոչ հասան է բնություն»:*

- |                    |                 |
|--------------------|-----------------|
| 1) Պարույր Հայկազն | 3) Դավիթ Անհաղթ |
| 2) Եզնիկ Կողբացի   | 4) Եղիշեն       |

**30. Ո՞ր աշխատասիրությունից են ստորև բերված խոսքերը.**

*«Ո՞ւր հասան է գիտություն, ուր ոչ հասան է բնություն».*

- |                              |                        |
|------------------------------|------------------------|
| 1) «Եղծ աղանդոց»             | 3) «Պատմություն հայոց» |
| 2) «Սահմանք իմաստասիրութեան» | 4) «Քերականություն»    |

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Ինչ հարկատեսակ էր տասանորդը.

- 1) պետությանը կամ թագավորին վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 2) նախարարներին վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 3) հողատիրոջը վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 4) եկեղեցուն վճարվող բերքի մեկ տասներորդ մասը

### 2. Ինչ էր կոչվում Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավը.

- 1) սեպուհներ
- 2) անագատներ
- 3) ոստանիկներ
- 4) ազատներ

### 3. Արշակունյաց արքունի գործակալին համապատասխանեցնել իր գործառույթներին.

- 1) արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը
- 2) Մեծ Հայքի զինված ուժերի գլխավոր հրամանատարը
- 3) արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունի սեպուհների դաստիարակությունը իրականացնողը
- 4) հանրային աշխատանքները, պետական պարիսկներն ու հարկահանության գործը տնօրինողը
- 5) պալատական արարողությունները և օտար երկրների դեսպանների ընդունելության համար պատասխանատու
- 6) ընդունված օրենքների գործադրումը հատկապես ընտանեկան և եկեղեցու իրավունքի բնագավառում վերահսկողը

ա. մաղխազ

բ. սենեկապետ

գ. հայր մարդպետ

դ. հազարապետ

ե. թագադիր և թագակապ ասպետ

զ. սպարապետ

է. մեծ դատավոր

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ, 5-է, 6-ե

2) 1-ա, 2-գ, 3-գ, 4-բ, 5-ե, 6-է

3) 1-է, 2-գ, 3-գ, 4-դ, 5-բ, 6-ա

4) 1-ա, 2-գ, 3-գ, 4-դ, 5-ե, 6-է

### 4. Ինչ էր իրենից ներկայացնում «Մաղխազական այրուծին».

- 1) նախարարական տան հեծելազոր
- 2) արքունիքին կից հատուկ հեծելազոր, որն իրականացնում էր թագավորական ոստանի պաշտպանությունը

- 3) ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող, թագավորի անձի պաշտպանությունն ապահովող ընտիր հեծելազոր
- 4) մաղխազի անվտանգությունն ապահովող հեծելազոր

**5. Ինչպե՞ս էին կոչվում ազնվականության՝ մասնատիրական տնտեսությունները.**

- 1) բերդեր ու ամրոցներ
- 2) տաճարներ ու ամրոցներ
- 3) ագարակներ ու դաստակերտներ
- 4) տաճարներ ու շեներ

**6. Ինչպե՞ս էին կոչվում 387 թ. բաժանումից հետո Հռոմին անցած Մեծ Հայքի արևմտյան մասի կուսակալները.**

- 1) սատրապ
- 2) ստրատեգոս
- 3) կոմես
- 4) հյուպարքոս

**7. Ի՞նչ էր կոչվում Սասանյան Պարսկաստանի վարչաքաղաքական խոշոր միավորը.**

- 1) սատրապություն
- 2) մարզպետություն
- 3) բդեշխություն
- 4) մարզպանություն

**8. Ինչպե՞ս էր կոչվում Վարդանանց երդումը.**

- 1) «Հավատո հանգանակ»
- 2) «Հավատո ուխտ»
- 3) «Վասն հայրենիքի»
- 4) «Վասն քաջ Վարդանի»

**9. Վաղ միջնադարյան Հայաստանում ի՞նչ էր կոչվում իշխանական տան կրտսեր ներկայացուցիչը.**

- 1) սեպուհ
- 2) դրանիկ
- 3) ոստանիկ
- 4) ասպետ

**10. Ի՞նչ կոչվեցին հետագայում Քրիստոսի՝ «մի անձ, երկու բնություն» բանաձևի հետևորդները.**

- 1) հակաքաղկեդոնական կամ միաբնակ
- 2) քաղկեդոնական կամ երկաբնակ
- 3) քաղկեդոնական կամ միաբնակ
- 4) հակաքաղկեդոնական կամ երկաբնակ

**11. Ի՞նչ տիտղոս ուներ Գագիկ I-ը.**

- 1) տիեզերակալ
- 2) շահնշահ հայոց
- 3) աշխարհակալ
- 4) արքայից արքա

**12. Ո՞րն էր մարզպանական գունդը.**

- 1) հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը
- 2) հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը

- 3) հայկական բանակում Բագրատունիների օրոք արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից կազմված զորամիավորումը
- 4) հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը

**13. Ինչ էր նորքը.**

- 1) արքունի ոստան
- 2) մշակելի դարձած հողային տարածք
- 3) նորակառույց իշխանական կամ արքայական աթոռանիստ
- 4) բնակելի դարձած նորակառույց թաղամաս

**14. Ինչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներում և առևտրական ուղիների խաչմերուկներում հաճախակի կազմակերպվող կիրակնօրյա շուկան.**

- 1) տոնավաճառ
- 2) վաճառատուն
- 3) վաճառանոց
- 4) բորսա

**15. Ինչ էր կոչվում քաղաքի կառավարիչը Բագրատունյաց Հայաստանում.**

- 1) ստրատեգոս
- 2) քալանթար
- 3) շահապ
- 4) մուհթասիբ

**16. Ինչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքների՝ արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը.**

- 1) ոստան
- 2) արվարձան
- 3) մայրաքաղաք
- 4) շահաստան

**17. Ինչ էր կոչվում քաղաքներում առանձին պարսպով շրջապատված կենտրոնական կամ բարձրադիր մասը, որտեղ գտնվում էր արքունիքը կամ իշխանի դղյակը.**

- 1) արքայանիստ
- 2) քաղաքամեջ
- 3) միջնաբերդ
- 4) իշխանանիստ

**18. Ինչ էր կոչվում որոշ խոշոր քաղաքների կառավարող մարմինը միջնադարյան Հայաստանում.**

- 1) քաղաքապետարան
- 2) ավագների խորհուրդ
- 3) աշխարհաժողով
- 4) քաղաքային դումա

**19. Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.**

- 1) քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- 2) Բագրատունյաց Հայաստանի քաղաքների՝ արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը
- 3) քաղաքներում առանձին պարսպով շրջապատված կենտրոնական կամ բարձրադիր մաս, որտեղ գտնվում էր արքունիքը, իշխանի կամ կառավարչի ապարանքը

- 4) Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյա
- 5) միջնադարյան Հայաստանում արտաքին պարսպով շրջապատված բուն քաղաքից դուրս գտնվող և ընչազուրկներով բնակեցված քաղաքամաս

ա. միջնաբերդ  
բ. շահապ  
գ. մելիք

դ. արվարձան  
ե. շահաստան  
զ. մուխասիբ

- 1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ  
2) 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ

- 3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-զ  
4) 1-բ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-զ

**20. Մուխասիբի գործառույթներից էր՝**

- 1) հարկահանությանը, շուկաներին, առևտրին ու արհեստներին հետևելը  
2) քաղաքի մաքրությանը հետևելը  
3) պարիսպների, պալատների, տաճարների, ճանապարհների կառուցման աշխատանքներին հետևելը  
4) իջևանատների կառուցմանը հետևելը

**21. Վրացական արքունիքում ինչ էր կոչվում զորքերի գլխավոր հրամանատարը.**

- 1) գունդստաբլ 3) սպարապետ  
2) աթաբեկ 4) ամիրսպասալար

**22. Ինչ էր կոչվում մոնղոլական ցեղերի ժողովը.**

- 1) մեջլիս 2) ծերակույտ 3) խուրալ 4) ուրդա

**23. Խաչակիր մատենագիրներն ինչպե՞ս են անվանել Կիլիկիայի հայկական պետությունը.**

- 1) «Հայաստան», «Փոքր Հայք» 3) «Միջերկրականի Հայք»  
2) «Հայաստան», «Ներքին Հայք» 4) «Փոքր Ասիայի Հայք»

**24. Ինչ էր կոչվում գնված ստրուկը, որը ծառայում էր եգիպտական սուլթանի անձնական գվարդիայում.**

- 1) ենիչերի 3) դզլբաշ  
2) նոյոն 4) մամլուք

**25. Ինչ անուն ստացան Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորման կողմնակիցները Կիլիկիայում.**

- 1) ունիթորներ կամ միարարներ  
2) բողոքականներ կամ հակամիարարներ  
3) հակաունիթորներ կամ միարարներ  
4) հակաունիթորներ կամ հակամիարարներ

**26. Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.**

- 1) մոնոլոլական բանակում զորաջոկատի հրամանատար
- 2) վրացական արքունիքում զորքերի հրամանատար
- 3) քոչվոր մոնոլոլական ցեղերի ժողով
- 4) վրացական արքունիքում թագաժառանգի խնամակալ
- 5) գնված ստրուկ, որը ծառայում էր եգիպտական սուլթանի անձնական գվարդիայում

ա. արթաբեկ

գ. նոյոն

բ. մամլուք

դ. ամիրսպասալար

1) ա-4, բ-3, գ-1, դ-2

3) ա-4, բ-5, գ-1, դ-2

2) ա-1, բ-5, գ-3, դ-4

4) ա-2, բ-5, գ-1, դ-4

**27. Ինչ էր կոչվում Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը.**

1) սպասալար

3) մարաջախտ

2) ամիրսպասալար

4) գունդատար

**28. Ինչ էր կոչվում կիլիկյան բանակի սպարապետի անմիջական տեղակալը, որը գլխավորում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարման գործը.**

1) սպասալար

3) մարաջախտ

2) երկրորդ սպարապետ

4) գունդատար

**29. Ինչ էր կոչվում թագավորի առաջին խորհրդականը և թագավորին փոխարինող Կիլիկիայում.**

1) պայլ

3) կանցլեր

2) սենեսկալ

4) մարաջախտ

**30. Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.**

- 1) Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը
- 2) գլխավորական աստիճան Կիլիկիայում, որը ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և այլ անհրաժեշտ գիտելիքներից և հմտություններից
- 3) արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում
- 4) կիլիկյան բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը
- 5) պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զորք

ա. մարաջախտ

դ. կապիտան

բ. սպասալար

ե. ասպետ (ձիավոր)

գ. աշխարհագոր

զ. գունդատար

1) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-զ

3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-զ

2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-զ, 5-գ

4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ

**31. Թվարկված գործառույթներից առանձնացնել երկուսը, որոնք Կիլիկյան Հայաստանում չէր տնօրինում պայլը.**

- 1) թագավորի խորհրդականն էր և արքունի պալատի կառավարիչը
- 2) թագավորի բացակայության դեպքում փոխարինում էր նրան
- 3) թագավորի խորհրդականն էր և ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ
- 4) թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր ամբողջ երկրի և գահակալի խնամակալությունը
- 5) թագավորի առաջին խորհրդականն էր

**32. Արքունի քարտուղարություն գործակալության գլխավոր պաշտոնյան կոչվում էր՝**

- 1) պայլ
- 2) կանցլեր
- 3) մարաջախտ
- 4) գունդստաբլ

**33. Ուշ միջնադարում ինչ էին կոչվում հայ կալվածատերերը, որոնք իրենց սեփական տիրույթները հանձնել էին եկեղեցուն և, հոգևոր կոչումներ ընդունելով, շարունակում էին տիրել իրենց կալվածքներին.**

- 1) մելիք
- 2) բեկ
- 3) պարոնտեր
- 4) յուզբաշի

**34. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

- 1) պարոնտեր
- 2) շահապ
- 3) մելիք
- 4) մուխասիբ

ա) որոշ գավառներում իրենց իշխանությունն ու կառավարումը վերականգնած հայ իշխանական տների ժառանգ

բ) սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատեր

գ) քաղաքներում առևտրին ու արհեստներին, շուկաներին ու հարկահանությանը հետևող հատուկ պաշտոնյա

դ) քաղաքի կառավարիչ, քաղաքապետ

ե) զորահրամանատար, հարյուրապետ

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
- 3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

**35. Միջնադարյան Հայաստանում ինչ էր կոչվում բարձրագույն դպրոցը.**

- 1) ակադեմիա
- 2) ուսումնարան
- 3) վարդապետարան
- 4) մատենադարան

36. Ինչ է կոչվում պատվանդանի վրա կանգնեցված սալածն կոթող-հուշարձանը.

- 1) մենհիր
- 2) խաչքար
- 3) վիշապաքար
- 4) սահմանաքար

37. Թվարկվածներից որը «յոթ ազատ արվեստների» համակարգի եռյակ ենթահամակարգից չէ.

- 1) ճարտասանություն
- 2) քերականություն
- 3) տրամաբանություն
- 4) երաժշտություն

38. Թվարկվածներից որը «յոթ ազատ արվեստների» համակարգի Քառյակ ենթահամակարգից չէ.

- 1) երկրաչափություն
- 2) երաժշտություն
- 3) տրամաբանություն
- 4) թվաբանություն

39. «Յոթ ազատ արվեստների» Քառյակ ենթահամակարգը ներառում էր՝

- ա) քերականություն
- բ) տրամաբանություն
- գ) թվաբանություն
- դ) երկրաչափություն
- ե) ճարտասանություն
- զ) երաժշտություն
- է) աստղագիտություն

- 1) բ, գ, ե, զ
- 2) գ, դ, ե, է
- 3) ա, դ, գ, է
- 4) գ, դ, զ, է

40. Հասկացությունը (եզրույթը) համապատասխանեցնել բովանդակությանը.

- ա) վարդապետարան
- բ) ռաբունի
- գ) տարեգիր
- դ) ռաբունապետ
- ե) յոթ ազատ արվեստներ
- զ) մանրանկարիչ

- 1) միջնադարյան համալսարանի ղեկավար
- 2) խաչքարագործ վարպետ
- 3) միջնադարյան Հայաստանում բարձրագույն դպրոց
- 4) միջնադարյան համալսարանի դասավանդող
- 5) ձեռագրերը նկարագարող վարպետ
- 6) յոթ բաղադրիչ ընդգրկող, կրթության կազմակերպման և գիտելիքների հաղորդման միջնադարյան համակարգ
- 7) «Ժամանակագրություն» ուղղության պատմագիր

- 1) ա-3, բ-4, գ-7, դ-1, ե-6, զ-5
- 2) ա-6, բ-1, գ-4, դ-7, ե-3, զ-2
- 3) ա-6, բ-1, գ-7, դ-4, ե-3, զ-5
- 4) ա-3, բ-7, գ-4, դ-1, ե-6, զ-2

41. Թվարկվածներից որը Կիլիկիայի հայկական պետության կառավարման գլխավոր մարմնի՝ արքունիքի կառուցվածքային բաղադրատարրերից չէր.

- 1) գործակալություններ
- 2) պետական խորհուրդ
- 3) արքունի խորհուրդ
- 4) բարձրագույն դատական ատյան



## **5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

---

- 1. Խոսքով Կոտակը Դվինում կառուցում է արքունի ապարանք և այն դարձնում է իր նստավայրը, որովհետև՝**
  - 1) Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Վաղարշապատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել
  - 2) Երասխի վտակ Ախուրյանի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել
  - 3) Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել
  - 4) Երասխի վտակ Ախուրյանի հունը փոխվել էր, և Վաղարշապատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել
  
- 2. Պապի բարեփոխումների արդյունքում որքան է դարձել հայոց բանակի թիվը.**
  - 1) մոտ 80 հազար
  - 2) մոտ 100 հազար
  - 3) մոտ 120 հազար
  - 4) մոտ 180 հազար
  
- 3. Ո՞րն էր Արշակավանի կործանման պատճառը.**
  - 1) Քաղաքում բնակություն էին հաստատել օրինազանցները, արքայական կալվածքներից փախած դժգոհ շինականներն ու ծառաները:
  - 2) Քաղաքում բնակություն էին հաստատել նախարարների կալվածքներից փախած ավանդառուներն ու պարտապանները և նրանցից դժգոհ ծառաներն ու շինականները:
  - 3) Քաղաքը կառուցվել էր ոչ թե արքայական տիրույթներում, այլ նախարարներից խլված հողատարածքներում, ինչն էլ հարուցել էր նախարարների դժգոհությունը:
  - 4) Քաղաքում բնակություն հաստատած օրինազանցներն ու հարստահարված անազատները խռովություն էին բարձրացրել և սպառնում էին պետության անվտանգությանը:
  
- 4. Ինչո՞ւ է Արշակ արքան Գնելին մահապատժի ենթարկում.**
  - 1) քանի որ Գնելը հանցավոր համաձայնության էր եկել կենտրոնախույս նախարարների հետ
  - 2) քանի որ Գնելն աչք էր դրել թագուհի Փառանձեմի վրա
  - 3) քանի որ Տիրիթը հավաստիացրել էր նրան, թե Գնելը ցանկանում է դավադրորեն հայոց արքա դառնալ
  - 4) քանի որ Գնելը գաղտնի կապեր էր հաստատել Շապուհ III-ի հետ

**5. Ատրպատականում պարտված Շապուհ II-ի փախուստից հետո հայոց սպարապետի ձեռքն են անցնում.**

- 1) պարսից արքայի գանձարանն ու կանանոցը
- 2) պարսկական զորքի ռազմական տեխնիկան
- 3) Հայաստանից թալանած ավարը
- 4) Հայաստանից հավաքած հարկերը

**6. Թվարկվածներից որո՞նք պատճառ հանդիսացան պարսից արքայի կողմից Հայոց Խոսրով IV-ի գերեվարման համար.**

- 1) Համազասպ Մամիկոնյանին հայոց սպարապետ նշանակելը
- 2) Սահակ Պարթևին հայոց կաթողիկոս նշանակելը
- 3) Մեծ Հայքի երկու մասերի միավորումը
- 4) թագավորի ինքնուրույն հարաբերությունները հռոմեական կայսեր հետ
- 5) Խոսրով IV-ի ամուսնությունը Մանվել Մամիկոնյանի դստեր հետ

**7. Ինչի՞ շնորհիվ էր Վռամշապուհը միավորել Մեծ Հայքի երկու մասերը.**

- 1) իր որդիներից մեկին Պարսկաստանում, մյուսին՝ Բյուզանդիայում պատանդ թողնելու
- 2) Բյուզանդիային ու Պարսկաստանին հարկ վճարելու
- 3) հայոց զորքը պարսկական ու բյուզանդական կոիվների ժամանակ որպես օգնություն ուղարկելու
- 4) հայ նախարարների հողային տիրույթները բյուզանդացիներին ու պարսիկներին կտակելու

**8. Ինչո՞ւ պարսից թագավորը համաձայնեց ազատ արձակել և հայրենիք վերադարձնել Սահակ Պարթևին.**

- 1) Բյուզանդիայի կայսեր պահանջով
- 2) հայ նախարարների խնդրանքով
- 3) հայերի ընդվզումից վախենալով
- 4) հայ նախարարների պահանջով

**9. Հազկերտ II-ի հանձնարարականով Արևելյան Հայաստանում անցկացված աշխարհագրի նպատակներից էին.**

- 1) հարկերի ծանրացումը և նախարարական համակարգի զորեղացումը
- 2) հարկերի թեթևացումը և նախարարական համակարգի զորեղացումը
- 3) հարկերի ծանրացումը և եկեղեցու ազատության սահմանափակումը
- 4) հարկերի թեթևացումը և եկեղեցու ազատության ընդլայնումը

**10. Ավարայրի ճակատամարտի շնորհիվ՝**

- 1) Հայաստանը վերականգնեց անկախ թագավորությունը և չիրաժարվեց քրիստոնեական հավատքից
- 2) Հայաստանը միավորվեց, իսկ հայ ժողովուրդը պահպանեց քրիստոնեական հավատքը

- 3) Հայաստանը կորցրեց իր ներքին ինքնուրույնությունը, սակայն պահպանեց քրիստոնեական հավատքը
- 4) Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը, իսկ հայ ժողովուրդը՝ քրիստոնեական հավատքը

**11. Ո՞րն էր 449 թ. Արտաշատում ժողովի հրավիրման պատճառը.**

- 1) աշխարհագրի անցկացումը
- 2) քրիստոնեությունից հրաժարվելու և մազդեզականությունն ընդունելու պարսից արքայի հրամանը
- 3) հայոց այրուձին երկրից հեռացնելու հրամանը
- 4) հայ նախարարներին ժառանգական հողատիրության իրավունքից զրկելը

**12. Ինչո՞վ է ավարտվել Խաղխաղի ճակատամարտը.**

- 1) հոների պարտությամբ
- 2) հայկական ուժերի հաղթանակով
- 3) պարսիկների հաղթանակով
- 4) հայկական ուժերի պարտությամբ

**13. Հայաստանում խոշոր հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ինչ ձեռնարկեց Սասանյան Պերոզ թագավորը.**

- 1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
- 2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին:
- 3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Պարսից տերությանը:

**14. Արևմտյան Հայաստանում նախարարական հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ինչ ձեռնարկեց Հուստինիանոս I-ը.**

- 1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների ավագ ներկայացուցիչներին:
- 2) Տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք շնորհեց նաև կանանց ու աղջիկներին:
- 3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Բյուզանդական կայսրությանը:

**15. Ինչ կարևոր հետևանք ունեցավ Դվինի II ժողովի գումարումը.**

- 1) Հայ առաքելական եկեղեցին վերջնականապես ազատվեց կաթոլիկ եկեղեցու հոգևոր ենթակայությունից:
- 2) Վերջնականապես հաստատվեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:



**19. Ինչո՞ւ է Աշոտ II-ը կրել Երկաթ մականունը.**

- 1) բարենորոգումների և տոկունության համար
- 2) երկրի մասնատվածությանը վերջ տալու համար
- 3) խիզախության և տոկունության համար
- 4) երկաթե սուր կրելու համար

**20. Ստորև թվարկվածներից որո՞նք միջնադարում քաղաքային կյանքի վերելքի պայմաններ չեն.**

- 1) արհեստների զարգացումը
- 2) առևտրի զարգացումը
- 3) աշխատանքի հասարակական բաժանումը
- 4) պատերազմները
- 5) տնտեսական-շուկայական թույլ կապերը երկրի տարբեր մասերի միջև

**21. Սյունիքի թագավորության կենտրոնը Սյունի ավանից տեղափոխվեց Կապան, որովհետև՝**

- 1) Սյունի ավանը առևտրական և ռազմական առումով անհարմար վայրում էր գտնվում
- 2) Սյունին երկրաշարժի հետևանքով լքվել էր
- 3) թագավորության գոյատևման համար վտանգ էր առաջացել
- 4) Սյունին պարսկական զորքերի հարձակումների հետևանքով ավերվել էր

**22. Թվարկվածներից որո՞նք Մանազկերտի ճակատամարտի հետևանքներ չեն.**

- 1) Բյուզանդացիները հսկայական կորուստներ կրեցին, իսկ Դիոգենես կայսրը գերի ընկավ:
- 2) Բյուզանդացիները ստիպված ընդունեցին իրենց պարտությունը և հաշտություն կնքեցին սելջուկ-թուրքերի հետ:
- 3) Հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում:
- 4) Հայաստանի միայն հարավային շրջաններն ու Արարատյան դաշտն ընկան սելջուկ-թուրքերի տիրապետության տակ:
- 5) Տաշիր-Ձորագետի, Կարսի (Վանանդի), Վասպուրականի և Սյունիքի թագավորները շտապեցին հպատակություն հայտնել սելջուկներին:
- 6) Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլարթի և այլ սելջուկյան իշխանություններ:

- 1) ա, դ, է                      2) ա, գ, է                      3) բ, դ, ե                      4) բ, գ, ե

**19. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Զբաղված լինելով Միջին Ասիայում հոների դեմ պատերազմով՝ Պերոզ արքան միառժամանակ խուսափում էր հայ հայրենասիրական ուժերին բացահայտորեն հալածելու քաղաքականությունից:
- 2) Իրեն ուղղված մեղադրանքներին աննկուն կերպով պատասխանելով՝ Գյուտ կաթողիկոսը, սակայն, ստիպված էր համաձայնել Պերոզ արքայի՝ իրեն արված դավանափոխության առաջարկին:

- 3) Հայաստանում հակապարսկական ապստամբության բռնկվելու ազդանշան էր հանդիսացել ուրացյալ Աշուշա բդեշխի սպանությունը վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի կողմից:
- 4) Խոսրովակերտ անտառից մինչև Ջրվեժի լեռները ռազմական կարգով դասավորված Հազարավուխտի գլխավորած պարսից զորքերի վրա հարձակվում է հայոց հեծելազունը և ճեղքում պարսից գնդի մի թևը, շատերին կոտորում:
- 5) Ներսեհապատի ճակատամարտից առաջ հայոց զորքերին ոգևորիչ ճառ է արտասանում Գյուտ կաթողիկոսը, և ճակատամարտն ավարտվում է հայերի հաղթանակով:
- 6) Երբ Վահան Մամիկոնյանը հայ նախարարների հետ գտնվում էր Խաղտիքում, հայոց մարզպան Շապուհը հարձակվում է Շաղագոմ գավառում գտնվող ապստամբների մի խմբի վրա:
- 7) Ներսեհ և Հրահատ Կամսարականները Մուշեղ Մամիկոնյանի հետ իրենց ջոկատով Կարնո գավառի Արծաթի գյուղի մոտ ջախջախում են պարսից գունդը:

**20. Ինչ նպատակ էին հետապնդում Հուստինիանոսի՝ Արևմտյան Հայաստանում իրականացրած միջոցառումները: Գտնել սխալ պատասխանները.**

- 1) քայքայել հայ նախարարների ներքին կառավարման համակարգը
- 2) կենտրոնացնել կայսրության կառավարումը
- 3) մասնատել հայ նախարարների հողային տիրույթները
- 4) հայ իշխաններին զրկել զինական ուժից
- 5) ապահովել Արևմտյան Հայաստանի հայ նախարարների տոհմական կապը Արևելյան Հայաստանի նախարարական տների հետ
- 6) ամրապնդել հայ իշխանների զինական ուժը
- 7) ամրապնդել հայ իշխանների ժառանգական իրավունքները

**21. Մեծ Հայքի որ նահանգներն էր ընդգրկում Վաչագան Բարեպաշտի թագավորությունը.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Այրարատ | 4) Բարձր Հայք |
| 2) Ծոփք    | 5) Ուտիք      |
| 3) Արցախ   |               |

**22. Գտնել ճիշտ պատասխանը.**

*Խոսրով II-ի գումարած Տիգրանի ժողովը՝*

- 1) ընդունել է տիեզերական առաջին երեք ժողովների և Քաղկեդոնի ժողովի որոշումները
- 2) մերժել է տիեզերական առաջին երեք ժողովների և Քաղկեդոնի ժողովի որոշումները
- 3) մերժել է տիեզերական առաջին երեք ժողովների վճիռները և ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները
- 4) ընդունել է տիեզերական առաջին երեք ժողովների վճիռները և մերժել Քաղկեդոնի ժողովի որոշումները

**23. Տրված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել Դամասկոսում կնքված հայ-արաբական դաշնագրում.**

- 1) Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
- 2) Բյուզանդիայի և Պարսկաստանի հետ Հայաստանի սահմանային բոլոր խոշոր ամրոցներում արաբները տեղակայելու էին լավ մարզված և զինված կայազորեր, որոնց մատակարարման ծախսերը հոգալու էին հայերը:
- 3) Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո վճարվող խորհրդանշական հարկի քանակը որոշելու էին արաբները:
- 4) Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի, որը արաբների պահանջով պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում՝ բացառությամբ Բյուզանդական կայսրության դեմ արաբների մղած կռիվների:
- 5) Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո վճարվող հարկի քանակը որոշելու էին հայերը:
- 6) Պարսիկների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
- 7) Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի, որը պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում:

**24. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Տիգրանի ժողովում վիճաբանություններից հետո ընդունվում են միայն տիեզերական առաջին ժողովի վճիռները, և մերժվում են Քաղեդոնի ժողովի որոշումները:
- 2) VII դարի 20-ական թվականներին Հերակլ կայսրը մի քանի արշավանք է ձեռնարկում դեպի Պարսկաստան:
- 3) Արևմտյան Հայաստանում սկսվել էր անկախացման գործընթաց՝ մարզպան Վահան Բագրատունու գլխավորությամբ:
- 4) Բյուզանդական և պարսկական իշխանությունները Վարազտիրոցի դեմ դավադրություն են կազմակերպում:
- 5) Վարազտիրոցը ցանկանում էր մնալ և ծառայել հայրենիքում, սակայն կայսրը նրան ուղարկում է Կոստանդնուպոլիս:
- 6) Չհաշտվելով «պատվավոր աքսորյալի» վիճակի հետ՝ Վարազտիրոցը մասնակցում է Հերակլի դեմ կազմակերպած դավադրությանը:
- 7) Արևելյան Հայաստանի կառավարիչ ՄԺԵԺ Գնունին գործում էր ազատատենչ հայ զորականների դեմ. նա ձերբակալում է իշխան Դավիթ Սահառունուն:

**25. Ո՞ր շարքն է ներկայացնում բացառապես հայոց կաթողիկոսների.**

- 1) Կոմիտաս, Սահակ Պարթև, Անանիա Մոկացի, Վարազտիրոց Բագրատունի
- 2) Դավիթ Սահառունի, Զաքարիա Քանաքեղոցի, Ներսես Մեծ, Հուսիկ
- 3) Հովսեփ Վայոցձորցի, Գրիգոր Զ Ապիրատ, Զաքարիա Զագեցի, ՄԺԵԺ Գնունի
- 4) Մեսրոպ Արտազեցի, Անանիա Մոկացի, Կոմիտաս, Պետրոս Գետադարձ

## 26. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Արևմտյան Հայաստանում սկսվել էր անկախացման գործընթաց՝ մարզպան Վարազտիրոց Բագրատունու (628–632 թթ.) գլխավորությամբ:
- 2) Բյուզանդական և պարսկական իշխանությունները Վարազտիրոցի դեմ դավադրություն են կազմակերպում:
- 3) Արևմտյան Հայաստանի կառավարիչ Մծեժ Գնունին գործում էր ազատատենչ հայ զորականների դեմ. նա ձերբակալում է Սմբատ Բագրատունուն:
- 4) Հերակլ կայսրը Դավիթ Սահառունուն տվել է «պատրիկ-կյուրապաղատի» աստիճան և ճանաչել հայոց իշխան:
- 5) Դավիթ Սահառունին մինչև VII դարի 30-ական թթ. վերջը գլխավորում էր երկրի վերամիավորման գործը:
- 6) Դավիթ Սահառունուն փոխարինում է Սմբատ Բագրատունին:
- 7) 641 թ. արաբները հարձակվում են Դվինի վրա:

## 27. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.

- 1) Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին, օգտվելով Բյուզանդիայի և Պարսկաստանի՝ արաբներից կրած պարտությունից, 639 թ. վերամիավորեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը:
- 2) Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու նստավայրը Դվինն էր:
- 3) Չնայած Դվինի բնակչության համառ դիմադրությանը՝ արաբները գրավում, ավերում, թալանում են քաղաքը, բնակիչներից շատերին կոտորում և 45 հազար մարդ գերեվարում ու տանում խալիֆայության խորքերը:
- 4) Արաբական արշավանքները դեպի Հայաստան 640-ական թթ. դադարեցին:
- 5) Կոստանդին (Կոստաս) II կայսրը (641–668 թթ.), չհաշտվելով Թեոդորոս Ռշտունու ինքնուրույն քաղաքականության հետ, նրան մեղադրում է Հայաստանում գտնվող բյուզանդական մի ջոկատի՝ արաբներից 658 թ. կրած պարտության մեջ և ձերբակալում:
- 6) Բյուզանդական կայսրությունն արաբների դեմ հայերի աջակցությունը ստանալու համար Վարազտիրոցին շնորհում է կյուրապաղատի կոչում և հանձնում հայոց իշխանի պաշտոնը:
- 7) 647 թ. արաբական խալիֆայության զորքերը կրկին ներխուժում են Վիրք ու Պարսկաստան:
- 8) Վասպուրականի կողմերում ասպատակած արաբական զորամասը չի կարողանում գրավել Հերևան և Որդսպու բերդերը:

## 28. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ Արծափ ամրոցին օգնության հասած հայոց զորքը գլխավին ջախջախում է արաբներին՝ իրենց երկու զորավարներով:
- 2) Բյուզանդական կայսրությունը, չսթափվելով խալիֆայությունից կրած պարտություններից, կրկին շարունակեց իր նվաճողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ:

- 3) Հոգևոր և աշխարհիկ իշխանների մի խմբավորում՝ Ներսես Ա կաթողիկոսի գլխավորությամբ, շարունակում էր հույսեր կապել քրիստոնյա Բյուզանդիայի օգնության հետ:
- 4) Թեոդորոս Ռշտունին փորձում էր քաղաքական հարաբերություններ հաստատել Արաբական խալիֆայության հետ:
- 5) Ռշտունին Հայաստանի անվտանգությունն ապահովելու նպատակով 652 թ. մեծ ընծաներով ուղևորվեց Ասորիքի (Սիրիա) և Վերին Միջագետքի այն ժամանակվա կառավարիչ Մուավիայի մոտ:
- 6) Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին Հայաստանի հետ միաժամանակ իշխանություն է ստանում հարևան Վիրքի ու Ասորիքի վրա՝ մինչև Ճորա պահակի ամրություններ:
- 7) 655 թ. Կոստանդին II-ը 50-հազարանոց բանակով ներխուժում է Հայաստան:
- 8) Հայ ժողովուրդը դիմակայեց խալիֆայությանը, իսկ Հայաստանի նկատմամբ նվաճողական քաղաքականություն վարած Սասանյան Պարսկաստանը մի քանի տարվա ընթացքում լրիվ ջախջախվեց ու կործանվեց:

**29. Ո՞ր շարքի բոլոր գործիչներն են 850-855 թթ. հակաարաբական հուժկու ապստամբության մասնակիցներ.**

- 1) Եսայի Աբու-Մուսե, Աշոտ Արծրունի, Հովնան Խուրեցի, Արտավազդ Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ
- 2) Գուրգեն Արծրունի, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ, Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյաններ, Եսայի Աբու-Մուսե, Հովնան Խուրեցի, Աշոտ Արծրունի
- 3) Հովնան Խուրեցի, Աշոտ Արծրունի, Գուրգեն Արծրունի, Բագրատ Բագրատունի, Եսայի Աբու-Մուսե, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ
- 4) Բագրատ Բագրատունի, Շապուհ և Սմբատ Բագրատունիներ, Գագիկ Արծրունի, Հովհան Խուրեցի, Աշոտ Արծրունի, Եսայի Աբու-Մուսե

**30. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Հայկական 2000-անոց այրուձին, որին հետապնդում էր ավելի քան 5-հազարանոց արաբական զորքը, Ակոռիից շարունակում է ճանապարհը և բանակ դնում Արածանիի հովտում՝ Վարդանակերտ ավանի մոտ:
- 2) Խալիֆը ստիպված էր Հովհանին նշանակել «Լեռան» կառավարիչ, իսկ Սասուն գավառը, որ մինչ այդ գտնվում էր Ջազիրա նահանգի կազմում, միացվում է Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության տակ:
- 3) Արցախում, Վասպուրականում և այլ վայրերում խայտառակ պարտություններ կրած Բուղային խալիֆը 855 թ. հետ է կանչում Հայաստանից:
- 4) Արճեշի ճակատամարտում հայերը կարողացան առանձին-առանձին ջախջախել արաբական երկու զորաջոկատներ և թույլ չտվեցին, որ դրանք միավորվեն ու գերի վերցրին 4 զորահրամանատար և 1500 զինվոր:
- 5) Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Բուղայի 15000-անոց զորքը խայտառակ պարտություն կրեց Գուրգեն Արծրունու 900 ռազմիկներից, ապա խուճապահար փախավ Վասպուրականից:





### 35. Բերված պնդումներից որն է սխալ.

- 1) Յուսուֆը թաքնվում է Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթում, բայց սասունցիները գտնելով ոճրագործին, մահապատժի են ենթարկում:
- 2) Խալիֆը 852 թ. հայ ապստամբների դեմ ուղարկեց իր նենգությամբ ու դաժանությամբ հայտնի թուրք վարձկան զորական Բուղային:
- 3) Բուղան կոտորում է բնակչության մի մասին, մյուսներին՝ գերեվարում, այդ թվում՝ Հովհան Խութեցուն և Բագարատի որդիներին:
- 4) Բուղայի զորքը ասպատակում է Բաղեշը, Տայքը, Ջեյթունը և Վասպուրականը:

### 36. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Հայ իշխանները, համոզվելով, որ երկրի փրկությունը միասնության մեջ է, համախմբվեցին Աշոտ II-ի շուրջը և միացան երկրի ազատագրման նվիրական գործին:
- 2) Հայաստանը պառակտելու և ռազմականապես թուլացնելու նպատակով խալիֆը Հայաստանի նոր թագավոր ճանաչեց Սմբատ I-ի հորեղբորորդուն՝ հայոց սպարապետ Աշոտին:
- 3) Համոզվելով, որ զենքի ուժով դժվար է Հայաստանի դեմ պայքարում հաջողության հասնել՝ Սաջյան ամիրաները փոխեցին իրենց քաղաքականությունը և որդեգրեցին հայ իշխանների միջև երկպառակություններ սերմանելու քաղաքականություն:
- 4) Գագիկ Արծրունու խնդրանքով Սմբատ I-ը վերանայեց իր վճիռը և Նախճավան քաղաքը վերադարձրեց նրան, ինչի հետևանքով սրվեցին արքայի և Սյունյաց իշխանների հարաբերությունները:
- 5) Հայոց եկեղեցին, որը լիակատար աջակցություն էր ցուցաբերում Բագրատունիներին, մեծապես շահագրգռված էր և կողմնակից Հայաստանի պետական անկախությունը վերականգնելուն:

### 37. Բերված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն հանձնվեց երկրի հարկահանությունը, իսկ հարկերը կրճատվեցին մոտ հինգ անգամ, փոխվեց բռնություններով ու կամայականություններով ուղեկցվող հարկահանության կարգը:
- 2) Աշոտ Բագրատունին վերակազմեց բանակը, զինվորների թիվը հասավ 40 հազարի:
- 3) Հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով Աշոտ Բագրատունին խնամիական կապեր հաստատեց Վասպուրականի և Սյունիքի գահերեց իշխանների հետ:
- 4) Շիրակականում 864 թ. հրավիրված եկեղեցական ժողովը մերժեց հայկական եկեղեցու՝ բյուզանդականի հետ դավանական միավորման առաջարկը:
- 5) Հայոց եկեղեցին մեծապես շահագրգռված էր Հայաստանի անկախության վերականգնման հարցով և լիակատար աջակցություն էր ցույց տալիս Բագրատունիներին:

**38. Ստորև բերված պնդումներից որոնք ճիշտ չեն.**

- ա) Աշոտ Երկաթը իր եղբայր Աբասի հետ հանկարծակի և սրընթաց հարձակումներով լուրջ հարվածներ հասցրին թշնամու ուժերին և քայլ առ քայլ ազատագրեցին երկիրը:
- բ) Աշոտ II-ը հարձակվեց նաև Տփլիսի (Թիֆլիսի) ու Գանձակի ամիրայությունների վրա, ջախջախեց Յուսուֆի կայազորը:
- գ) Սյունյաց Սմբատ և Սահակ իշխանները, գործակցելով Աշոտ Երկաթի հետ, միացան երկրի ազատագրման նվիրական գործին:
- դ) Աշոտ II-ը նավակներում տեղավորեց իր 70 ռազմիկներին և մի մառախլապատ օր, դեռևս ափ չհասած, հանկարծակի սկսեց նետահարել արաբներին:
- ե) Աշոտ II-ը 923 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հակաարաբական դաշինք կնքեց:

- 1) ա, գ                      2) բ, դ                      3) բ, ե                      4) ա, դ

**39. Ընտրել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 921 թվականին.**

- ա. Աշոտ II-ի ճակատամարտը Սևանա կղզում
- բ. Գևորգ իշխանի մարտը Գառնիում
- գ. Աշոտ II-ին Հայաստանի շահնշահ ճանաչելը
- դ. Աշոտ II-ի կողմից հակաարաբական դաշինքի կնքումը Բյուզանդիայի մայրաքաղաքում
- ե. Գագիկ Արծրունուն հայոց թագավոր ճանաչելը

- 1) ա, բ, գ                      2) ա, բ, դ                      3) գ, դ, ե                      4) ա, դ, ե

**40. Ընտրել երկու սխալ պնդումները.**

- ա. Գագիկ I-ը վերացրեց Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրեց Պաղավունիներին, որոնք այնտեղ իրականացրին լայնածավալ շինարարական աշխատանքներ:
- բ. Դավիթ Անհողինը Գագիկ I-ից պարտություն կրեց և փախավ երկրից՝ զրկվելով իր տիրույթներից, սակայն հետագայում զոջաց և ներում խնդրեց ու միայն դրանից հետո հետ ստացավ իր տիրույթները:
- գ. Աշոտ III թագավորն առանձնահատուկ հոգատարություն էր ցուցաբերում անդամալույծների, աղքատների, հիվանդների ու կույրերի նկատմամբ, նրանց համար բացում էր հիվանդանոցներ և այլ բարեգործական հաստատություններ:
- դ. Աշոտ II-ի մահվանից հետո գահ բարձրացավ նրա ավագ որդին՝ Կարսի կառավարիչ և հայոց սպարապետ Աբասը:
- ե. Հայաստանի տարբեր մասերում առաջացած մանր թագավորությունները ենթարկվում էին «Շահնշահ հայոց» տիտղոսը կրող Անիի Բագրատունիներին ու չէին կարող գահակալել առանց շահնշահի հավանության և իրավասու չէին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ:

- 1) բ, դ                      2) ա, ե                      3) ա, դ                      4) բ, գ

**41. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Գագիկ I-ի օրոք մեծացավ, ամրապնդվեց և հզոր ուժ դարձավ հայկական բանակը, որի վրա հենվելով՝ Գագիկն ընդլայնեց իր պետության սահմանները:
- 2) Գագիկ I-ը Տայքի կյուրապաղատության և վրաց թագավորության հետ շարունակում էր վարել խաղաղ, բարեկամական հարաբերություններ:
- 3) 998 թ. Օշականի Յլու գլուխ լեռան մոտ հայ-վրացական ուժերը պարտության մատնեցին Ատրպատականի ամիրա Մամլանին:
- 4) Գագիկ I-ը կրում էր «Շահնշահ հայոց» տիտղոսը:
- 5) Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում աչքի ընկավ հայկական զորքերի հրամանատար Վահրամ Պահլավունին:
- 6) Գագիկ I-ի կինը՝ Կատրամիդե թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի Ս. Խաչ եկեղեցու շինարարությունը:

**42. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Բագրատունիները նպատակահարմար գտան Կամսարականներից իրենց անցած Շիրակի նշանավոր Անի ամրոցը դարձնել մայրաքաղաք:
- բ) Աշոտ III-ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի և այլ շինություններով կառուցապատելու համար:
- գ) Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III-ի թագադրության հանդիսության հետ:
- դ) Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը բոլորի ներկայությամբ մեծ շուքով օժեց Աշոտ III թագավորին և նրան հռչակեց շահնշահ՝ արքայից արքա:
- ե) Աշոտ III-ի թագադրության հանդիսություններին Անի էին հրավիրվել «ամենայն իշխանքն տանն Հայոց», զորքը, Աղվանքի թագավորը՝ իր շքախմբով, բարձրաստիճան հոգևորականներ և այլ նշանավոր դեմքեր:
- զ) Աշոտ III-ի թագավորությունը օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, օսերի թագավոր Չարմաղանի, հարևան Վիրքի ու Աղվանքի թագավորությունների կողմից:

1) ա, ե

2) բ, գ

3) դ, զ

4) գ, դ

**43. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Աբասը Կարսը դարձրեց մայրաքաղաք:
- բ) Հայ եկեղեցու որոշ թեմեր անջատողական հակումներ ունեին, և դա հայկական հզոր իշխանությունների անջատական ձգտումների արտահայտությունն էր:
- գ) Սյունյաց և Աղվանից (Արցախ և Ուտիք) թեմերը, հենվելով տեղի իշխանությունների աջակցության վրա, իրենց անկախ էին համարում. նրանց հնազանդեցրեց Չաքարիա Չազեցի կաթողիկոսը:
- դ) Դվինում շարունակում էր գոյատևել մի ամիրայություն (իշխանություն), որն ընդունում էր Բագրատունիների գերիշխանությունը:

ե) Դվինի ամիրան անսպասելի հարձակվեց Կարինի վրա և սկզբում հասավ հաջողության, բայց Սմբատ II-ին հաջողվեց ոչ միայն նրան հետ մղել, այլև գլխովին ջախջախել:

- 1) ա, դ                      2) բ, գ                      3) գ, ե                      4) դ, ե

**44. Բագրատունյաց Հայաստանին վերաբերող ստորև տրված պնդումներից որն է սխալ.**

- 1) Հայաստանի անկախության ամրապնդումը տեղի ունեցավ երկրում սկսված տնտեսական և մշակութային վերելքի պայմաններում:
- 2) Չորային կլիմա ունեցող Հայաստանի համար բացառիկ նշանակություն ուներ ոռոգումը, ուստի երկրի հիմնական նահանգներում՝ Այրարատում, Սյունիքում, Վասպուրականում, կառուցվում են ջրամբարներ, ջրանցքներ:
- 3) Խաղաղ ու նպաստավոր էին Աշոտ II-ի թագավորության վերջին տարիները. նա անգավակ էր, ուստի նրա մահվանից հետո գահին անցավ նրա եղբորը՝ Կարսի կառավարիչ Մուշեղին:
- 4) Կենտրոնական իշխանության հզորացմանն ու երկրի բարեշինմանն էր ձգտում նաև Հայոց եկեղեցին:

**45. Ստորև բերված պնդումներից որն է սխալ.**

- 1) Բագրատունյաց Հայաստանի վերելքի շրջանում ավատատիրությունը վաղ միջնադարյան փուլից թևակոխեց զարգացած ավատատիրության դարաշրջան:
- 2) Բագրատունիները Մամիկոնյաններից իրենց անցած Շիրակի Անի ամրոցը դարձրին երկրի մայրաքաղաք:
- 3) Սմբատաշեն պարիսպները կառուցվել են 977–989 թթ.:
- 4) Գագիկ I-ի օրոք հայկական տարածքների մեծ մասը միավորվել էր կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

**46. Ընտրել երկու սխալ պնդումները.**

- ա. Բագրատունյաց թագավորության մեջ արքայական կալվածքները տնօրինողները ենթարկվում էին իշխանաց իշխանին:
- բ. Բագրատունյաց արքունիքում իշխանաց իշխանը թագավորին հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար, և նրան էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:
- գ. Բագրատունյաց պետության մեջ իշխանաց իշխանն էր տնօրինում պետական գանձարանը և բանակը, և այդ պաշտոնը սովորաբար տրվում էր արքաեղբորը կամ գահաժառանգին:
- դ. Բագրատունյաց թագավորության մեջ իշխանաց իշխանին էին ենթարկվում ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները և թագավորական կալվածքները տնօրինողները:
- ե. Բագրատունյաց պետության մեջ իշխանաց իշխանն էր տնօրինում պետական գանձարանը, և այդ պաշտոնը սովորաբար տրվում էր արքաեղբորը կամ գահաժառանգին:

- 1) ա, գ                      2) գ, դ                      3) բ, ե                      4) դ, ե

#### **47. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Դվինի միջնաբերդը կառուցված էր Ախուրյան գետի ափին՝ մի ժայռաբլրի վրա, և շրջապատված էր պարիսպներով, իսկ դրա շուրջը տարածված էր ընդարձակ քաղաքը, որը նույնպես պարսպապատ էր:
- 2) Բագրատունյաց Հայաստանից արտահանվում էին որդան կարմիր, մետաղներ, ձիեր, ջորիներ, թանկագին քարեր, համեմունքներ, չինական ու միջինասիական մետաքս, գործվածքեղեն, ռուսական մորթիներ ու մուշտակներ, հացահատիկ, ներկեր և այլ ապրանքներ:
- 3) Բագրատունյաց Հայաստանում (IX–XI դդ.) հողօգտագործման եղանակների մեջ կատարված տեղաշարժերից նշանակալից էր ավատատիրական խոշոր տնտեսության՝ տերունի մեծածավալ կալվածքների առաջացումը:
- 4) Բագրատունյաց Հայաստանում եկեղեցին ապահովում էր երկրի միասնությունը, ուստի հայոց թագավորները կաթողիկոսի ընտրության ժամանակ վճռական խոսքի իրավունքը վերապահել էին իրենց:
- 5) Բագրատունյաց ժամանակաշրջանում դաշտավարության մեջ կարևոր նորույթ էր երկաթե խոփով արորի տարածումը, որն օգտագործվում էր խոշոր տնտեսություններում և խոպան հողերը յուրացնելիս:
- 6) Բագրատունի թագավորները պետությունը կառավարում էին բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների կամ գործակալությունների միջոցով, և այդ պաշտոններում նշանակվում էին արքայական տան ներկայացուցիչներ կամ արքային հավատարիմ խոշոր ավատատերեր:
- 7) Բագրատունիների օրոք պահպանվեց նաև Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև, քանի որ հայոց կաթողիկոսը չէր ճանաչում թագավորի գերիշխանությունը:

#### **48. Բագրատունյաց Հայաստանի տնտեսությանը վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Ոչխարներից ստացվող բուրդն օգտագործվում էր գորգեր, հագուստ ու տարատեսակ գործվածքներ պատրաստելու համար:
- 2) Ձիերը, ավանակները և խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես հիմնական փոխադրամիջոց. բեռներ էին տեղափոխում կամ օգտագործվում որպես քաշող ուժ սայլերի, կառքերի համար:
- 3) Բնակչության տնտեսական կյանքում որոշ տեղ էին զբաղեցնում նաև որսորդությունը, ձկնորսությունը, մեղվաբուծությունը:
- 4) Հատկապես զարգացավ մետաղագործությունը՝ դարբնությունը, զինագործությունը, թնդանոթագործությունը և պղնձագործությունը:
- 5) Բարձր զարգացման էր հասել կավագործությունը. կավե ամանները լայն տարածում ունեին բնակչության կենցաղում:
- 6) Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ մեծ տեղ էին զբաղեցնում հնդկական համեմունքները, գինին, ջորիները, բուրդը, բամբակը, աղը, օճառը, թանկագին քարերը:

**49. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Երկրագործության համար Հայաստանը բարենպաստ պայմաններ ուներ:
- 2) Վաղ ավատատիրության շրջանում բարձր առաջադիմություն ապրեցին երկրագործությունն ու երկրագործական տեխնիկան:
- 3) IX–XI դարերում աճեց մշակելի հողերի տարածումը խոպան հողերի հաշվին:
- 4) Երկրագործության կարևոր պայմաններից էր հողի ոռոգումը. ընդարձակվեց ոռոգման ցանցը:
- 5) Կառուցվում էին նոր ջրանցքներ ու ջրամբարներ, քանի որ Վանի թագավորության շրջանից մնացած բոլոր ջրանցքները պիտանի չէին օգտագործման համար:
- 6) Ընդարձակվում էին տեխնիկական բույսերի՝ բամբակի, քնջութի, կտավատի, կանեփի մշակումը:
- 7) Գյուղատնտեսության ճյուղերից զարգանում էին նաև այգեգործությունն ու բանջարաբուծությունը:
- 8) VII–IX դարերում հողօգտագործման եղանակներից նշանակալից էր ավատատիրական խոշոր տնտեսության՝ տերունի մեծածավալ կալվածքների առաջացումը:

**50. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Բագրատունյաց Հայաստանում պետության գլուխ կանգնած էր թագավորը:
- 2) Երկրի ներքին և արտաքին բոլոր հիմնական հարցերը վճռում էր իշխանաց իշխանը:
- 3) Բագրատունյաց թագավորն ինքնակալ միապետ էր և անձամբ էր լուծում պետության գործերը:
- 4) Թագավորը կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ մեծամեծ պաշտոնյաների հետ:
- 5) Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ նաև եղբայրը:
- 6) Բագրատունյաց բանակը կազմված էր արքունական և սակրավորների գնդերից:
- 7) Բագրատունյաց մշտական բանակը պատերազմի ժամանակ համալրվում էր, և թվակազմը հասնում էր 60 հազարի:
- 8) Փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու սովորությամբ իրավունքներով:

**51. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Գագիկ II–ը լավ կրթություն ստացած, հունարենին տիրապետող և հոր քաջությունը ժառանգած երիտասարդ էր:
- 2) Գագիկը II–ը պայքար սկսեց երկիրը ներսից քայքայողների դեմ. նա բանտարկեց արքունի գանձերը հափշտակած դավաճան Պետրոս կաթողիկոսին:
- 3) Բյուզանդական կայսրը հաշտություն կնքելու պատրվակով Գագիկ II–ին հրավիրեց Կոստանդնուպոլիս:
- 4) Վահրամ Պահլավունին և նրա կողմնակիցները, հրավերի մեջ խարդավանք տեսնելով, դեմ են կանգնում այցելությանը, սակայն 1044 թ. Գագիկը մեկնում է Կոստանդնուպոլիս:

**52. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Գուրգեն թագավորը, ստանալով տեղական Կյուրիկե անվանումը, հիմք դրեց Կյուրիկյան հարստությանը:
- 2) Տաշիր-Ձորագետի թագավորությունը զբաղեցնում էր Գուգարք նահանգի մեծագույն մասը:
- 3) Վանանդն ընդարձակեց իր թագավորության տարածքը Գանձակի և Թիֆլիսի ամիրայությունների հաշվին:
- 4) Կյուրիկյան թագավորությունն առավել հզորության հասավ Դավիթ Անհողինի՝ շուրջ 60 տարի տևած կառավարման շրջանում:
- 5) Տաշիր-Ձորագետի թագավորությունը գոյություն ունեցավ մոտ մեկ դար՝ մինչև 1065 թվականը:

**53. XII դարում Սյունիքի թագավորությունն ուներ՝**

- 1) 43 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 2) 40 ամրոց ու բերդ, 43 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 3) 40 ամրոց ու բերդ, 72 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 4) 72 ամրոց ու բերդ, 43 վանք և 1200-ից ավելի գյուղ ու ավան

**54. Ո՞ր քաղաքներն էին գտնվում Վասպուրականով անցնող միջազգային առևտրի հարավային ուղու վրա.**

- 1) Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը
- 2) Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Կարինը
- 3) Վանը, Արճեշը, Մամեստիան, Խլաթը
- 4) Արծնը, Բերկրին, Արճեշը, Անին

**55. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) 896 թ. երկրաշարժի հետևանքով Դվինում շատ շենքեր ավերվել էին, և երկրի մայրաքաղաքի դերը Դվինը զիջեց Վանին:
- 2) Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքն Անին էր:
- 3) Անի քաղաքի բնակչությունը կավե խողովակներով 12 կմ հեռավորությունից խմելու ջուր էր ստանում:
- 4) Բագրատունյաց Հայաստանում պետության գլուխ կանգնած էր թագավորը:
- 5) Անին ուներ քաղաքային ինքնավարություն, որի գլուխ կանգնած էր իշխանաց իշխանը:
- 6) Թագավորը պետությունը կառավարում էր բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների կամ գործակալությունների միջոցով:
- 7) Բագրատունյաց ենթակա թագավորությունների մեջ Սյունիքի թագավորությունն ամենաընդարձակն էր, սակայն գոյատևեց ամենակարճը:
- 8) Արծրունիներն ընդունում էին Բագրատունիների գերիշխանությունը, որը հաճախ ձևական բնույթ էր կրում:



**56. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման գլխավոր խոչընդոտ հանդիսացավ Բյուզանդական կայսրությունը, որը, տիրելով երկրի մեծ մասին, վերջ տվեց նաև Անիի Բագրատունյաց թագավորությանը:
- 2) Պատմական աղբյուրների համաձայն՝ XI դ. սկզբին Սյունիքն ուներ 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000–ից ավելի գյուղ ու ավան, իսկ բնակչության թիվը հասնում էր մոտ 1 միլիոնի:
- 3) Տաշիր–Ձորագետի թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Կյուրիկե I–ի՝ մոտ 60 տարի տևած կառավարման շրջանում, երբ թագավորության տարածքը զգալիորեն ընդարձակվեց Թիֆլիսի և Գանձակի ամիրայությունների հաշվին:
- 4) Բագրատունյաց թագավորության կործանումը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար, և հայ ժողովուրդը դարեր շարունակ բուն երկրում կորցրեց իր միասնական ու լիակատար անկախ պետականությունը:
- 5) Վրաց թագավորի և Վահրամ Պաղպատունու միջնորդությամբ կայացած հաշտության համաձայն՝ Աշոտ IV–ը ստացավ Անի քաղաքը և Շիրակը, իսկ Հովհաննես–Սմբատը ժառանգեց հոր գահը և ստացավ Սևանի ավազանը, Գուգարքը և մի շարք այլ գավառներ:
- 6) Բյուզանդական Կոստանդին Մոնոմախ կայսրը Սենեքերիմ Արծրունուն հարկադրեց կայսրությանը հանձնել Վասպուրականը, որի փոխարեն ստացավ Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով:
- 7) Անիի Բագրատունիներին ենթակա Սյունիքի թագավորությունը համեմատաբար երկար կյանք ունեցավ և մեծ վերելք ապրեց Վասակ թագավորի օրոք ու իր գոյությունը պահպանեց մոտ երկու հարյուր տարի:

**57. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա. Իր ազդեցիկ դիրքը պահպանում և Բյուզանդիայի ոտնձգություններին հաջողությամբ ընդդիմանում էր Հայաստանի հյուսիսային ընդարձակ տարածքները զբաղեցնող Տաշիր–Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը:
- բ. Իր կյանքի վերջին տարիներին Դավիթ Անհողինը, չնայած պատկառելի տարիքին, ծրագրել էր բյուզանդացիներից Անին ազատագրել և հասնել իր վաղեմի երազանքին, սակայն վերահաս սելջուկյան արշավանքները ձախողեցին այդ ծրագիրը:
- գ. Կյուրիկեի օրոք ևս Սյունին դարձավ թագավորանիստ, աճեց պղնձի հանքերի շահագործումը, հատկապես մեծ զարգացում ապրեց գյուղատնտեսությունը:
- դ. Աշոտ իշխանի որդի Սմբատին պատմիչները անվանում են Սմբատ Աշոտյան:
- ե. Սյունյաց թագավորությունը ևս կարողացավ դիմակայել ժամանակի փորձություններին և հաջող պայքար մղելով նախ Գանձակի ամիրայության, ապա սելջուկների դեմ՝ իր դիրքերը պահպանեց մինչև XIV դարի երկրորդ կեսը:

- 1) ա, գ                      2) գ, ե                      3) բ, գ                      4) դ, ե

**58. Ստորև բերված պնդումներից առանձնացնել երեքը, որոնք վերաբերում են Անիի թագավորության անկումից հետո Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականությանը.**

- 1) Բյուզանդական արքունիքը, տիրանալով Հայաստանի մեծ մասին և ձգտելով ավելի թուլացնել այն, նվաճված երկրամասերի հայ ազնվականությանն երկրից հեռացնելու նոր ձեռնարկումներ կատարեց:
- 2) Հայ իշխաններին բարձր տիտղոսներ շնորհվեցին, կայսրության արևմտյան շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ:
- 3) Բյուզանդիան ձգտում էր հզորացնելու հայոց բանակը:
- 4) Բյուզանդացիները ձգտում էին հայերին դարձնելու կաթոլիկ՝ միաժամանակ ճանաչելով հայ իշխանների հողային սեփականության իրավունքները:
- 5) Բյուզանդիան հայկական զորքերը ցիրուցան արեց, մի մասն էլ քշվեց տերության խորքերը:
- 6) Սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Ղրիմ, Իրան, Վրաստան և այլ շրջաններ, բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման:
- 7) Պայքարի սլաքն ուղղվեց Հայ եկեղեցու դեմ, նույնիսկ Անիի անկման հարցում բյուզանդացիներին օժանդակած Սարգիս կաթողիկոսին բյուզանդացիները կանչեցին Կ. Պոլիս և արգելեցին վերադառնալ հայրենիք:
- 8) Բյուզանդիան, կազմակերպելով քոչվորական ցեղախմբերի ներհույժ Հայաստան, ձգտում էր հայերին ձուլելու նրանց հետ:

**59. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Նվաճումների սկզբնական շրջանում մոնղոլները Հայոց եկեղեցու նկատմամբ մեղմ քաղաքականություն էին վարում, սակայն XII դ. վերջին, երբ մոնղոլներն ընդունեցին իսլամը, քրիստոնյաների նկատմամբ հալածանքները խիստ սաստկացրին:
- 2) Սելջուկյան ավերիչ արշավանքներին Տաշիր-Ձորագետի և Սյունիքի թագավորությունները դիմակայեցին և, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնեցին իրենց տիրույթները, իսկ Հայաստանի հարավում պահպանվեց Սասունի Թոռնիկյանների իշխանությունը:
- 3) Դավիթ Շինարարի շուրջը համախմբվեցին մեծաթիվ հայ իշխաններ, և հայ զորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի բարձրացրեց Վրաստանի հեղինակությունը սելջուկների լծից ազատագրվել ցանկացող հայ ժողովրդի աչքում:
- 4) Թեև վրաց Գեորգի III թագավորի օրոք հայ-վրացական զորքերը 1165 թ. ազատագրեցին Անին, սակայն կարճ ժամանակ անց՝ 1174 թ., թշնամիները կրկին վերատիրացան Անիին:
- 5) Պատահական դիպվածի հետևանքով գերված Իվանեին վերադարձնելու դիմաց նրա եղբայր Ջաքարե Ջաքարյանը հարկադրված էր դադարեցնել խլաթի պաշարումը և նահանջել:

**60. Ո՞ր տարածքներն են գրավել մոնղոլները 1243 թ.**

- |              |                 |
|--------------|-----------------|
| ա) Տևրիկը    | դ) Երզնկան      |
| բ) Կեսարիան  | ե) Անին         |
| գ) Սեբաստիան | զ) Վասպուրականը |
|              | է) Աղձնիքը      |

- 1) ա, բ, գ, դ      2) ա, բ, գ, ե      3) ա, գ, դ, զ      4) բ, գ, զ, է

**61. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

- 1) Կոստանի ճակատամարտում մոնղոլները կիրառեցին պայքարի խորամանկ ձև. կազմակերպեցին կեղծ նահանջ, իսկ երբ հայ-վրացական ուժերն անցան հակագրոհի, թաքստոցում գտնվող ուժերով հարվածեցին թիկունքից:
- 2) 1231 թ. մոնղոլները մտան Վասպուրական, ավերեցին շատ բնակավայրեր:
- 3) Ծանոթ լինելով Այսրկովկասի իրավիճակին՝ մոնղոլները զորքը բաժանեցին ջոկատների, որոնք իրենց հրամանատարների՝ նոյոնների գլխավորությամբ սկսեցին հպատակեցնել երկրամասը:
- 4) Պաշարված անեցիներն անձնատուր չեղան մոնղոլներին, հարձակվեցին մոնղոլ պատվիրակների վրա և սպանեցին նրանց:
- 5) Անիի բախտին արժանացան նաև Դվին, Կարին, Բայազետ քաղաքները:
- 6) 1242–1243 թթ. մոնղոլական զորքերը շարժվեցին դեպի երկրի արևելյան շրջանները, որոնք այդ ժամանակ Իկոնիայի սուլթանության հսկողության տակ էին:

**62. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Զաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկում էր Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը:
- 2) Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Լոռի-Փամբակում, Գարդմանում և Փառիսոսում, Զաքարյաններից կախյալ ստեղծվել էր Վահրամյանների իշխանությունը:
- 3) Զաքարյանների մի ճյուղ էլ նստում էր Լոռու իշխանության կենտրոն Թմուկ (Թմկա) բերդում:
- 4) 1126 թ., երբ քաղաքում սով սկսվեց, անեցիները քաղաքը հանձնեցին Շադդադյաններին:
- 5) Զաքարեի կրտսեր եղբայր Իվանեն (Հովհաննես, Հովհաննես) դարձավ աթաբեկ:

**63. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Դեռ 1064 թ. գրավված Անին հանձնվեց Շադդադյաններին:
- 2) Հայաստանի հարավում՝ Մոկքում, պահպանվում էր Թոռնիկյանների իշխանությունը:
- 3) Շահ-Արմենների ամիրայության կենտրոնը Վանն էր:
- 4) Պատմական Ուտիքում ձևավորվեց Գանձակի աթաբեկությունը:
- 5) Մահմեդական իշխանությունների դեմ XI դարի վերջին համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները:

#### **64. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Փիլարտոս Վարաժնունին, հենվելով հիմնականում հայերից կազմված զինուժի վրա, կարողացավ որոշ ժամանակ դիմագրավել սելջուկների առաջխաղացմանը դեպի հայկական իշխանության սահմանները:
- 2) 1189 թ. խաչակիրների երկու բանակներ էին մտել Կիլիկիա և ձեռնամուխ եղել Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը, սակայն քանի որ Կոստանդին I-ը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, ուստի խաչակիրները հարկադրված էին համագործակցելու նրա հետ:
- 3) Կիլիկիայի հայկական իշխանությունը հիմնադրման սկզբնական շրջանում ընդգրկում էր Կիլիկիայի միայն մի մասը, իսկ հետագայում զորեղանալով՝ իր մեջ ներառեց նաև Կիլիկիայից դուրս գտնվող մի շարք շրջաններ:
- 4) 1042 թ. Կիլիկիայի կառավարիչ նշանակված Սենեքերիմ Արծրունուն էին հանձնվել Մսիս, Ադանա, Տարսոն քաղաքները և Լամբրոն ու Պապեռոն ամրոցները:
- 5) Փոքր Ասիայում ստեղծված Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին բնորոշ էին թշնամանքը և մշտական ռազմական առճակատումները:

#### **65. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էին ոչ միայն Բյուզանդիան, այլև սելջուկները, ուստի Կոստանդինը հարկադրված էր պայքարելու երկու թշնամիների դեմ:
- 2) 1096 թ. խաչակիրների երկու բանակ մտավ Կիլիկիա և ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը:
- 3) Խաչակիրների հետ սկսեցին համագործակցել նաև Կիլիկիայում հաստատված մյուս հայ իշխանները, մասնավորապես Լամբրոնի տեր Թորոս Կյուրապաղատը:
- 4) Խաչակիրները հաճախ թալանում և ավերում էին հայկական բնակավայրերը՝ բռնազավթելով նաև հայ իշխաններին պատկանող տիրույթները Հյուսիսային Ասորիքում և Տիգրիսի ափերին, որոնց թվում էին Կուրիս, Կարկառ, Պիզու բերդաքաղաքները:
- 5) Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվել էր Փոքր Ասիայում և այստեղ ստեղծել իրենց պետությունը՝ Իկոնիայի սուլթանությունը:

#### **66. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Հենվելով հիմնականում հայերից կազմված ռազմական ուժի վրա՝ Փիլարտոսը կարողացավ որոշ ժամանակ կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը դեպի հայկական իշխանության սահմանները:
- 2) Սելջուկները գրավեցին համարյա ողջ Դաշտային Կիլիկիան, այդ թվում՝ Տարսոն, Մսիս և Ադանա քաղաքները, իսկ 1084 թ.՝ Անտիոքը:
- 3) Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում ձևավորվեց Գող Վասիլի իշխանությունը՝ Քեսուն կենտրոնով:
- 4) Ռուբեն իշխանը, հենվելով Դաշտային Կիլիկիայում հաստատված հայերի օժանդակության վրա, ապստամբություն բարձրացրեց բյուզանդացիների դեմ և ամրացավ Սիս բերդում:

- 5) Ռուբեն իշխանը հիմնադրեց հայկական նոր իշխանություն, որը նրա անունով կոչվեց Ռուբինյան:
- 6) Ռուբեն I-ը 1098 թ. բյուզանդացիներից խլեց Լեռնային Կիլիկիայի ամենանշանավոր Վահկա բերդը և դարձրեց իշխանության կենտրոն:

**67. Ո՞ր քաղաքներն ու բերդերն էր ստացել Ապլղարիպ Արծրունին.**

- 1) Ադանա, Սիս, Մամեստիա քաղաքները, Լամբրոն ու Պապեռոն բերդերը
- 2) Ադանա, Սիս, Տարսոն քաղաքները, Ծամնդավ ու Կոռոմոզոլ բերդերը
- 3) Ադանա, Մսիս, Տարսոն քաղաքները, Լամբրոն ու Պապեռոն բերդերը
- 4) Ադանա, Մսիս, Տարսոն քաղաքները, Կոռոմոզոլ ու Կոռիկոս բերդերը

**68. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ապլղարիպ Արծրունին Կապադովկիայից Սեբաստիա էր տեղափոխվել Սենեքերիմ Արծրունու հետ:
- 2) 1044 թ. Ապլղարիպ Արծրունին նշանակվեց Կիլիկիայի կառավարիչ (ստրատեգոս):
- 3) Ապլղարիպ Արծրունուն էին հանձնվել Ադանա, Տարսոն, Մսիս քաղաքները և Կոռիկոս ու Պապեռոն բերդերը:
- 4) Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզոս քաղաքում:
- 5) 1067 թ. Կարսի թագավոր Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց կայսրից ստացավ Կիլիկյան Տավրոսում գտնվող Պիզոս քաղաքը:
- 6) Կիլիկիայում և սահմանամերձ շրջաններում հաստատված հայ իշխանները փորձեցին օգտվել Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդիայի թուլացումից և վերականգնել հայոց պետությունը:
- 7) Փիլարտոս Վարաժնունին Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում հիմնադրեց ուժեղ և ընդարձակ հայկական իշխանություն:

**69. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Կիլիկիայում հաստատված հայերը հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով, լեռնային արդյունագործությամբ:
- 2) X դարի սկզբին սկսվում է հայ բնակչության զանգվածային արտագաղթ՝ Կիլիկիա, Կապադովկիա, Ասորիք, Հյուսիսային Միջագետք, որը հիմնականում պայմանավորված էր թուրք-սելջուկների ավերիչ արշավանքներով և Բյուզանդիայի վարած քաղաքականությամբ:
- 3) Հարկադրական արտագաղթի հետևանքով արդեն XI դարի երկրորդ կեսից, Ուրմիո լճից արևելք գտնվող հայաբնակ շրջաններից բացի, հայերը մեծամասնություն էին կազմում նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք գավառներում:
- 4) Բյուզանդիան Հայաստանից Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք, Հյուսիսային Միջագետք էր տեղափոխում հիմնականում արքայական և իշխանական ընտանիքներին, այդ թվում՝ Ջաքարյաններին ու Բագրատունիներին:
- 5) Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում հայկական աղբյուրներն այս երկիրն անվանել են «Հայոց աշխարհ», «Կիլիկյան Հայաստան»:



- 6) Կիլիկյան Հայաստանի նշանավոր տիրակալ Մլեիը դաշնակցեց Հալեպի ամիրայության հետ և խաչակիրներից հետ գրավեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը:
- 7) 1197 թ. Սրբազան հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսը պատվիրակության միջոցով թագ ուղարկեց Լևոն Մեծագործին, այնուհետև Լևոնին թագ ուղարկեց նաև Բյուզանդիայի կայսր Հովհաննես III Կոմնենոսը:

**73. Ովքեր են թագ ուղարկել Լևոն II-ին.**

- |                          |                   |         |         |
|--------------------------|-------------------|---------|---------|
| ա) Հենրիխ VI-ը           | դ) Բոհեմունդ IV-ը |         |         |
| բ) Ալեքսիոս III Անգելոսը | ե) Հերակլը        |         |         |
| գ) Ֆրիդրիխ Շիկամորուսը   |                   |         |         |
| 1) ա, բ                  | 2) ա, գ           | 3) բ, դ | 4) գ, ե |

**74. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա պետությունն էր:
- բ) Եգիպտոսի հզորացումից ու Տրիպոլիի կոմսության անկումից հետո պարսիկների վիճակը խիստ ծանրացել էր:
- գ) Խաչակիրներին օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ:
- դ) Արքայական թագ ձեռք բերելու գործում Լևոնը բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազան հռոմեական կայսրության կայսր Բոհեմունդ IV-ի հետ:
- ե) Լևոնի թագադրության հարցով շահագրգռված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել հռոմեական կաթոլիկ եկեղեցուն:
- 1) ա, գ                      2) բ, դ                      3) բ, ե                      4) գ, ե

**75. Բերված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք վերաբերում են 1194 թ. Սիս քաղաքում Լևոն II-ի և Բոհեմունդ III-ի միջև կնքված հաշտության պայմանագրի պայմաններին.**

- 1) Բոհեմունդը Կիլիկիային վերադարձրեց նրանից խլված տարածքները. սրա դիմաց Լևոնն առանց փրկագնի ազատ արձակեց Անտիոքի իշխանին:
- 2) Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել Հայ-խաչակրաց միացյալ պետություն:
- 3) Հենրիխ VI-ը պետք է պատվիրակության միջոցով թագ ուղարկեր Լևոն II-ին՝ փոխադարձը ստանալու պայմանով:
- 4) Լևոնի թագադրումը ճանաչում էին Սրբազան հռոմեական կայսրությունը և պապականությունը՝ Հայոց եկեղեցին հռոմեական կաթոլիկ եկեղեցուն ենթարկելու պայմանով:
- 5) Լևոն I թագավորն արտոնություններ պետք է շնորհեր Ջենովայի, Վենետիկի ու մի շարք այլ քաղաքների վաճառականներին:

- 6) Երկու երկրների միջև բարեկամություն հաստատելու համար կողմերը որոշեցին Բոհեմունդի ավագ որդիի և Ժառանգորդ Ռայմոնդին ամուսնացնել Լևոնի եղբայր Ռուբենի ավագ դստեր Ալիսի հետ:
- 7) Ռայմոնդի և Ալիսի ամուսնությունից ծնված արու ժառանգը պետք է ժառանգեր Երուսաղեմը և Հայաստանը:

**76. Ստորև բերված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.**

- ա) Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեն:
- բ) Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեի որդի Ռուբենը:
- գ) Օգտվելով Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև առաջացած թշնամանքից՝ Ստեփանեն գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջանները, որի շնորհիվ Կիլիկիայում վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը:
- դ) Եգիպտոսում ուժեղացել էր Այուբյան սուլթանությունը:
- ե) Սուլթան Սալահ ադ Դինը Եգիպտոսին միացրեց Ասորիքն ու Իրանի մի մասը և պայքար սկսեց խաչակիրների դեմ:
- զ) Սալահ ադ Դինը 1187 թ. պարտության մատնեց խաչակիրներին և գրավեց Երուսաղեմը:
- է) Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը նույնպես վերելք էր ապրում և իր հզորության գագաթնակետին էր:

- 1) ա, գ, է                      2) ա, գ, ե                      3) բ, դ, զ                      4) բ, ե, է

**77. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Մլեհի իշխանության տարիներին Դաշտային Կիլիկիան կրկին Բյուզանդիայի տիրապետության տակ էր. միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին խաչակիրներին:
- 2) Մլեհը դաշնակցեց Տրիպոլիի ամիրայի հետ:
- 3) Մլեհը խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը:
- 4) Մլեհը խաչակիրներից ազատագրեց Ադանա, Մսիս և Անարզաբա քաղաքները:
- 5) Մլեհը բարեկարգեց Սիս քաղաքը և դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
- 6) Մլեհի վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը:
- 7) Հարևան Եգիպտոսի և Իրանի հետ գործակցելու քայլերից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին Մլեհին:

**78. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Լեոնային Կիլիկիայում ձևավորված Ռուբինյան պետության հետագա գոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը:
- 2) Անհրաժեշտ էր նվաճել Միջերկրական ծովի ափերի նավահանգիստները, հակառակ դեպքում՝ լեռներում ծվարած հայկական փոքրիկ պետությունը չէր կարող երկար գոյություն ունենալ:



- 3) Թորոս I-ի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակվեցին դեպի հյուսիս:
- 4) 1107 թ. Թորոս I-ը գրավեց Սիս և Անավարզա (Անարզաբա, Անաբարզա) քաղաքները:
- 5) Լևոն I-ի ժամանակ Անավարզան դարձավ մայրաքաղաք:
- 6) Լևոն I-ի և Փիլարտոսի միացյալ զորքերը Բերդուսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սելջուկյան զորքերին և դուրս քշեցին երկրից:
- 7) Լևոն I իշխանը կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի և Թորոսի հետ շղթայակապ տարվեց Կոստանդնուպոլիս:
- 8) Օգտվելով իր կիսազատ վիճակից՝ Լևոն II-ը փախուստի է դիմում, վերադառնում Կիլիկիա և գլխավորում հայ ժողովրդի ազատագրական պայքարը, նրան են միանում իր երկու եղբայրները՝ Մլեհն ու Ռուբենը:

**79. Ինչ պայմանով էր Կիլիկիայի արքունական խորհուրդը գահը հանձնել Ֆիլիպին.**

- 1) Ֆիլիպը Կիլիկիան պետք է կառավարեր խաչակրաց պետություններում ընդունված օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը:
- 2) Ֆիլիպը Կիլիկիան պետք է կառավարեր հայկական օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը:
- 3) Ֆիլիպը Կիլիկիան պետք է կառավարեր խաչակրաց պետություններում ընդունված օրենքներով և դառնար Հայոց եկեղեցու դավանանքի հետևորդ:
- 4) Ֆիլիպը Կիլիկիան պետք է կառավարեր հայկական օրենքներով և դառնար Հայոց եկեղեցու դավանանքի հետևորդ:

**80. Տրված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ չեն գտել Հեթում I-ի և Մանգու խանի միջև կնքված հայ-մոնղոլական դաշինքում.**

- 1) Մոնղոլական տերությանը հարկատու լինելու պայմանով մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 2) Մոնղոլական տերությունը և Կիլիկիան պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ:
- 3) Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 4) Իկոնիայի սելջուկների հարձակումներից պաշտպանվելու նպատակով Կիլիկիայի սահմանամերձ բերդերում պետք է տեղակայվեին մոնղոլական կայազորեր, որոնց ծախսերը հոգալու էին հայերը:
- 5) Մոնղոլները խոստանում էին վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից, իսկ հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատել հարկերից:

### 81. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Թեև Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսի հրավիրած Սսի եկեղեցական ժողովը վերահաստատեց Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները, սակայն Եվրոպայի քրիստոնեական պետություններն այդպես էլ օգնական զորքեր չուղարկեցին մահմեդականների շրջափակման մեջ հայտնված Կիլիկիային:
- 2) Կիլիկյան ավագանու՝ Տարսոն քաղաքում հրավիրած ժողովը որոշեց Զաբեյին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ, որով էլ վերջապես լուծում էր ստանալու գահակալության խնդիրը:
- 3) Հայ-մոնղոլական դաշինքի ստորագրումը նախապատրաստելու նպատակով Հեթում I-ի հայր Կոստանդին Գունդստաբլը մեկնեց Կարակորում և բանակցություններ վարեց Մանգու մեծ խանի հետ:
- 4) 1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը, սակայն 1260 թ. տեղի ունեցած ճակատամարտում հայ-մոնղոլական զորքերը ծանր պարտություն կրեցին մամլուքներից:
- 5) Կիպրոսի և քրիստոնյա Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունն ապահովելու նպատակով Կիլիկյան Հայաստանի արքունի խորհուրդը 1342 թ. որոշեց կիլիկյան գահը հանձնել Գվիդոն Լուսինյանին:

### 82. Կիլիկիայի հայ բնակչության և իշխանների մի մասը հիմնականում ո՞ր տեղափոխվեց թագավորության անկումից հետո.

- |                               |                                |
|-------------------------------|--------------------------------|
| 1) Եգիպտոս, Ֆրանսիա, Գերմանիա | 3) Կիպրոս, Իտալիա, Ֆրանսիա     |
| 2) Կիպրոս, Անտիոք, Հունգարիա  | 4) Իտալիա, Կապադովկիա, Ֆրանսիա |

### 83. Գտնել ճիշտ պնդումները.

- 1) Լևոն V-ը Գվիդոն Լուսինյանի եղբորորդին էր, որը մեծ դժվարությամբ Կիպրոսից հասնում է Սիս և օժվում հայոց թագավոր:
- 2) Լևոն V-ի ժամանակ Կիլիկյան հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում:
- 3) Ասորիները և կարամանները (մոնղոլական ցեղ) 1375 թ. կրկին պաշարում են մայրաքաղաք Սիսը:
- 4) Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպում է հայերին 1372 թ. ապրիլի 6-ին հանձնել Սսի միջնաբերդը:
- 5) Սսի գերյալների թվում էին Լևոն V Լուսինյանը և իր ընտանիքը, Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը, որոնց հատուկ հսկողությամբ տարան Կահիրե:
- 6) Եգիպտոսի սուլթանը Պողոս Սսեցի կաթողիկոսին թույլատրեց վերադառնալ Կիլիկիա:
- 7) Լևոն V թագավորը մնում է Կահիրեում, իսկ հետագայում գերությունից ազատվում է և տեղափոխվում Անտիոք:

**84. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.**

- 1) Մամուլքները 1320 թ. պաշարեցին Սիս քաղաքը, սակայն հանդիպելով ուժեղ դիմադրության՝ չկարողացան գրավել այն:
- 2) 1322 թ. մամուլքները գրավեցին Այաս նավահանգիստը, ավերեցին ծովային ու ցամաքային ամրությունները:
- 3) Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին մեկնում է Կահիրե:
- 4) Համաձայն հայ-եգիպտական հաշտության պայմանագրի՝ Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին տարեկան վճարել 50000 արծաթ դիրհեմ՝ Այաս նավահանգստից, ինչպես և օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամուտների կեսը:
- 5) Լևոն IV-ին հաջորդել է նրա հորաքրոջ որդին՝ Մեսրոպ Արտազեցին:

**85. Բերված պնդումներից առանձնացնել երեքը, որոնք արտահայտում են 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի պայմանները.**

- ա) Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- բ) Հայերի բարեկամությունը շահելու համար մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:
- գ) Մոնղոլները պարտավորվեցին օգնել հայերին Ասորիքը և Պաղեստինը գրավելու գործում:
- դ) Հայերը պարտավորվում էին փոխարենը Հայոց եկեղեցին ենթարկեցնել Հռոմի պապականությանը:
- ե) Կիլիկյան Հայաստանի, Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների և պապականության հետ բանակցություններում մոնղոլները պարտավորվում էին պաշտպանել հայերի դիրքորոշումը:
- զ) Մոնղոլները մասնավորապես պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
- է) Մոնղոլները համաձայնեցին, որ Կիլիկիան միավորվի Զաքարյանների իշխանապետության հետ:

1) ա, գ, դ

3) բ, գ, ե

2) ա, բ, գ

4) բ, ե, է

**86. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Կիլիկյան Հայաստանի գահը Ֆիլիպին հանձնվեց որոշակի պայմաններով. երկիրը պետք է կառավարեր հայկական օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը:
- 2) Կիլիկյան Հայաստանի գահին նստելուց հետո Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը, հովանավորել խաչակիրներին, կողոպտել արքունի գանձերը և ուղարկել Անտիոք:
- 3) Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի գահագրկումից հետո հայ ավագանին Սսում ժողով է հրավիրում՝ գահակալության խնդիրը լուծելու համար:

- 4) Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հայոց թագավոր հռչակվելով հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:
- 5) XIII դ. կեսերին գրավելով Այսրկովկասն ու Հայաստանը՝ մոնղոլական հորդաները մտան Փոքր Ասիա:
- 6) Կոստանդին թագավորահայրը մեկնեց մոնղոլների հրամանատար Հուլավուի մոտ և առաջարկեց դաշինք կնքել:

**87. Կիլիկյան Հայաստանին վերաբերող ստորև տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվում էր աշխարհագոր:
- 2) Սահմանվել էր ասպետի աստիճան:
- 3) Մշտական բանակ պահելու համար մտցվեց ռազմական հարկ:
- 4) Մեծ տեղ ունեին ռազմատոհային ուժերը:
- 5) Ռազմական նավատորմի համար հատկապես կարևորվում էր Վահկա և Կոռիկոս ծովային բերդերի նշանակությունը:
- 6) Ռազմական նավատորմն անհրաժեշտ էր ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար:

**88. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Կիլիկյան Հայաստանում կանցլերի պաշտոնը սովորաբար տրվում էր Սսի արքեպիսկոպոսին կամ կրթված և լեզուներ իմացող այլ հոգևորականի:
- 2) Սպարապետությունը Կիլիկյան Հայաստանում Հեթումյանների ժառանգական պաշտոնն էր:
- 3) Կիլիկյան Հայաստանի բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ սպասալարի դերը:
- 4) Սպարապետի անմիջական տեղակալը ամիրսպասալարն էր:
- 5) Կիլիկյան Հայաստանի մշտական բանակի կազմակերպումը սկսվեց Հեթումյանների օրոք:
- 6) Հայոց թագավորների և իշխանների հետ Կապադովկիա, Կիլիկիա և Հյուսիսային Միջագետք տեղափոխվեց նաև նրանց ռազմական ուժերի մի մասը:
- 7) Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ էին զբաղեցնում հոգևորասպետական միաբանությունների զորքերը:

**89. Բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Սսի անկումից հետո Կիլիկիայում իր գոյությունը շարունակում էր հայոց կաթողիկոսությունը:
- 2) Հայոց պետականության անկումից հետո Կիլիկիայում դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանում էին մեծ թվով հայ իշխանական տներ:
- 3) Նեղվելով կարամանների ու մոնղոլների հարձակումներից, նաև ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության և իշխանների մի մասը թագավորության անկումից հետո ստիպված հեռացավ հայրենիքից:

- 4) Կիլիկյան Հայաստանում պետության կառավարման գլխավոր մարմինն արքունիքն էր:
- 5) Կիլիկյան Հայաստանում արքունիքի գլուխ սկզբում կանգնած էր իշխանը, իսկ այնուհետև՝ թագավորը:
- 6) Կիլիկյան Հայաստանի կենտրոնական կառավարման համակարգում մեծ էր արքունի պալատի կառավարչի՝ սպասալարի դերը:
- 7) Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ էին զբաղեցնում արաբ վարձկաններից կազմված զորքերը:
- 8) Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ դուրս բերել մինչև 80-100-հազարանոց բանակ:

**90. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) Կիլիկիայում 1375 թ. թագավորության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական աթոռը մնաց անպաշտպան:
- բ) Կտրված լինելով բուն Հայաստանից՝ Սսի կաթողիկոսական աթոռը չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը:
- գ) Հայ հոգևորականության ներկայացուցիչները մի քանի անգամ դիմեցին Ներսես Բ Բագրևանդոցն՝ առաջարկելով իր նստավայրը Սսից փոխադրել Էջմիածին, սակայն մերժում ստացան:
- դ) Էջմիածնում Մայր Աթոռի վերահաստատումից հետո Կիլիկիայի կաթողիկոսությունը դադարեցրեց իր գոյությունը:
- ե) Կ. Պոլսի հայոց պատրիարքը հաստատվում էր սուլթանի հրովարտակով:

- |         |         |
|---------|---------|
| 1) ա, գ | 3) գ, ե |
| 2) գ, դ | 4) բ, ե |

**91. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Շահ Աբասն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների հետ, ֆրանսիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը, ձուլվեցին թնդանոթներ:
- 2) XVII դարի սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ:
- 3) Շահ Աբասը 1603 թ. սկսեց կորցրած տարածքների վերագրավումը:
- 4) Շահ Աբասը մեծ բանակով հարձակվեց ու գրավեց Թեհրանը, անցնելով Ախուրյանը՝ գրավեց Ջուղան ու Նախիջևանը և պաշարեց Երևանի բերդը:
- 5) 1604 թ. թուրքական սուլթանը շահ Աբասի դեմ նոր բանակ ուղարկեց:

**92. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) Աղվանից կաթողիկոսությունը անվանվում է նաև Գանձասարի կաթողիկոսություն:
- բ) XV դարից սկսած՝ Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ Ամարասի վանքը:

- գ) XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան օսմանյան և սեֆյան հակամարտող պետությունների ծանր ու ավերիչ նոր ժամանակները:
- դ) Սև ծովից հարավ-արևմուտք՝ Իրանի Արդեբիլ քաղաքում էր շեյխ Սեֆիի հիմնադրած կրոնական համայնքը:
- ե) Ակ-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը:

1) բ, գ

3) ա, ե

2) բ, դ

4) գ, դ

**93. Ընտրել բացառապես Արևելյան Հայաստանում գտնվող ինքնավար հայկական իշխանություններից կազմված շարքը.**

- 1) Խաչեն, Շատախ, Ջրաբերդ, Վարանդա
- 2) Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ
- 3) Ջրաբերդ, Սասուն, Դիզակ, Խաչեն
- 4) Վարանդա, Խաչեն, Մոկս, Դիզակ

**94. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Միայն XVIII դ. առաջին կեսին գեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ և պահպանեցին իրենց ներքին ինքնուրույնությունը:
- 2) Մելիքները պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում ճնշել խռովարարներին, պատերազմների ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին և պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից:
- 3) Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից 1562 թ. Վենետիկ ուղարկված մահտեսի Շահմուրատի գլխավորած պատվիրակության նպատակն էր եվրոպական տերություններին համոզել, որպեսզի օգնեն հայերին ազատագրվելու թուրք-պարսկական տիրապետությունից:
- 4) Կարա-Յուսուֆի կառավարման վերջին շրջանում Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Վայոց ձորում, Գեղամա երկրում և այլ վայրերում հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը:
- 5) 1605 թ. Արարատյան դաշտ ներխուժած և Վասպուրականում ճմեռած օսմանյան բանակը 1606 թ. տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարտություն կրեց և համաձայնեց հաշտության պայմանագիր կնքելու պարսիկների հետ:
- 6) Օսմանյան թուրքերը 1453 թ.՝ Կ.Պոլիսը գրավելուց երկու տարի հետո, թույլատրեցին հիմնադրել հայոց պատրիարքություն, որը պետք է տնօրիներ Մերձավոր Արևելքի և Օսմանյան պետության հայ համայնքների հոգևոր կյանքը:
- 7) Հայերի բռնագաղթի միջոցով որակյալ արհեստավորներ ու երկրագործներ փոխադրելով ու բնակեցնելով Պարսկաստանի ներքին գավառներում՝ շահ Աբասը հույս ուներ խթանել իր երկրի տնտեսության զարգացումը:

**95. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) Հայաստան մուտք գործած թյուրքական և քրդական ցեղախմբերն անզիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ՝ փորձելով ամրապնդել իրենց տիրապետությունը երկրում:
- բ) Քոչվոր ցեղախմբերը ստիպված էին լինում համագործակցել հայ իշխանական տների հետ, ճանաչել նրանց հողային սեփականատիրական իրավունքները և իրենց ներկայացնել որպես «Հայաստանի թագավոր» (Շահ-ի Արման):
- գ) Ջահանշահը շարունակում է զգալի չափով ապավինել հայ բնակչության օժանդակությանը, ուստի և նպաստում է հայոց կաթողիկոսարանի վերահաստատմանը Էջմիածնում:
- դ) Կարա-Յուսուֆի կառավարման ժամանակաշրջանում Գեղամա երկրի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանություններն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել մելիքներ:
- ե) Աղթամարի կաթողիկոսական գահին տիրած և իրենց Արծրունյաց թագավորական տոհմից սերած համարվող Սմբատ և Գագիկ Աղթամարցի կաթողիկոսները հավակնում էին ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսի գահին, այլև փորձում էին վերականգնել հայոց թագավորությունը:

- 1) ա, դ                      2) բ, դ                      3) դ, ե                      4) բ, ե

**96. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը անվանվեց Աստվածաշունչ:
- 2) Հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Արաքսի ափին մեծ հանդիսավորությամբ դիմավորում են Վռամշապուհ արքան, Սահակ Պարթև կաթողիկոսը, նախարարագունդ ավագանին՝ ժողովրդի բազմության հետ:
- 3) Մեսրոպ Մաշտոցը՝ հայ դպրության հիմնադիրը, գրել է հոգևոր ճառեր, երգեր, հատկապես շարականներ:
- 4) Մեսրոպ Մաշտոցը տառեր է ստեղծել նաև վրաց և Արաքսի ծախսափնյա բուն Աղվանքի ցեղերից մագքութների համար:
- 5) Սահակ Պարթևի նամակով Մաշտոցը Վարդանի հետ ներկայանում է բյուզանդական կայսր Թեոդոսիոս III-ին, ստանում է նրա համաձայնությունը Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու համար:
- 6) Հայկական դպրոցներ բացելու առաքելությունը երկրի արևմտյան մասում Մաշտոցն իրականացնում է 415-419 թթ.:
- 7) Սահակ Պարթևը մեծ հոգատարությամբ զբաղվում է նաև իր թոռան՝ Վարդան Մամիկոնյանի կրթությամբ:

**97. Գտնել սխալ պնդումները.**

- 1) V դարի վարքագրական գրականության նմուշներից է Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկի նահատակությանը նվիրված վարքագրությունը:
- 2) VI դարում փիլիսոփայությամբ կամ իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը:
- 3) Դավիթ Անհաղթն իր «Եղծ աղանդոց» երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:
- 4) «Սահմանք իմաստասիրութեան» երկում մեծ տեղ է հատկացված բնության ճանաչմանը:
- 5) Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:

**98. Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությանը վերաբերող ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Աշխատության առաջին գրքում հեղինակը պատմական գրավոր սկզբնաղբյուրներից և հայոց բանահյուսությունից քաղված տեղեկությունների հիման վրա պատմում է հայոց անվանադիր նախնի Հայկ Նահապետի ու նրան հաջորդած Հայկազուն սերունդների հայրենանվեր հերոսությունների ու աշխարհաշեն գործունեության մասին՝ մինչև Արտաշես I-ի և նրա զարմերի ժամանակները:
- բ) Պատմահայրը զգալի տեղ է հատկացնում Աստվածաշնչին, ինչպես նաև հին առասպելներին և պատմական ավանդություններին:
- գ) Երկրորդ գրքի շարադրանքում ամփոփված է Ք. ա. V դարի առաջին քառորդից մինչև Ք. հ. IV դարի երկրորդ տասնամյակի պատմությունը:
- դ) Երկրորդ գրքի հիմնական դեմքերն են՝ հայոց Երվանդ, Արտաշես, Տիգրան Մեծ, Արտավազդ, Վաղարշակ, Աբգար, Տրդատ Մեծ թագավորները, Սբ Գրիգոր Լուսավորիչը և մյուս հոգևոր այրերը:
- ե) Պատմահոր աշխատության երրորդ գիրքը կոչվում է «Ավարտաբանութիւն մերոց Հայրենեաց»:
- զ) Երրորդ գրքի պատմական դեմքերն են հայոց թագավորներ Խոսրով Կոտակը, Տիրանը, Արշակ II-ը, Պապը, Վոսմշապուհը, հայոց կաթողիկոսներ Ներսես և Սահակ Պարթևները, հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը և ուրիշ ազգային գործիչներ:

- 1) ա, ե                      2) ա, գ                      3) բ, գ                      4) դ, զ

**99. Թվարկված եկեղեցիներից որո՞նք են կառուցվել VII դարում.**

- |                |                 |
|----------------|-----------------|
| ա) Մրենի       | ե) Ավանի        |
| բ) Գայանե      | զ) Ծիծեռնավանքի |
| գ) Զվարթնոց    | է) Հռիփսիմե     |
| դ) Ս. Էջմիածին |                 |

- 1) ա, գ, դ, ե                      3) ա, գ, ե, զ  
2) ա, բ, գ, է                      4) բ, դ, գ, է



**100. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Սեբեոս պատմիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ-հռոմեական և հայ-պարսկական հարաբերությունների, պարսկա-բյուզանդական հակամարտության, Արցախ և Ուտիք աշխարհների մասին, ինչպես նաև նկարագրում է հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան տիրապետության դեմ:
- բ) Սեբեոս պատմիչի երկն ընդհանուր առմամբ արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների պատմության մասին:
- գ) Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Հռոմեական կայսրության նվաճումների ժամանակաշրջանի, ինչպես նաև օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին:
- դ) Վաղմիջնադարյան Հայաստանի աշխարհագրության և քարտեզագրության անգլագական հուշարձան է Մովսես Խորենացու և նրա գործը շարունակողի՝ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը:

1) ա, գ

3) բ, գ

2) ա, դ

4) բ, դ

**101. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Գլաձորի համալսարանը համահայկական ճանաչում ուներ. այստեղ բարձրագույն կրթություն ստանալու էին գալիս ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ հայկական գաղթավայրերից:
- բ) Հայ մշակույթի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել նաև XIV դարի խոշոր մշակութային կենտրոն Գևորգյան ճեմարանը:
- գ) Տաթևի համալսարանը բեղմնավոր գործունեություն է ծավալել XIV դարի երկրորդ կեսին և XV դարի սկզբին:
- դ) Տաթևի համալսարանում վարդապետի աստիճան ստանալու համար համալսարանի սաները ներկայացնում էին ավարտական աշխատանք, որը հաջողությամբ պաշտպանելու դեպքում ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական աշխատանքով զբաղվելու իրավունք էին ստանում:
- ե) Հայկական մշակույթի, մասնավորապես մանրանկարչության, գրչության արվեստի և երաժշտության զարգացման գործում մեծ դեր խաղաց Կիլիկիայում գործող Ծործորի դպրոցը:
- զ) Սկևռայի դպրոցում է սովորել և աշխատել նշանավոր մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցին:

1) ա, դ

3) բ, գ

2) բ, ե

4) գ, դ

**102. Գտնել ճիշտ պնդումները.**

- 1) Անիի վարդապետարանի կրթական նոր ծրագրի առաջին բաժնում ներկայացված էր դասավանդվող առարկաների ցանկը, իսկ երկրորդում՝ հանձնարարվող գրականությունը:
- 2) Գլածորի համալսարանն այդ անունով հայտնի է դարձել Ներսես Մշեցու ռաբունապետության տարիներին:
- 3) Գլածորի համալսարանն ուներ չորս բաժին՝ հասարակական ու տեխնիկական գիտությունների, երաժշտության, ճարտասանության և նկարչության:
- 4) Տաթևի համալսարանի գործունեությունը ղեկավարում էին Գրիգոր Տաթևացին և Գրիգոր Մագիստրոսը:
- 5) Զարգացած միջնադարի հայկական նշանակալից դպրոցներ էին կաթողիկոսների հիմնած Արտազ գավառի Ս. Թադեոս առաքյալի վանքի մոտ գտնվող Ծործորի, ինչպես և Քոնայի դպրոցները:

**103. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) IX–XI դարերը համարվում են բարձրագույն դպրոցի կազմակերպման ժամանակաշրջան, իսկ XII դարից սկսվում է նրանց վերելքի ժամանակաշրջանը:
- 2) Հայկական մշակույթի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց Նոր Գետիկի (Գոշավանքի) վարդապետարանը:
- 3) 1280–ական թվականներին նշանավոր մատենագիր Ներսես Մշեցին հիմնադրում է Աղբերց վանքի դպրոցը, որը Մխիթար Գոշի ուսուցչապետության տարիներին հայտնի է դառնում Գլածորի համալսարան անունով:
- 4) Գլածորի համալսարանի ղեկավարը կոչվում էր ռաբունապետ, իսկ դասախոսները՝ ռաբունիներ:
- 5) Գլածորի համալսարանում է կրթություն ստացել նշանավոր պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին:
- 6) Գլածորի համալսարանում Հովհաննես Իմաստասերը մշակեց վարդապետական կրթության նոր ծրագիր՝ հումանիտար և բնագիտական բաժիններով:
- 7) Կաթողիկոսների հիմնած հոգևոր–մշակութային կենտրոններից հայտնի էր նաև Վանանդ գավառում գտնվող Ծործորի դպրոցը:

**104. Թվարկվածներից առանձնացնել X–XIV դարերի կրթական գործի նշանավոր կազմակերպիչների անունները.**

- ա. Գրիգոր Մլիճեցի
- բ. Գրիգոր Մագիստրոս Պահլավունի
- գ. Գրիգոր Տաթևացի
- դ. Վարդան Բաղիշեցի
- ե. Անանիա Նարեկացի

- զ. Կիրակոս Գանձակեցի
- է. Հովհաննես Իմաստասեր
- ը. Հովհաննես Հերմոնացի
- թ. Հովհան Որոտնեցի
- ժ. Թորոս Տարոնացի

- 1) ա, բ, գ, ը, թ
- 2) բ, գ, ե, է, թ

- 3) ա, դ, ե, թ, ժ
- 4) բ, դ, գ, է, ժ

**105. Ո՞ր դպրոցներն են հիմնվել կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների ջանքերով.**

- |                        |                   |
|------------------------|-------------------|
| 1. Աղբերց վանքի դպրոցը | 4. Ծործորի դպրոցը |
| 2. Մեծքարի դպրոցը      | 5. Սկևռայի դպրոցը |
| 3. Ակների դպրոցը       | 6. Քոնայի դպրոցը  |

**106. Ընտրել երկու սխալ պնդումները.**

- ա. Անանիա Շիրակացին կատարել է գիտությունների դասակարգում ըստ բնագիտության, թվաբանության ու աստվածաբանության և իր փիլիսոփայական երկերում լայնորեն համադրել է գիտությունների տարբեր բնագավառներից հայտնի մի շարք դրույթներ:
- բ. Վ դ. վարքագրական գրականության արժեքավոր նմուշներից է Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Ս. Շուշանիկի նահատակության պատմությունը նվիրված շարադրանքը՝ վկայաբանությունը:
- գ. Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության շարադրանքի ժանրի՝ մեզ հասած առաջին երկը Ստեփանոս Տարոնեցու «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունն է, որում նկարագրված է օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը:
- դ. Հայ եկեղեցաշինության մեջ առաջացած նշանակալի երևույթ էր կենտրոնագմբեթ կառույցների ի հայտ գալը, որոնք ավելի դիմացկուն էին երկրաշարժերի ժամանակ:
- ե. Պահպանված և մեզ հասած հայկական առաջին մանրանկարները, որոնք վերաբերում են VI-VII դդ., չորսն են և ունեն ավետարանական բովանդակություն, կերպարներն արտահայտիչ են, տպավորիչ ու գունագեղ և ազգային ինքնատիպության դրոշմ են կրում:

- 1) բ, գ                      2) ա, գ                      3) գ, ե                      4) ա, դ

**107. Միջնադարյան պատմագրության մեջ ովքեր էին ներկայացնում «տիեզերական պատմություն» ուղղությունը.**

- 1) Ստեփանոս Տարոնեցին և Վարդան Արևելցին
- 2) Ստեփանոս Տարոնեցին և Կիրակոս Գանձակեցին
- 3) Մխիթար Գոշը և Հովհաննես Դրասխանակերտցին
- 4) Հովհաննես Իմաստասերն ու Արիստակես Լաստիվերցին

**108. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Հայ պատմագրության մեջ համաշխարհային պատմության շարադրանքի ժանրը՝ որպես նոր ուղղություն, հիմնադրել է Ստեփանոս Տարոնեցին:
- 2) Ասողիկն ապրել և ստեղծագործել է XII դարի առաջին կեսին:
- 3) Վարդան Արևելցու աշխատությունը ընդգրկում է «անսկիզբ» ժամանակներից մինչև 1267 թվականը:
- 4) Վարդան Արևելցին մանրամասն շարադրել է մոնղոլական ժամանակաշրջանի պատմությունը:

- 5) Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության ժանրի հիմնադիրը Թովմա Արծրունին է:
- 6) Թովմա Արծրունին ներկայացրել է Վասպուրական նահանգի և Արծրունիների տոհմի պատմությունը:
- 7) Թովմա Արծրունու պատմությունը շարունակել են այլ հեղինակներ և հասցրել մինչև 1162 թվականը:
- 8) Քրիստոնեությունը մշակեց պատմության շարադրման սեփական ժանրը՝ ժամանակագրությունը (տարեգրությունը):

**109. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) IX դարի վերջերից սկսած՝ հայ պատմագրության վերելքը պայմանավորված էր ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային հարաբերություններում տեղի ունեցող բուռն իրադարձություններով, որոնք առնչվում էին հայ ժողովրդի հետ:
- 2) X–XIV դարերում պատմության շարադրման ժանրում առաջանում են տիեզերական պատմությունը և տարեգրությունը (ժամանակագրություն):
- 3) Հովհաննես Դրասխանակերտցին իր «Պատմութիւն Հայոց» պշխատանքի շարադրանքը սկսում է Հայկի ու Բելի առասպելից և հասցնում 924 թվականը:
- 4) Մասնավորապես Աբասի և Աշոտ Ողորմածի ժամանակաշրջանի պատմությունը Հովհաննես Դրասխանակերտցին շարադրում է որպես դեպքերի մեծ մասի ականատես, որոշ դեպքերում՝ նաև մասնակից:
- 5) Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն» երկը ներառում է 1000–1171 թթ. ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները՝ հայ-բյուզանդական հարաբերությունները, մոնղոլական արշավանքները, աղանդավորական շարժումները և այլն:
- 6) Հայոց պատմության շարքի հաջորդ պատմագիրը XIV դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին է:
- 7) Կիրակոս Գանձակեցին մանրամասն ներկայացնում է հայ-վրացական հարաբերությունները, Զաքարյանների իշխանությունը, Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած կարևոր դեպքերը, հայ-մոնղոլական առնչությունները:

**110. Ստորև թվարկված պատմիչներից ովքեր են ապրել և ստեղծագործել XIII դարում.**

- |                              |                             |
|------------------------------|-----------------------------|
| ա. Մատթևոս Ուտիայեցի         | զ. Վարդան Արևելցի           |
| բ. Ղևոնդ վարդապետ            | է. Ստեփանոս Օրբելյան        |
| գ. Ասողիկ(Ստեփանոս Տարոնեցի) | ը. Սմբատ Գունդստաբլ         |
| դ. Արիստակես Լաստիվերցի      | թ. Թովմա Արծրունի           |
| ե. Կիրակոս Գանձակեցի         | ժ. Հովհաննես Դրասխանակերտցի |

- 1) ա, ե, գ, թ
- 2) գ, դ, է, ը

- 3) ե, գ, է, ը
- 4) բ, գ, դ, ժ

**111. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Դավիթ Ալավկատորդին հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արեց իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:
- 2) Ներսես Շնորհալի կաթողիկոսի հեղինակած «Հայոց կանոնագիրքը» անդրադառնում է ամուսնա-ընտանեկան իրավունքի որոշ նորմերի:
- 3) Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է, որը կազմվել է 1130 թվականին:
- 4) Հյուսիսարևելյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը վերելք էր ապրում, ուստի հասարակական-քաղաքական հարաբերությունները վերափոխվում ու բարդանում էին, և անհրաժեշտ էր ստեղծել նոր դատաստանագիրք, որն արեց Մխիթար Գոշը:
- 5) Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը» բաղկացած էր 117 պարագրաֆներից:
- 6) Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ծառայեց հասարակական կյանքի բոլոր բնագավառները կարգավորելուն շուրջ 200 տարի:
- 7) Գրիգոր Մագիստրոսի կարծիքով՝ գիտելիքը կարելի է ձեռք բերել բանականության, զգայարանների, փորձի ու հավատի միջոցով:

**112. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) 852 թվականին խալիֆը Հայաստան ուղարկեց թուրք վարձկան զորավար Բուդային:
- 2) Բագարան քաղաքում Աշոտ Բագրատունին կաթողիկոս Ջաքարիա Ձագեցու կողմից օժվեց հայոց թագավոր:
- 3) Գագիկ II-ի կինը՝ Կատրամիդե թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի Կաթողիկե եկեղեցու շինարարությունը:
- 4) 1054 թ. սելջուկ-թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեցին Կարս քաղաքի պաշտպանները:
- 5) Ջաքարյանների երրորդ ճյուղի հիմնադիրը Սարգիս Ջաքարյանի թոռ Վահրամն էր:
- 6) Գլաձորի համալսարանը 1280-ական թվականներին հիմնադրել է Ներսես Լամբրոնացին:
- 7) Հայկական առաջին դատաստանագիրքը ստեղծել է Դավիթ Ալավկատորդին մոտավորապես 1130 թ.:

**113. Միջնադարյան հետևյալ գիտնականներից ո՞վ փիլիսոփա չէ.**

- |                       |                      |
|-----------------------|----------------------|
| ա. Վահրամ Ռաբունի     | գ. Դավիթ Ալավկատորդի |
| բ. Հովհաննես Երզնկացի | դ. Հովհան Որոտնեցի   |
|                       | ե. Գրիգոր Տաթևացի    |

- 1) բ            2) գ                            3) դ                            4) ա

**114. Թվարկված շինություններից ո՞ր երկուսի հեղինակն է Մանվել ճարտարապետը.**

- |                                    |                   |
|------------------------------------|-------------------|
| ա. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու        | դ. Սանահինի վանքի |
| բ. Անիի Մայր տաճարի                | ե. Հաղպատի վանքի  |
| գ. Արծրունիների թագավորական պալատի | զ. Նորավանքի      |

- 1) ա, բ                      2) ա, գ                      3) դ, ե                      4) գ, զ

**115. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Գրիգոր Մագիստրոսը և Հովհաննես Սարկավազը բնության մեջ գոյություն ունեցող չորս հիմնական տարրերի (ջուր, հող, կրակ, օդ) փոխներգործության մեջ էին որոնում շրջակա միջավայրում տեղի ունեցող երևույթների բացատրությունը:
- 2) Հովհաննես Երզնկացին համակարգեց հայ բնագիտության և փիլիսոփայության նվաճումները և մատնանշեց նրա զարգացման հեռանկարները:
- 3) XI դարի նշանավոր գիտնական, Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ Վահրամ Բաբունի թողել է բնափիլիսոփայական մի շարք աշխատություններ:
- 4) Մխիթար Հերացու կարծիքով՝ հիվանդությունները ոչ թե չար ուժերի ներգործության արդյունք են, այլ պայմանավորված են բնական, նյութական պատճառներով:
- 5) XIV դարի հայ նշանավոր փիլիսոփա Վարդան Արևելցու աշխատությունները նվիրված են տրամաբանության և իմացության խնդիրներին:
- 6) Բնափիլիսոփայության ներկայացուցիչ կարելի է համարել XII դարի նշանավոր բժիշկ Մխիթար Սեբաստացուն:
- 7) Ըստ Հովհան Որոտնեցու՝ մարդը չպետք է բավարարվի միայն զգայարանների միջոցով ձեռք բերված գիտելիքներով, այլ պետք է աշխատի դրանք ճշգրտել բանականության և փորձի միջոցով:

**116. Առանձնացնել այն շարքը, որում ներկայացված են X–XIV դարերի հայկական մշակույթի նշանավոր գործիչները.**

- 1) Հովհաննես Իմաստասեր, Անանիա Նարեկացի, Դավիթ Անհաղթ, Ներսես Մշեցի, Եսայի Նչեցի
- 2) Գրիգոր Տաթևացի, Վահրամ Բաբունի, Ներսես Լամբրոնացի, Ներսես Մշեցի, Հակոբ Մեղապարտ
- 3) Հովհաննես Իմաստասեր, Եզնիկ Կողբացի, Պարույր Հայկազն, Եսայի Նչեցի, Գրիգոր Մագիստրոս
- 4) Հովհաննես Իմաստասեր, Գրիգոր Մագիստրոս, Ներսես Լամբրոնացի, Վահրամ Բաբունի, Գրիգոր Տաթևացի

**117. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Կ.Պոլսի հայկական տպարանը հիմնվել էր ոչ թե Եվրոպայից բերված տպագրական գործիքներով, այլ ամբողջը ստեղծվել էր տեղում՝ չունենալով անգամ տպագրական գործի վարպետ կամ ուսուցիչ՝ փաստորեն կրկին հայտնագործելով տպագրության արվեստը:

- 2) Նոր Ջուղայի հայ արվեստագետներից Բոգդան Սալթանովը, հաստատվելով Մոսկվայում, աշխատել է Ջինապալատում և մեծ դեր խաղացել ռուսական արվեստի զարգացման գործում:
- 3) Ջաքարիա Քանաքեռցին իր աշխատության մեջ նկարագրել է ոչ միայն իր տեսած ու լսած դեպքերն ու իրադարձությունները, այլև տվել է հայ ժողովրդի պատմության նախորդ շրջանների համառոտ շարադրանքը՝ սկսած Արշակունիների թագավորության հաստատումից:
- 4) Կոստանդ Ջուղայեցին կազմել է մի գնահատելի և յուրահատուկ ձեռնարկ, որի մեջ ամփոփ ներկայացրել է ժամանակի բազում երկրների չափերի ու կշիռների մասին արժեքավոր տվյալներ:
5. XVII դ. գործած նշանավոր հայկական դպրոցներից էր Ղրիմի Կապոսի վանքի դպրոցը, որին նվիրված չափածո ներբողում այն որակվում է որպես աշխարհում համայն հայոց ազգի լուսատու:

**118. Թվարկված կաթողիկոսներից ովքեր են ուսանել Նոր Ջուղայի դպրոցում.**

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| 1) Ստեփաննոս Ջուղայեցի | 4) Աղեքսանդր Ջուղայեցի   |
| 2) Խաչատուր Կեսարացի   | 5) Աստվածատուր Համադանցի |
| 3) Գրիգոր Զ Ապիրատ     | 6) Կիրակոս Վիրապեցի      |
|                        | 7) Ներսես Շնորհալի       |

**119. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.**

- 1) XV դ. առաջին կեսին Սյունիքում գործում էր Հերմոնի դպրոցը՝ Հովհաննես Հերմոնացու առաջնորդությամբ:
- 2) Բուն Հայաստանում գործող դպրոցներից հիշատակելի են նաև Երզնկայի Ավագ և Կապոսի վանքերի, Այրիվանքի, Եղիվարդի վանքերին առընթեր դպրոցները:
- 3) Գրիգոր Տաթևացին 1408 թ. տեղափոխվում է Մեծոփա վանք:
- 4) XIV դարում մոտ վաթսուամյա բեղմնավոր գործունեություն է ունեցել Ղրիմի Անտոնի անապատի հայոց դպրոցը, որի ուսուցչպետն էր Անանիա փիլիսոփան:
- 5) XV–XVII դարերում դրիմահայոց կրթական կարևոր կենտրոն էր Սուրբ Խաչ վանքը, որը Հակոբ Կաֆայեցու տաղերից մեկում անվանվում է ճեմարան:
- 6) XVII դարում կարևոր դերակատարում ունեին Էջմիածնի, Բաղեշի, Տաթևի, Խիզանի, Լվովի, Կաֆայի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի և այլ դպրոցներ:
- 7) XV դարի սկզբներին Սյունյաց աշխարհում հիմնվում է Հարանց անապատի դպրոցը, որը նպաստել է Արևելյան Հայաստանի կրթական ու մշակութային առաջընթացին:
- 8) Ներսես Մոկացին 1620 թ. հիմնադրում է Երևանի Անանիա առաքյալի անապատի դպրոցը և մի քանի տարի անց՝ Հովհաննավանքի դպրոցը:

**120. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- ա. Աբգար դպիրը Եվրոպա ուղարկվեց Ստեփաննոս Սալմաստեցի կաթողիկոսի հրավիրած եկեղեցական ժողովի անունից:
- բ. Գրիգոր Դարանաղցին շարունակել է հայոց պատմությունների շարքի շարադրանքը:
- գ. Գրիգոր Տաթևացին նոր շունչ հաղորդեց Մեծոփա վանքի դպրոցին:





**124. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Աղվանքի հազարապետը տեղեկացրեց, որ պարսից բանակը յոթ հարյուր մոզերի հետ ներխուժել է իրենց երկիր:
- 2) Հայ նախարարները Տիգրան ժամանեցին 449 թ. ապրիլին:
- 3) Վասակ Սյունու հեռանալն ապստամբներից Հայաստանում փոխել էր իրավիճակը:
- 4) Ղևոնդ երեցը Ավարայրի ճակատամարտի նախօրեին մկրտեց մինչ այդ չմկրտվածներին:
- 5) Վարդան Մամիկոնյանը իրեն նիզակակիցներ կարգեց Նոր Շիրականի տեր Արշավիրին և իր եղբայր Համազասպին:

**125. Ստորև բերված պնդումներից դր երեքն են սխալ.**

- ա) Աշոտ Մսակերի եղբայր Շապուհը ստանձնեց սպարապետի պաշտոնը:
- բ) Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդեց որդին՝ Տարոնի տեր Սմբատ Բագրատունին:
- գ) Հայոց իշխան Բագարատ Բագրատունին Արմինիայում մեծ հեղինակություն ուներ:
- դ) 850 թ. հայ նախարարները հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու գլխավորությամբ արաբ հարկահավաքին թույլ չտվեցին երկրի սահմանն անցնել և հենց այդտեղ էլ նրան հանձնեցին հարկերը:
- ե) 850 թ. Բագարատ Բագրատունին Աշոտ Արծրունու հետ արաբ նվաճողներին դուրս քշեց Տայքից և արաբական մի ուրիշ զորախումբ ջախջախեց Վասպուրականում:
- զ) Յուսուֆը Խլաթում ձերբակալում է Բագարատին և ուղարկում խալիֆայություն:
- է) Վանում Յուսուֆը փախչում է խույթեցիների հետապնդումից և ապավինում Սուրբ Իսաչ եկեղեցու բարձրությանը:
- ը) «Արյան լիճ» կոչվող լեռնային բարձրադիր լճի ափին արաբների դեմ տեղի ունեցած ճակատամարտն ավարտվում է հայերի հաղթանակով:

- |            |            |
|------------|------------|
| 1) ա, գ, ե | 3) գ, գ, ը |
| 2) բ, դ, զ | 4) բ, ե, է |

**126. Ստորև բերված պնդումներից դրն է սխալ.**

- 1) Շահաստանում կենտրոնացված էին հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, արհեստավորական գործատները, հյուրանոցները և այլն:
- 2) Շահաստանը ևս շրջապատված էր արտաքին պարսպով:
- 3) Միջնաբերդում էին արքունիքի կամ նշանավոր իշխանի դղյակները՝ իրենց օժանդակ շենքերով:
- 4) Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքն Անին էր, որի միջնաբերդը բարձրանում էր Երասխ գետի ափի մի ժայռաբլրի վրա:

**127. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

- ա) Տրապիզոնի բանակցություններին Հայաստանից մասնակցում էր բյուզանդական կողմնորոշում ունեցող Պետրոս կաթողիկոսը:
- բ) Վասիլ II-ը պահանջեց Անիի թագավորությունը հանձնել Բյուզանդիային:

- զ) Հայոց թուվամորթ թագավոր Սմբատ II-ը կայսեր և դավաճան Պետրոս կաթողիկոսի ճնշման տակ ստորագրեց մի ամոթալի կտակ, համաձայն որի՝ իր մահից հետո Անիի թագավորությունը պետք է միացվեր Բյուզանդիային:
- դ) Անին Բյուզանդիային կտակելը եղբայրների միջև բախում չառաջացրեց. 1042 թ. մահացավ նախ Աշոտը, ապա Հովհաննես-Սմբատը:
- ե) Բանակցելու փոխարեն Դիոգենես կայսրը Աշոտ IV-ից պահանջեց Անին հանձնել:
- զ) Դուրս գալով քաղաքի դարպասներից՝ ժողովուրդը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ մեծ ջարդ տվեց բյուզանդական զորքին և փախուստի մատնեց:
- է) Սպարապետ Վահրամ Պահլավունու առաջարկությամբ Անիում թագավոր հռչակվեց Գագիկ I-ի 18-ամյա որդի Մուշեղը:

- 1) ա, բ, գ
- 2) բ, գ, է
- 3) գ, դ, է
- 4) ա, ե, գ

**128. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- ա) Վահրամյանների գլխավոր կենտրոնն Ամբերդ ամրոցն էր:
- բ) Դողսի ճակատամարտում արաբները պարտություն կրեցին:
- գ) Սմբատ II-ը կառուցեց Անիի պարիսպների երկրորդ գիծը:
- դ) 1094 թ. Անտիոքի դուքսը հաշտություն կնքեց և վերադարձրեց Կիլիկիայից խլած շրջաններն ու բերդերը:
- ե) 1054 թ. սելջուկների երրորդ արշավանքը գլխավորում էր նրանց առաջնորդ Տուղրիլը:

- 1) ա, դ
- 2) գ, ե
- 3) բ, դ
- 4) ա, գ

**129. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) Սելջուկ-թուրքերի 1054 թ. երրորդ արշավանքն անձամբ ղեկավարեց նրանց գլխավոր առաջնորդ Տուղրիլը:
- բ) Թշնամուն համառ դիմադրություն ցույց տվեցին Կարսի պաշտպանները, որոնցից Թաթուլ անունով մի հայ զորական մահացու վերք պատճառեց Տուղրիլ բեկի երիտասարդ ազգականներից մեկին, բայց ինքն էլ գերի ընկավ:
- գ) 1066 թ. Ալի-Ասլանը ներխուժեց Հայաստան՝ այն վերջնականապես գրավելու մտադրությամբ:
- դ) Ալի-Ասլանի զորքերը, ասպատակելով Արցախը, պաշարեցին Անին:
- ե) Երբ սելջուկ-թուրքերը պաշարեցին Անին, քաղաքի բյուզանդական կայազորը քաշվեց քաղաքի միջնաբերդ և բնակչությանը թողեց անպաշտպան:

- 1) գ, դ
- 2) գ, ե
- 3) ա, ե
- 4) բ, դ

**130. Տրված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.**

- ա) XI դարի կեսին Անիի Բագրատունյաց թագավորության անկման և Միջին Ասիայի ռազմատենչ քոչվոր ցեղերի՝ սելջուկ-թուրքերի, ձեռնարկած ավերիչ արշավանքների հետևանքով ստեղծված բարդ աշխարհաքաղաքական պայմաններում հայ ժողովուրդը շարունակեց իր պայքարը համահայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ:
- բ) Անիի թագավորության անկումից հետո հայկական թագավորություններն ու իշխանությունները՝ որպես հայոց պետականության ինքնատիպ կրողներ, դեռ երկար ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը:
- գ) Բագրատունիները գահագրկվել էին Անի-Շիրակում, սակայն շարունակում էին իշխել Կարսում, Վասպուրականում, Տաշիր-Ձորագետում ու Սյունիքում:
- դ) Կարսի թագավորությունում դեռ Աբաս թագավորի ժամանակ հաստատված խաղաղությունը պահպանվեց նրա որդու՝ Սմբատի օրոք:
- ե) Գագիկ Աբասյանը կարողացավ խնամիական կապեր հաստատել տարբեր հայ և օտարազգի թագավորական և ազնվականական տոհմերի հետ ու զգալիորեն ամրապնդել իր դիրքերը:
- զ) Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության թագավոր Դավիթ Անհողինը ամուսնացած էր Կախեթի իշխան Կվիրիկեի քրոջ հետ:
- է) Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավիթի որդուն՝ Աշոտին, որն էլ դարձավ Կախեթի Կյուրիկյան հարստության նոր ճյուղի հիմնադիրը:

- 1) ա, գ, ե
- 2) բ, դ, զ

- 3) գ, դ, է
- 4) դ, ե, զ

**131. Առանձնացնել այն քաղաքները, որտեղ X դարի երկրորդ կեսին Խաչիկ Ա կաթողիկոսը հիմնեց եպիսկոպոսական թեմեր.**

- ա) Անտիոք
- բ) Մամեստիա
- գ) Տարսոս

- դ) Ադանա
- ե) Սուլնդա (Ուլնիա)

- 1) ա, բ, ե
- 2) բ, գ, ե

- 3) ա, գ, ե
- 4) բ, գ, դ

**132. Գտնել ճիշտ պնդումները.**

- 1) Երբ Օշին թագավորը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները, հանդիպեցին հայ բնակչության համառ դիմադրությանը:
- 2) Ադանայում տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին հրաժարվել Սսի ժողովի որոշումները կենսագործելուց:

- 3) Եկեղեցիների միավորման հակառակորդների մի մասին ձերբակալում և աքսորում են Կահիրե, իսկ մյուսներին բանտարկում են:
- 4) Բուն Հայաստանում նույնպես հրաժարվում էին Սսի և Ադանայի ժողովների որոշումները կատարելուց:
- 5) Հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ. այն ստացավ հակաունիթորներ անվանումը:

### **133. Աղվանից կոչվող եկեղեցին միավորում էր՝**

- 1) Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնյա հայ բնակչությանը
- 2) Մերձավոր Արևելքի ու Կիլիկիայի հայ բնակչությանը
- 3) Արցախ, Ուտիք և Գուգարք նահանգների հայ բնակչությանը
- 4) Օսմանյան կայսրությունում ու Պարսկաստանում բնակվող հայ բնակչությանը

### **134. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) IV դարի վերջում մայրենի լեզվով գիր ու գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու համար:
- 2) Հայաստանի արևմտյան մասում հունարենը պարսից արքունիքը դիտում էր որպես թշնամի երկրի՝ Հռոմեական կայսրության լեզու, և Հայաստանում զավթողական քաղաքականության իրականացման ժամանակ նույնիսկ արգելվում էր դրա կիրառումը՝ փոխարենը պարտադրելով ասորերենը:
- 3) Մեսրոպ Մաշտոցին էր վերապահված հայոց ինքնության հզոր դրսևորումներից մեկի՝ գրերի գյուտի առաքելությունը:
- 4) Մեսրոպ Մաշտոցն արքունիքի միջազգային գրագրություններում կիրառում էր հունարենի, պահլավերենի, էլամերենի իր իմացությունը:
- 5) Մաշտոցը քարոզչական գործունեության նպատակով գնում է Նախիջևան գավառից հյուսիս՝ Գողթան գավառը:
- 6) Մեսրոպ Մաշտոցը հայերեն բանավոր թարգմանում է Պլատոնի աշխատությունը:
- 7) Մատենագրական տեղեկությունների համաձայն՝ II–III դարերում հայերը հիշատակված են հին դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:

**1. ՏԱՐԵԹՎԵՐ**

---

1. Ո՞ր թվականին է պատերազմ սկսվել թուրքական պետության և Վենետիկի հանրապետության միջև.  
1) 1666 թ.                      2) 1643 թ.                      3) 1645 թ.                      4) 1663 թ.
2. Ե՞րբ է հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատացին նամակ գրել Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորին.  
1) 1663 թ.                      2) 1679 թ.                      3) 1683 թ.                      4) 1666 թ.
3. Մահտեսի Շահնուրատը հայկական պատվիրակության կազմում Փարիզ է ժամանել բանակցությունները շարունակելու համար.  
1) 1663 թ.                      2) 1666 թ.                      3) 1683 թ.                      4) 1689 թ.
4. Ե՞րբ է գումարվել Էջմիածնի գաղտնի ժողովը.  
1) 1666 թ.                      2) 1677 թ.                      3) 1678 թ.                      4) 1547 թ.
5. Ե՞րբ է Հակոբ Ջուղայեցին բանակցություններ սկսել Ռեչ Պոսպոլիտայի թագավորի հետ.  
1) 1677 թ.                      2) 1678 թ.                      3) 1679 թ.                      4) 1689 թ.
6. Ե՞րբ է հրավիրվել Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը.  
1) 1677 թ.                      2) 1679 թ.                      3) 1689 թ.                      4) 1699 թ.
7. Ե՞րբ է Իսրայել Օրին ժամանել Ռուսաստան՝ Պետրոս I-ին հանդիպելու նպատակով.  
1) 1699 թ.                      2) 1701 թ.                      3) 1700 թ.                      4) 1702 թ.
8. Ե՞րբ է Իսրայել Օրին ժամանել Շամախի.  
1) 1706 թ.                      2) 1701 թ.                      3) 1708 թ.                      4) 1709 թ.
9. Ե՞րբ է Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվել պայմանագիր.  
1) 1724 թ. հունիսի 7-ին                      3) 1724 թ. սեպտեմբերի 12-ին  
2) 1724 թ. հունիսի 12-ին                      4) 1724 թ. սեպտեմբերի 26-ին

- 10. Երբ են թուրքերը պաշարել Երևան քաղաքը.**  
 1) 1724 թ. հունիսի 7-ին  
 2) 1724 թ. հունիսի 12-ին  
 3) 1724 թ. սեպտեմբերի 12-ին  
 4) 1724 թ. սեպտեմբերի 26-ին
- 11. Երբ են Արցախի ազատագրական ուժերը պայմանագիր կնքել Գանձակի մահ-մեղականների հետ.**  
 1) 1722 թ.  
 2) 1723 թ.  
 3) 1724 թ.  
 4) 1728 թ.
- 12. Երբ է թուրքական երեք զորամաս ներխուժել Արցախի Վարանդա գավառ.**  
 1) 1726 թ.  
 2) 1723 թ.  
 3) 1724 թ.  
 4) 1725 թ.
- 13. Երբ է մահացել Եսայի Հասան-Ջալալյանը.**  
 1) 1711 թ.  
 2) 1730 թ.  
 3) 1726 թ.  
 4) 1728 թ.
- 14. Երբ են հայ զորավարները Դավիթ բեկի գլխավորությամբ հասել Սյունիք.**  
 1) 1722 թ.  
 2) 1723 թ.  
 3) 1724 թ.  
 4) 1721 թ.
- 15. Երբ է տեղի ունեցել Դավիթ բեկի առաջին հաղթական մարտը «ջևանշիր» կոչվող ցեղի դեմ.**  
 1) 1722 թ. աշնանը  
 2) 1723 թ. ձմռանը  
 3) 1724 թ. գարնանը  
 4) 1721 թ. աշնանը
- 16. Երբ են թուրքերը պաշարել Հալիձորը.**  
 1) 1726 թ. մարտին  
 2) 1726 թ. աշնանը  
 3) 1727 թ. մարտին  
 4) 1727 թ. աշնանը
- 17. Երբ է մահացել Դավիթ բեկը.**  
 1) 1727 թ.  
 2) 1728 թ.  
 3) 1729 թ.  
 4) 1730 թ.
- 18. Երբ է Մխիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում.**  
 1) 1727 թ.  
 2) 1728 թ.  
 3) 1729 թ.  
 4) 1730 թ.
- 19. Երբ է սպանվել Մխիթար սպարապետը.**  
 1) 1727 թ.  
 2) 1728 թ.  
 3) 1729 թ.  
 4) 1730 թ.
- 20. Երբ է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը.**  
 1) 1736 թ. մարտին  
 2) 1730 թ. հունվարին  
 3) 1735 թ. հունիսին  
 4) 1735 թ. հուլիսին
- 21. Երբ է կնքվել Էրզրումի պայմանագիրը.**  
 1) 1724 թ.  
 2) 1747 թ.  
 3) 1735 թ.  
 4) 1736 թ.
- 22. Երբ են ստեղծվել Խամսայի մելիքությունները.**  
 1) 1722-1728 թթ.  
 2) 1730 թ.  
 3) 1735 թ.  
 4) 1736 թ.

23. Երբ է անգլիական «Արևելահնդկական ընկերությունը» պայմանագիր կնքել հայ վաճառականների հետ.

- 1) 1683 թ.                      2) 1688 թ.                      3) 1690 թ.                      4) 1699 թ.

24. Երբ է Հովսեփ Էմինը, հակառակ հոր կամքի, ուղևորվել Անգլիա.

- 1) 1751 թ.                      2) 1759 թ.                      3) 1762 թ.                      4) 1761 թ.

25. Երբ է Հովսեփ Էմինը մեկնել Հայաստան՝ տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով.

- 1) 1751 թ.                      2) 1759 թ.                      3) 1762 թ.                      4) 1761 թ.

26. Երբ է Հովսեփ Էմինը Վորոնցովին ներկայացրել Հայաստանի ազատագրության իր ծրագիրը.

- 1) 1770 թ.                      2) 1761 թ.                      3) 1764 թ.                      4) 1766 թ.

27. Երբ են Էմինը և Հերակլ II-ը խրախուսական նամակներ ուղարկել Հովնանին.

- 1) 1759 թ.                      2) 1761 թ.                      3) 1764 թ.                      4) 1770 թ.

28. Երբ է Հովսեփ Էմինը վերադարձել Հնդկաստան.

- 1) 1751 թ.                      2) 1761 թ.                      3) 1764 թ.                      4) 1770 թ.

29. Երբ է սկսվել ռուս-թուրքական պատերազմը.

- 1) 1764 թ.                      2) 1768 թ.                      3) 1769 թ.                      4) 1770 թ.

30. Երբ է Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրության իր ծրագիրը ներկայացրել Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային.

- 1) 1783 թ.                      2) 1768 թ.                      3) 1769 թ.                      4) 1771 թ.

31. Երբ է կնքվել Գերոգիևսկի դաշնագիրը.

- 1) 1769 թ.                      2) 1768 թ.                      3) 1783 թ.                      4) 1786 թ.

32. Երբ է Հերակլ II-ը հատուկ ուղերձ հղել Պարսկաստան քշված հայերին.

- 1) 1764 թ.                      2) 1786 թ.                      3) 1790 թ.                      4) 1792 թ.

33. Հերակլ II-ի հատուկ ուղերձը՝ հղված Պարսկաստան քշված հայերին, երբ է տպագրվել հայերենով.

- 1) 1764 թ.                      2) 1766 թ.                      3) 1790 թ.                      4) 1792 թ.

34. Երբ է հիմնադրվել Մադրասի հայկական տպարանը.

- 1) 1771 թ.                      2) 1772 թ.                      3) 1786 թ.                      4) 1770 թ.

35. Երբ է լույս տեսել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը.

- 1) 1771 թ.                      2) 1772 թ.                      3) 1781 թ.                      4) 1792 թ.

36. Երբ է «Նոր տետրակը» թարգմանվել ռուսերեն.

- 1) 1790 թ.                      2) 1772 թ.                      3) 1786 թ.                      4) 1792 թ.

**37. Երբ են ռուսական զորքերը գրավել Գանձակը.**

- 1) 1801 թ.                      2) 1804 թ.                      3) 1805 թ.                      4) 1808 թ.

**38. Երբ են ռուսական զորքերը գրավել Արթիկը.**

- 1) 1801 թ.                      2) 1804 թ.                      3) 1805 թ.                      4) 1808 թ.

**39. Երբ է Ղարաբաղի խանությունը անցել Ռուսական կայսրությանը.**

- 1) 1801 թ.                      2) 1804 թ.                      3) 1805 թ.                      4) 1808 թ.

**40. Երբ է կնքվել Գյուլիստանի հաշտության պայմանագիրը.**

- 1) 1812 թ. մայիսի 16–ին                      3) 1813 թ. հունիսի 12–ին  
2) 1812 թ. սեպտեմբերի 4–ին                      4) 1813 թ. հոկտեմբերի 12–ին

**41. Երբ է սկսվել XIX դարի ռուս–թուրքական առաջին պատերազմը.**

- 1) 1805 թ. մայիսին                      3) 1806 թ. դեկտեմբերին  
2) 1804 թ. սեպտեմբերին                      4) 1808 թ. հոկտեմբերին

**42. Երբ են ռուսական զորքերը երկրորդ անգամ արշավել Երևանի վրա.**

- 1) 1806 թ. սեպտեմբերին                      3) 1807 թ. մայիսին  
2) 1806 թ. դեկտեմբերին                      4) 1808 թ. սեպտեմբերին

**43. Երբ են ռուսական զորքերը պաշարել Ախալքալաքի բերդը.**

- 1) 1806 թ. սեպտեմբերին                      3) 1807 թ. մայիսին  
2) 1806 թ. դեկտեմբերին                      4) 1810 թ. մարտին

**44. Երբ է տեղի ունեցել Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը.**

- 1) 1807 թ. սեպտեմբերի 2–ին                      3) 1806 թ. մայիսին 18–ին  
2) 1808 թ. դեկտեմբերի 28–ին                      4) 1807 թ. հունիսի 18–ին

**45. Երբ է տեղի ունեցել Ախալցխայի նահանգի 1500 ընտանիքների տեղահանությունն ու բռնագաղթը Վրաստան.**

- 1) 1806 թ.                      2) 1807 թ.                      3) 1810 թ.                      4) 1811 թ.

**46. Երբ են ռուսները գրավել Ախալքալաքի բերդը.**

- 1) 1806 թ.                      2) 1807 թ.                      3) 1810 թ.                      4) 1811 թ.

**47. Երբ է կնքվել Բուխարեստի հաշտության պայմանագիրը.**

- 1) 1812 թ. մայիսի 16–ին                      3) 1813 թ. հունիսի 12–ին  
2) 1812 թ. սեպտեմբերի 4–ին                      4) 1813 թ. հոկտեմբերի 12–ին

**48. Երբ է Աբաս–Միրզայի բանակը պաշարել Շուշիի բերդը.**

- 1) 1826 թ. հունիսին                      3) 1826 թ. հուլիսին  
2) 1826 թ. մայիսին                      4) 1827 թ. սեպտեմբերին



**49. Երբ են Երևանի խանի զինված ուժերը ներխուժել Շիրակ և Փամբակ.**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) 1828 թ. նոյեմբերին | 3) 1826 թ. հուլիսին    |
| 2) 1826 թ. մայիսին    | 4) 1827 թ. սեպտեմբերին |

**50. Երբ է տեղի ունեցել Շամխորի ճակատամարտը.**

- |                            |                             |
|----------------------------|-----------------------------|
| 1) 1826 թ. հուլիսի 30–ին   | 3) 1826 թ. սեպտեմբերի 13–ին |
| 2) 1826 թ. սեպտեմբերի 3–ին | 4) 1826 թ. սեպտեմբերի 30–ին |

**51. Երբ է տեղի ունեցել Գանձակի ճակատամարտը.**

- |                            |                             |
|----------------------------|-----------------------------|
| 1) 1826 թ. հուլիսի 30–ին   | 3) 1826 թ. սեպտեմբերի 13–ին |
| 2) 1826 թ. սեպտեմբերի 3–ին | 4) 1826 թ. սեպտեմբերի 30–ին |

**52. Երբ են կազմավորվել հայ կամավորական զոմարտակներ.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) 1828 թ. գարնանը | 3) 1826 թ. գարնանը |
| 2) 1825 թ. գարնանը | 4) 1827 թ. գարնանը |

**53. Երբ են ռուսները գրավել Աբասաբադի բերդը.**

- |                     |                        |
|---------------------|------------------------|
| 1) 1826 թ. հուլիսին | 3) 1826 թ. սեպտեմբերին |
| 2) 1827 թ. մարտին   | 4) 1827 թ. հուլիսին    |

**54. Երբ է տեղի ունեցել Օշականի ճակատամարտը.**

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1827 թ. օգոստոսի 17–ին   | 3) 1827 թ. հոկտեմբերի 1–ին  |
| 2) 1827 թ. սեպտեմբերի 30–ին | 4) 1827 թ. հոկտեմբերի 13–ին |

**55. Երբ են ռուսները գրավել Սարդարապատը.**

- |                     |                        |
|---------------------|------------------------|
| 1) 1826 թ. հուլիսին | 3) 1827 թ. սեպտեմբերին |
| 2) 1827 թ. մարտին   | 4) 1828 թ. փետրվարին   |

**56. Երբ են ռուսական զորքերը գրավել Երևանի բերդը.**

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1827 թ. օգոստոսի 17–ին   | 3) 1827 թ. հոկտեմբերի 1–ին  |
| 2) 1827 թ. սեպտեմբերի 30–ին | 4) 1827 թ. հոկտեմբերի 13–ին |

**57. Երբ են ռուսական զորքերը մտել Թավրիզ.**

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1827 թ. օգոստոսի 17–ին   | 3) 1827 թ. հոկտեմբերի 1–ին  |
| 2) 1827 թ. սեպտեմբերի 30–ին | 4) 1827 թ. հոկտեմբերի 13–ին |

**58. Երբ է կնքվել Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը.**

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1827 թ. օգոստոսի 17–ին   | 3) 1828 թ. հոկտեմբերի 12–ին |
| 2) 1827 թ. սեպտեմբերի 30–ին | 4) 1828 թ. փետրվարի 10–ին   |

**59. Երբ են ռուսական զորքերը գրավել Կարսը.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1828 թ. ապրիլի 17–ին  | 3) 1828 թ. հուլիսի 23–ին  |
| 2) 1828 թ. հունիսի 23–ին | 4) 1828 թ. օգոստոսի 15–ին |

**60. Երբ են ռուսական զորքերը պաշարել Ախալքալաքի բերդը.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1828 թ. ապրիլի 17-ին  | 3) 1828 թ. հուլիսի 23-ին  |
| 2) 1828 թ. հունիսի 23-ին | 4) 1828 թ. օգոստոսի 15-ին |

**61. Երբ են ռուսական զորքերը գրավել Ախալցխայի բերդը.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1828 թ. ապրիլի 17-ին  | 3) 1828 թ. հուլիսի 23-ին  |
| 2) 1828 թ. հունիսի 23-ին | 4) 1828 թ. օգոստոսի 15-ին |

**62. Երբ է Բայազետի բերդը տեղի փաշան հանձնել ռուսներին.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1828 թ. հունիսի 23-ին | 3) 1828 թ. օգոստոսի 15-ին |
| 2) 1828 թ. հուլիսի 23-ին | 4) 1828 թ. օգոստոսի 28-ին |

**63. Երբ է Աջարիայի փաշան գրոհել Ախալցխայի վրա.**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) 1827 թ. հունիսին | 3) 1829 թ. փետրվարին |
| 2) 1828 թ. հուլիսին | 4) 1829 թ. օգոստոսին |

**64. Երբ են ռուսական զորքերը գրավել Հասան Կալան.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1829 թ. մայիսի 28-ին  | 3) 1829 թ. հունիսի 27-ին   |
| 2) 1829 թ. հունիսի 24-ին | 4) 1829 թ. սեպտեմբերի 2-ին |

**65. Երբ է ռուսական բանակը մտել Էրզրում.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1829 թ. մայիսի 28-ին  | 3) 1829 թ. հունիսի 27-ին   |
| 2) 1829 թ. հունիսի 24-ին | 4) 1829 թ. սեպտեմբերի 2-ին |

**66. Երբ է կազմվել Հայկական մարզը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1828 թ. մարտի 21-ին | 3) 1827 թ. մարտի 21-ին |
| 2) 1840 թ. մարտի 21-ին | 4) 1849 թ. ապրիլի 9-ին |

**67. Երբ է Վ. Բեհբուլոյը նշանակվել Հայկական մարզի կառավարիչ.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1830 թ. | 2) 1838 թ. | 3) 1846 թ. | 4) 1849 թ. |
|------------|------------|------------|------------|

**68. Երբ է հրապարակվել թանգիմաթը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1836 թ. | 2) 1839 թ. | 3) 1844 թ. | 4) 1849 թ. |
|------------|------------|------------|------------|

**69. Երբ է լուծարվել Հայկական մարզը.**

- |                         |                           |
|-------------------------|---------------------------|
| 1) 1836 թ. մարտի 11-ին  | 3) 1846 թ. փետրվարի 10-ին |
| 2) 1840 թ. ապրիլի 10-ին | 4) 1828 թ. մարտի 21-ին    |

**70. Երբ է հիմնադրվել Կովկասի փոխարքայությունը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1840 թ. | 2) 1844 թ. | 3) 1846 թ. | 4) 1849 թ. |
|------------|------------|------------|------------|

**71. Երբ է հիմնադրվել Երևանի նահանգը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1840 թ. | 2) 1844 թ. | 3) 1846 թ. | 4) 1849 թ. |
|------------|------------|------------|------------|

**72. Երբ է հրապարակվել Հայոց եկեղեցու կանոնադրությունը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1828 թ. մարտի 21-ին | 3) 1846 թ. մարտի 21-ին |
| 2) 1836 թ. մարտի 11-ին | 4) 1849 թ. մարտի 11-ին |

**73. Երբ է սկսվել Ղրիմի պատերազմը.**

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| 1) 1853 թ. աշնանը | 3) 1853 թ. սկզբին  |
| 2) 1853 թ. ամռանը | 4) 1854 թ. գարնանը |

**74. Երբ է տեղի ունեցել Բաշկադկլարի ճակատամարտը.**

- |                       |                     |
|-----------------------|---------------------|
| 1) 1853 թ. հունվարին  | 3) 1854 թ. հուլիսին |
| 2) 1853 թ. նոյեմբերին | 4) 1853 թ. ամռանը   |

**75. Երբ է տեղի ունեցել Քյուրուկդարայի ճակատամարտը.**

- |                       |                     |
|-----------------------|---------------------|
| 1) 1853 թ. հունվարին  | 3) 1854 թ. հուլիսին |
| 2) 1853 թ. նոյեմբերին | 4) 1854 թ. սկզբին   |

**76. Երբ է Ղրիմի պատերազմի ընթացքում ռուսական զորախումբը գրավել Կարսը.**

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) 1854 թ. հունվարին  | 3) 1854 թ. հուլիսին   |
| 2) 1854 թ. նոյեմբերին | 4) 1855 թ. նոյեմբերին |

**77. Երբ է ավարտվել Արևելյան պատերազմը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1856 թ. | 2) 1829 թ. | 3) 1877 թ. | 4) 1878 թ. |
|------------|------------|------------|------------|

**78. Երբ է կնքվել Փարիզի հաշտության պայմանագիրը.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) 1855 թ. հունվարին | 3) 1854 թ. նոյեմբերին |
| 2) 1855 թ. մայիսին   | 4) 1856 թ. մարտին     |

**79. Երբ է Ռուսաստանը պատերազմ սկսել օսմանյան Թուրքիայի դեմ.**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) 1877 թ. ապրիլի 12-ին | 3) 1877 թ. հոկտեմբերի 15-ին |
| 2) 1877 թ. ապրիլի 30-ին | 4) 1877 թ. նոյեմբերի 6-ին   |

**80. Երբ է Երևանյան ջոկատը գրավել Բայազետը.**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) 1877 թ. ապրիլի 12-ին | 3) 1877 թ. հոկտեմբերի 15-ին |
| 2) 1877 թ. ապրիլի 30-ին | 4) 1877 թ. նոյեմբերի 6-ին   |

**81. Երբ է Հ. Լազարևի զորամասը գրավել Կարսը.**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) 1877 թ. ապրիլի 12-ին | 3) 1877 թ. հոկտեմբերի 15-ին |
| 2) 1877 թ. ապրիլի 30-ին | 4) 1877 թ. նոյեմբերի 6-ին   |

**82. Երբ է կնքվել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը.**

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) 1877 թ. ապրիլի 12-ին   | 3) 1878 թ. մայիսի 25-ին |
| 2) 1878 թ. փետրվարի 19-ին | 4) 1878 թ. հուլիսի 1-ին |

**83. Երբ է կնքվել ռուս-անգլիական համաձայնագիրը.**

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) 1878 թ. փետրվարի 19-ին | 3) 1878 թ. մայիսի 25-ին |
| 2) 1878 թ. մայիսի 18-ին   | 4) 1878 թ. հունիսի 1-ին |

**84. Երբ է կնքվել անգլո-թուրքական գաղտնի համաձայնագիրը.**

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) 1878 թ. փետրվարի 19-ին | 3) 1878 թ. մայիսի 25-ին |
| 2) 1878 թ. մայիսի 18-ին   | 4) 1878 թ. հունիսի 1-ին |

**85. Երբ է սկսվել Բեռլինի վեհաժողովը.**

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) 1878 թ. փետրվարի 19-ին | 3) 1878 թ. հունիսի 1-ին |
| 2) 1878 թ. մայիսի 25-ին   | 4) 1878 թ. հուլիսի 1-ին |

**86. Երբ է ավարտվել Բեռլինի վեհաժողովը.**

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) 1878 թ. փետրվարի 19-ին | 3) 1878 թ. հունիսի 1-ին |
| 2) 1878 թ. մայիսի 25-ին   | 4) 1878 թ. հուլիսի 1-ին |

**87. Երբ է Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել արևմտահայերի ազգային կանոնադրությունը.**

- |                         |                        |
|-------------------------|------------------------|
| 1) 1860 թ. մարտի 17-ին  | 3) 1863 թ. մարտի 17-ին |
| 2) 1860 թ. մայիսի 24-ին | 4) 1859 թ. դեկտեմբերին |

**88. Երբ է սուլթանը վավերացրել արևմտահայերի ազգային սահմանադրությունը.**

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) 1860 թ. մարտի 17-ին  | 3) 1863 թ. մարտի 17-ին  |
| 2) 1860 թ. մայիսի 24-ին | 4) 1863 թ. մայիսի 24-ին |

**89. Երբ են Ջեյթունի ինքնապաշտպանության ղեկավարները խորհրդակցություն հրավիրել Ս. Աստվածածնի վանքում.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1862 թ. հունիսի 2-ին  | 3) 1862 թ. օգոստոսի 2-ին  |
| 2) 1862 թ. հուլիսի 29-ին | 4) 1862 թ. օգոստոսի 29-ին |

**90. Երբ են Ազիզ փաշայի զորքերը լայնածավալ գրոհ ձեռնարկել Ջեյթունի վրա.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1862 թ. հունիսի 2-ին  | 3) 1862 թ. օգոստոսի 2-ին  |
| 2) 1862 թ. հուլիսի 29-ին | 4) 1862 թ. օգոստոսի 29-ին |

**91. Երբ է ստեղծվել «Բարենպատակ ընկերություն» խմբակը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1869 թ. | 2) 1874 թ. | 3) 1881 թ. | 4) 1872 թ. |
|------------|------------|------------|------------|

**92. Երբ է ստեղծվել «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1869 թ. | 2) 1874 թ. | 3) 1872 թ. | 4) 1882 թ. |
|------------|------------|------------|------------|

**93. Երբ է ստեղծվել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1879 թ. | 2) 1874 թ. | 3) 1881 թ. | 4) 1882 թ. |
|------------|------------|------------|------------|

**94. Երբ է ստեղծվել «Հայրենասերների միություն» կազմակերպությունը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1883 թ. | 2) 1879 թ. | 3) 1881 թ. | 4) 1882 թ. |
|------------|------------|------------|------------|

95. Երբ է դադարել գործելուց «Հայրենասերների միություն» կազմակերպությունը.

- 1) 1874 թ.                      2) 1881 թ.                      3) 1882 թ.                      4) 1884 թ.

96. Երբ է ստեղծվել Արմենական կուսակցությունը.

- 1) 1888 թ.                      2) 1885 թ.                      3) 1887 թ.                      4) 1890 թ.

97. Երբ է ստեղծվել Հնչակյան կուսակցությունը.

- 1) 1883 թ.                      2) 1885 թ.                      3) 1887 թ.                      4) 1890 թ.

98. Երբ է հրատարակվել Հնչակյան կուսակցության ծրագիրը.

- 1) 1889 թ.                      2) 1887 թ.                      3) 1888 թ.                      4) 1890 թ.

99. Երբ են ստեղծվել Կարինի ու Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերը.

- 1) 1890 թ.                      2) 1887 թ.                      3) 1888 թ.                      4) 1889 թ.

100. Երբ է հնչակյանների ազգային թևը հանդես եկել «Վերակազմյալ հնչակյաններ» անունով.

- 1) Ալ. Մյասնիկյանը
- 2) Հ. Թումանյանը
- 3) Ս. Լուկաշինը
- 4) Ե. Չարենցը

54. ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունների ժամանակ քաղաքային խորհուրդներ ընտրվեցին միայն՝

- 1) Կապանում և Վաղարշապատում
- 2) Վաղարշապատում և Ալեքսանդրապոլում
- 3) Ալեքսանդրապոլում և Երևանում
- 4) Երևանում և Աշտարակում

55. Որքան պատգամավոր էր մասնակցում ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարին.

- 1) 200
- 2) 152
- 3) 252
- 4) 352

**56. Որքան կին պատգամավոր էր մասնակցում ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարին.**

- 1) 17                                      2) 27                                      3) 37                                      4) 47

**57. ՀՍԽՀ զինանշանի հեղինակն է՝**

- 1) Հակոբ Կոջոյանը                                      3) Գևորգ Բաշինջաղյանը  
2) Ալեքսանդր Թամանյանը                                      4) Մարտիրոս Սարյանը

**58. «ՌՍԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» մշակել էր՝**

- 1) Ս. Կիրովը                                      3) Ի. Ստալինը  
2) Վ. Լենինը                                      4) Գ. Չիչերինը

**59. Խորհրդային չորս հանրապետությունների ներկայացուցիչները ԽՍՀՄ-ի կազմավորման մասին ինչ փաստաթղթեր ստորագրեցին Մոսկվայում.**

- 1) Հոչակագիր և Միութենական պայմանագիր  
2) Միութենական պայմանագիր և Ինքնիշխանության հոչակագիր  
3) Ինքնավարության պայմանագիր և Հոչակագիր  
4) Դաշնային սահմանադրություն և Հոչակագիր

**60. Խորհրդային չորս հանրապետությունների ներկայացուցիչները ԽՍՀՄ-ի կազմավորման մասին փաստաթղթերը ստորագրեցին՝**

- 1) Պետրոգրադում                                      3) Կիևում  
2) Թիֆլիսում                                      4) Մոսկվայում

**61. Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսում ՌՍԽԴՀ լիազոր ներկայացուցիչն էր՝**

- 1) Յ. Գանեցկին                                      3) Պ. Մդիվանին  
2) Բ. Լեգրանը                                      4) Ս. Կիրովը

**62. Լոռիում վրացական ռազմակալման դեմ ապստամբություն կազմակերպելու համար Ղարաքիլիսայում ստեղծված սպայակույտի պետ էր նշանակվել՝**

- 1) Ա. Բեկզաղյանը                                      3) Ս. Լուկաշինը  
2) Հ. Լազյանը                                      4) Ա. Մռավյանը

**63. Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու համար ստեղծված հանձնաժողովում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչն էր՝**

- 1) Ա. Բեկզաղյանը                                      3) Ս. Լուկաշինը  
2) Հ. Լազյանը                                      4) Ա. Մռավյանը

**64. Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու համար ստեղծված հանձնաժողովի նախագահն էր՝**

- 1) Ս. Կիրովը                                      3) Ի. Ստալինը  
2) Գ. Օրջոնիկիձեն                                      4) Գ. Չիչերինը

65. Համազանգեզուրյան առաջին համագումարը հրավիրվել է՝  
 1) Տաթևում 3) Կապանում  
 2) Սիսիանում 4) Գորիսում
66. Համազանգեզուրյան երկրորդ համագումարը հրավիրվել է՝  
 1) Գորիսում 3) Տաթևում  
 2) Կապանում 4) Շուշիում
67. Լեռնահայաստանի վարչապետ ընտրվեց՝  
 1) Թևանը 3) Ա. Շահմազյանը  
 2) Գ.Նժդեհը 4) Ս. Վրացյանը
68. 1921 թ. քանի տոկոս էին կազմում հայերը Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ.  
 1) 95 2) 97 3) 85 4) 80
69. Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսին մասնակցելու նպատակով Մոսկվա ուղևորված հայկական պատվիրակությունը գլխավորում էր՝  
 1) Ս. Կասյանը 3) Ա. Բեկզադյանը  
 2) Ա. Մյասնիկյանը 4) Ա. Մռավյանը
70. Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր՝  
 1) Բ. Կարաբեքիրը 3) Մ. Քեմալը  
 2) Յ. Քեմալը 4) Ն. Նարիմանովը
71. Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի բացման օրը թուրքական պատվիրակության հետ հանդիպում ունեցավ՝  
 1) Ստալինը 2) Կիրովը 3) Լենինը 4) Գանեցկին
72. Խորհրդային Հայաստանում 1930-ական թթ. վերջի դրությամբ կոլտնտեսություններում որքան գյուղացիական տնտեսություն էր ընդգրկվել.  
 1) 180000 2) 40000 3) 280000 4) 370000
73. Խորհրդային Հայաստանում 1930-ական թթ. վերջի դրությամբ որքան կոլեկտիվ տնտեսություն էր ստեղծվել.  
 1) 400 2) 700 3) 1000 4) 3000
74. Ապրուստի միջոց հայթայթելու նպատակով 1933 թ. որքան ընտանիք լքեց Սևանա լճի ավազանի շրջանները.  
 1) 3550 2) 4750 3) 5850 4) 6750
75. Խորհրդային Հայաստանում 1930 թ. ապրիլի դրությամբ որքան տնտեսություն էր ունեցրվել որպես «կուլակ».  
 1) 500 2) 1100 3) 2200 4) 3100

76. Խորհրդային Հայաստանում 1929 թ. հողագուրկ գյուղացիների թիվը կազմում էր՝  
 1) 40000                      2) 60000                      3) 80000                      4) 100000
77. Նէպին անցնելու առաջին միջոցառումները ո՞ր ոլորտում իրականացվեցին.  
 1) արդյունաբերության                      3) գյուղատնտեսության  
 2) առևտրի                      4) շինարարության
78. Հայաստանում 1937 թ. վերջի դրությամբ որքան եկեղեցի էր փակվել.  
 1) 1500                      2) 3000                      3) 500                      4) 800
79. Ո՞վ է Գևորգ Ե Սուրենյանցից հետո ընտրվել Ամենայն հայոց կաթողիկոս.  
 1) Գարեգին Հովսեփյան                      3) Խորեն Սուրաբեգյան  
 2) Գևորգ Չորեքչյան                      4) Վազգեն Պալճյան
80. Խորհրդային Հայաստանում 1930–ական թթ. որքան մարդ է բռնաճնշումների ենթարկվել.  
 1) 15000                      2) 20000                      3) 25000                      4) 30000
81. Թվարկվածներից ո՞վ է քաղաքական բռնաճնշումների տարիներին արքայազն Հայաստանից.  
 1) Եղիշե Չարենց                      3) Հայկ Բժշկյանց  
 2) Ակսել Բակունց                      4) Գուրգեն Մահարի
82. Ո՞վ է 1930 թ. ընտրվել ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար.  
 1) Աղասի Խանջյան                      3) Ներսիկ Ստեփանյան  
 2) Սահակ Տեր-Գաբրիելյան                      4) Գրիգոր Հարությունյան
83. ՀԿ(Բ)Կ կենտկոմի տվյալներով՝ 1927 թ. Հայաստանում Տրոցկու տեսակետների որքան պաշտպան կար.  
 1) 138                      2) 438                      3) 1238                      4) 238
84. Խորհրդային Հայաստանի տարածքը քանի՞ շրջանների բաժանվեց 1930 թ. վարչական փոփոխությամբ.  
 1) 15                      2) 25                      3) 36                      4) 10
85. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ցուցաբերած սխրանքների համար որքան հայ է արժանացել ԽՍՀՄ հերոսի կոչման.  
 1) 101                      2) 64                      3) 108                      4) 119
86. Հայկական Թամանյան դիվիզիայի անձնակազմից քանիսն են արժանացել ԽՍՀՄ հերոսի կոչման.  
 1) 5                      2) 19                      3) 15                      4) 9

**87. Հայկական իր դիվիզիան Հայրենական պատերազմի տարիներին չի մասնակցել ռազմական գործողություններին.**

- 1) 51-րդ                      2) 408-րդ                      3) 261-րդ                      4) 409-րդ

**88. Հայ զորահրամանատարներից ո՞վ է Հայրենական պատերազմի տարիներին եղել ռազմաճակատի հրամանատար.**

- 1) Միքայել Պարսեղով                      3) Բագրատ Առուշանյան  
2) Համազասպ Բաբաջանյան                      4) Հովհաննես Բաղրամյան

**89. Ո՞վ է Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը.**

- 1) Գևորգ Վարդանյան                      3) Հունան Ավետիսյան  
2) Լազր Չափչախյան                      4) Նելսոն Ստեփանյան

**90. ԱՄԿ-ի կողմից 1967 թ. գաղտնի հրատարակվող թերթն էր՝**

- 1) «Փարոս»                      3) «Մշակ»  
2) «Արարատ»                      4) «Հորիզոն»

**91. Թվարկվածներից ո՞վ ԱՄԿ հիմնադիրներից չէ.**

- 1) Հայկազ Խաչատրյան                      3) Վիգեն Բաբայան  
2) Ստեփան Զատիկյան                      4) Շահեն Հարությունյան

**92. Թվարկվածներից ի՞րը Հայաստանում ստեղծված այլախոհական կազմակերպություն չէ.**

- 1) Շանթ                      3) Յոթ հայրենասերներ  
2) Սպարտակ                      4) Ազգային միացյալ կուսակցություն

**93. ԽՄԿԿ XX համագումարում «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումով հանդես եկավ՝**

- 1) Լ. Բերիան                      3) Վ. Մոլոտովը  
2) Ա. Միկոյանը                      4) Ն. Խրուշչովը

**94. Արցախյան շարժման սկզբում Երևանի իր հրապարակում էին ընթանում ամենօրյա հանրահավաքները՝ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի վերամիավորման.**

- 1) Հանրապետության                      3) Անկախության  
2) Թատերական                      4) Բարեկամության

**95. ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանին 150 պատգամավորներից ներկա էր՝**

- 1) 96-ը                      2) 130-ը                      3) 140-ը                      4) 110-ը

**96. Պաշտոնական տվյալներով Սումգաիթում զոհված հայերի թիվը կազմում է՝**

- 1) 100                      2) 57                      3) 27                      4) 70



97. 1995 թ. դեկտեմբերին ՀՀ-ում կատարված վարչաքաղաքական փոփոխությունների արդյունքում քանի մարզ ստեղծվեց.

- 1) 15                      2) 10                      3) 11                      4) 12

98. Ո՞վ է Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահը.

- 1) Վազգեն Մանուկյանը                      3) Սերժ Սարգսյանը  
2) Ռոբերտ Քոչարյանը                      4) Լևոն Տեր-Պետրոսյանը

99. Հայաստանի անկախության հանրաքվեին որքան մարդ մասնակցեց.

- 1) 1043000                      3) 2043000  
2) 1543000                      4) 2243000

100. 2007 թ. ՀՀ ԱԺ ընտրություններում 5 %-ի շեմը հաղթահարելու շնորհիվ քանի պատգամավորական տեղ ապահովեց «Ժառանգություն» կուսակցությունը.

- 1) 5                      2) 6                      3) 7                      4) 8

101. Արտահերթ ընտրություններից հետո ո՞ր կուսակցությունը դադարեցրեց ընդդիմադիր պայքարը և սատարեց նորընտիր նախագահին.

- 1) ՀՅԴ-ն                      2) ՀՀԿ-ն                      3) ՀԺԿ-ն                      4) ՕԵԿ-ը

102. Արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ նախագահ ընտրվեց՝

- 1) Կարեն Դեմիրճյանը                      3) Լևոն Տեր-Պետրոսյանը  
2) Ռոբերտ Քոչարյանը                      4) Սերժ Սարգսյանը

103. Ո՞ր կուսակցությունը 2009 թ. ապրիլի 22-ին դուրս եկավ կոալիցիայից.

- 1) ՀՀԿ-ն                      2) ԲՀԿ-ն                      3) ՀՅԴ-ն                      4) ՕԵԿ-ը

104. Առաջին խորհրդարանում ո՞րն էր ամենամեծ խմբակցությունը.

- 1) ՀՅԴ-ն                      2) ՀԿԿ -ն                      3) ՀՌԱԿ-ը                      4) ՀՀԾ-ն

105. 2003 թ. խորհրդարանական ընտրություններից հետո ո՞ր երեք կուսակցությունները կազմեցին կոալիցիա.

- 1) ՀՅԴ, ՀՀԿ, ԲՀԿ                      3) ՀՀԿ, ՀԺԿ, Ժառանգություն  
2) ՀԿԿ, ՀՅԴ, ՕԵԿ                      4) ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ

106. Միջազգային ո՞ր կազմակերպությանը անդամակցեց ՀՀ-ն 1992 թ. մարտի 2-ին.

- 1) ՄԱԿ-ին                      2) ՍԾՏՀ-ին                      3) ԵԽ-ին                      4) ԵՄ-ին

107. 1991 թ. դեկտեմբերի 1-ին ո՞ր պետությունը ճանաչեց, սակայն դիվանագիտական կապեր չհաստատեց ՀՀ-ի հետ.

- 1) Ադրբեջանը                      2) Թուրքիան                      3) Իրանը                      4) Կանադան

**108. 1992 թ. սկզբին ԼՂՀ վարչապետ նշանակվեց՝**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Հենրիխ Պողոսյանը | 3) Արթուր Մկրտչյանը |
| 2) Ռոբերտ Քոչարյանը | 4) Օլեգ Եսայանը     |

**109. 1992 թ. սկզբին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց՝**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Սերժ Սարգսյանը   | 3) Արթուր Մկրտչյանը |
| 2) Ռոբերտ Քոչարյանը | 4) Օլեգ Եսայանը     |

**110. Ռազմավարական նշանակություն ունեցող դր շրջանն են ազատագրել հայկական զորքերը 1993 թ. ապրիլին.**

- |              |           |           |             |
|--------------|-----------|-----------|-------------|
| 1) Քելբաջարը | 2) Ադդամը | 3) Լաչինը | 4) Հորադիզը |
|--------------|-----------|-----------|-------------|

**111. Ո՞վ նշանակվեց ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար 1992 թ. սկզբներին.**

- |                          |                     |
|--------------------------|---------------------|
| 1) Արկարի Տեր-Թադևոսյանը | 3) Սիմոն Աչիբգոյանը |
| 2) Արթուր Մկրտչյանը      | 4) Ռոբերտ Քոչարյանը |

**112. Որքան մարդ հայրենադարձվեց 1926–1936 թթ. ընթացքում.**

- |         |          |          |          |
|---------|----------|----------|----------|
| 1) 5016 | 2) 32000 | 3) 23000 | 4) 51000 |
|---------|----------|----------|----------|

**113. Որքան մարդ հայրենադարձվեց 1923 թ.**

- |         |         |          |          |
|---------|---------|----------|----------|
| 1) 5016 | 2) 1000 | 3) 23000 | 4) 25000 |
|---------|---------|----------|----------|

**114. Որքան մարդ հայրենադարձվեց 1925 թ.**

- |         |          |          |          |
|---------|----------|----------|----------|
| 1) 5016 | 2) 32000 | 3) 42000 | 4) 51000 |
|---------|----------|----------|----------|

**115. 1920–ական թթ. որտեղ ձևավորվեցին ամենամարդաշատ հայկական գաղթօջախները՝**

- |                          |                                 |
|--------------------------|---------------------------------|
| 1) ԱՄՆ–ում և Կանադայում  | 3) Սիրիայում և Լիբանանում       |
| 2) Ֆրանսիայում և Իրանում | 4) Բուլղարիայում և Ռումինիայում |

**116. Ո՞ր համաձայնագրով Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց քեմալական Թուրքիային.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Լոնդոնի | 3) Անկարայի   |
| 2) Փարիզի  | 4) Սան Ռեմոյի |

**117. Որքան հայեր տեղափոխվեցին ԱՄՆ բնակության 1947–1951 թթ. ընթացքում.**

- |         |          |         |          |
|---------|----------|---------|----------|
| 1) 4500 | 2) 10000 | 3) 3000 | 4) 25000 |
|---------|----------|---------|----------|

**118. Աշխարհի քանի՞ երկրներից հայեր վերադարձան Խորհրդային Հայաստան 1962–1982 թթ. ընթացքում.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 17 | 2) 30 | 3) 50 | 4) 12 |
|-------|-------|-------|-------|

**119. Աշխարհի քանի՞ երկրներից հայեր վերադարձան Խորհրդային Հայաստան գանգվածային հայրենադարձության ժամանակ.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 17 | 2) 15 | 3) 22 | 4) 12 |
|-------|-------|-------|-------|

120. ԽՍՀՄ կառավարության որոշմամբ՝ 1947 թ. որքան սփյուռքահայեր պետք է ներգաղթեին Խորհրդային Հայաստան.

- 1) 51000                      2) 63000                      3) 25000                      4) 90000

121. ԽՍՀՄ արտասահմանյան ներկայացուցչությունների և Սփյուռքի հայկական կոմիտեների տվյալներով՝ ներգաղթելու համար 1945 թ. վերջին –1946 թ. սկզբին որքան մարդ էր ցուցակագրվել.

- 1) 360000                      2) 260000                      3) 160000                      4) 60000

122. Որքան մարդ վերադարձավ հայրենիք Մեծ հայրենադարձության արդյունքում.

- 1) 42000                      2) 90000                      3) 63000                      4) 32000

123. Արմֆանի կազմում 1941 թ. որքան գիտահետազոտական հիմնարկներ էին գործում.

- 1) 21                              2) 11                              3) 16                              4) 15

124. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) առաջին նախագահն էր՝

- 1) Լևոն Ռոտինյանը    3) Ֆրանց Լևինսոն–Լեսինգը  
2) Հակոբ Մանանդյանը    4) Հովսեփ Օրբելին

125. Ո՞ւմ ղեկավարությամբ է Լենինականում (Գյումրի) հիմնվել պետական թատրոնը.

- 1) Վարդան Աճեմյանի    3) Լևոն Քալանթարյանի  
2) Հրաչյա Ղափլանյանի    4) Արմեն Գուլակյանի

126. Ո՞վ է «Ալմաստ» օպերայի հեղինակը.

- 1) Ա. Խաչատրյանը    3) Ա. Սպենդիարյանը  
2) Տ. Չուխաջյան    4) Տ. Մանսուրյանը

127. Հայաստանում որքան թատրոն էր գործում մինչև Հայրենական մեծ պատերազմը.

- 1) 20                              2) 16                              3) 36                              4) 26

128. Ո՞վ էր Գաբրիել Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի առաջին ռեժիսորը.

- 1) Վարդան Աճեմյանը    3) Վաղարշ Վաղարշյանը  
2) Լևոն Քալանթարյանը    4) Հովհաննես Աբելյանը

129. Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվել է՝

- 1) «Հրազդան» մարզադաշտը    3) օպերայի և բալետի թատրոնը  
2) Սասունցի Դավթի արձանը    4) մարզահամերգային համալիրը

130. Թվարկվածներից ո՞վ «Երեքի» խմբակի անդամ չէր.

- 1) Գ. Աբով                      2) Ե. Չարենց                      3) Ա. Վշտունի                      4) Ա. Բակունց

**131. Ո՞վ է հայկական ազգային կերպարվեստի դպրոցի նահապետը.**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Մարտիրոս Սարյանը | 3) Հովհաննես Զարդարյանը |
| 2) Գրիգոր Խանջյանը  | 4) Հովհաննես Այվազովսկի |

**132. 1967 թ. տվյալներով Հայաստանի գիտահետազոտական հիմնարկներում կար ավելի քան ..... գիտական աշխատող.**

- |         |          |         |        |
|---------|----------|---------|--------|
| 1) 8000 | 2) 20000 | 3) 1500 | 4) 180 |
|---------|----------|---------|--------|

**133. Հայաստանում 1967 թ. որքան գիտահետազոտական հիմնարկներ էին գործում.**

- |        |        |        |        |
|--------|--------|--------|--------|
| 1) 130 | 2) 150 | 3) 121 | 4) 112 |
|--------|--------|--------|--------|

**134. Թվարկվածներից ո՞ր կինոնկարն է ստեղծվել Հայրենական մեծ պատերազմի տարիներին.**

- |                 |                           |
|-----------------|---------------------------|
| 1) «Նոան գոյնը» | 3) «Մենք ենք, մեր սարերը» |
| 2) «Եռանկյունի» | 4) «Դավիթ Բեկ»            |

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

**1. Ո՞վ է ձևակերպել Հայոց ազգային խորհրդի հրապարակած կոչը, որից մեջբերված է մի հատված.**

«... Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն...».

- |                |                 |
|----------------|-----------------|
| 1) Լ. Շանթ     | 3) Ա. Խատիսյան  |
| 2) Ն. Աղբալյան | 4) Ա. Մանուկյան |

**2. Պատմական ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը.**

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն».

- 1) Սևրի պայմանագիր
- 2) Հայաստանի անկախության հռչակագիր
- 3) ՀՀ Սահմանադրություն
- 4) Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ

**3. Ո՞ր մարմնի որոշումից է մեջբերված հատվածը.**

«Ճարտունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը».

- |                               |   |
|-------------------------------|---|
| 1) ՌՍԴԽՀ Ժողկոմխորի           | 3) ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենում |
| 2) ՌԿ (Բ)Կ կենտկոմի քաղբյուրո | 4) Ալեքսանդրապոլի ՌՀԿ                   |

**4. Ովքեր էին ներքոբերյալ տեսակետի հեղինակները.**

Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում «հրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողափարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողափարածքները, և՛ իր ժողովրդի այնպեղ մնացած հատվածները»:

- |                  |                   |
|------------------|-------------------|
| 1) քեմալականները | 3) վրացիները      |
| 2) բոլշևիկները   | 4) ադրբեջանցիները |

**5. Ո՞ր իրադարձության հետ կապված է ասվել հետևյալ տեսակետը.**

*Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում «հրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողապարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և իր երբեմնի հողապարածքները, և իր ժողովրդի այնպեղ մնացած հատվածները»:*

- 1) Բաթումի պայմանագրի կնքման
- 2) Սևրի պայմանագրի կնքման
- 3) ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի
- 4) ԽՍՀՄ-ի կազմավորման

**6. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

- 1) Ա. Մյասնիկյանը
- 2) Ա. Մանուկյանը
- 3) Գ. Նժդեհը
- 4) Ա. Մռավյանը

**7. Ո՞ր իրադարձության հետ կապված է այս դիրքորոշումն արտահայտվել.**

*«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

- 1) Կարսի պայմանագրի կնքման
- 2) Ջալալխքի և Լոռու պատկանելության որոշման
- 3) Սևրի պայմանագրի կնքման
- 4) Լոզանի պայմանագրի կնքման

**8. Հետագայում որտեղ ստորագրվեց ստորև հիշատակվող «կնքվելիք» պայմանագիրը.**

*Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի այդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև կնքվելիք պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց»:*

- 1) Բաթումում
- 2) Թիֆլիսում
- 3) Կարսում
- 4) Երևանում

**9. Երբ է տեղի ունեցել հետևյալ ելույթը.**

*Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասաց. «Մենք հաստատականորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հեղափոխ զարգացման համար»:*

- |                             |                          |
|-----------------------------|--------------------------|
| 1) 1945 թ. մայիսի 9–ին      | 3) 1946 թ. փետրվարի 1–ին |
| 2) 1921 թ. հոկտեմբերի 16–ին | 4) 1965 թ. ապրիլի 24–ին  |

**10. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասաց. «Մենք հաստատականորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հեղափոխ զարգացման համար»:*

- |                         |                    |
|-------------------------|--------------------|
| 1) Աղասի Խանջյան        | 3) Ասքանազ Մռավյան |
| 2) Գրիգոր Հարությունյան | 4) Յակով Զարուբյան |

**11. Երբ են ասվել մեջբերված խոսքերը.**

*«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:*

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1988 թ. հունիսի 15–ին | 3) 1988 թ. փետրվարի 20–ին |
| 2) 1988 թ. հուլիսի 18–ին | 4) 1990 թ. օգոստոսի 23–ին |

**12. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

*«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:*

- 1) Զորի Բալայան
- 2) Վաչե Սարուխանյան
- 3) Յակով Զարուբյան
- 4) Հենրիխ Պողոսյան

**13. Ե՞րբ է ընդունվել պատմական այս որոշումը.**

*«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխարավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:*

- 1) 1988 թ. հունիսի 15–ին
- 2) 1989 թ. դեկտեմբերի 1–ին
- 3) 1988 թ. փետրվարի 20–ին
- 4) 1990 թ. օգոստոսի 23–ին

**14. Ո՞ր մարմինն է ընդունել ստորև տրված որոշումը.**

*«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխարավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:*

- 1) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը
- 2) Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեն
- 3) ԼՂԻՄ մարզային խորհուրդը
- 4) Հայաստանի Գերագույն խորհուրդը



## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջին հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի միակ ընտրություններն ինչ ընտրակարգով անցկացվեցին.
  - 1) մեծամասնական
  - 2) համամասնական
  - 3) մեծամասնական և համամասնական
  - 4) եռաստիճան
2. Առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվում էր՝
  - 1) Ազգային խորհուրդ
  - 2) Ազգային ժողով
  - 3) Հայաստանի խորհրդարան
  - 4) Սահմանադիր ժողով
3. Առաջին հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինները կոչվում էին՝
  - 1) խորհուրդներ
  - 2) գեմասովոներ
  - 3) շրջկոմներ
  - 4) հեղկոմներ
4. Մայիսյան ապստամբության ժամանակ բոլշևիկների ստեղծած ղեկավար մարմինը կոչվում էր՝
  - 1) Չեկա
  - 2) ԺԿԽ
  - 3) ՌՀԿ
  - 4) ՌԿ(Բ)Կ
5. Երկրամասը կառավարելու համար Նժդեհի ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվում էր՝
  - 1) Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ
  - 2) Զանգեզուրի բանվորական ժամանակավոր խորհուրդ
  - 3) Զանգեզուրի միացյալ խորհուրդ
  - 4) Զանգեզուրի կոմիտե
6. Դե ֆակտո նշանակում է՝
  - 1) իրականում
  - 2) իրավաբանորեն
  - 3) փաստացի
  - 4) օրենքով
7. Հայաստանը խորհրդայնացնելու նպատակով Բաքվում կազմավորված մարմինը կոչվում էր՝
  - 1) Հայաստանի օգնության կոմիտե
  - 2) Հայաստանի խորհուրդ
  - 3) Հայաստանի ժողկոմխորհ
  - 4) Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե
8. Ս. Կասյանի հրամանով ստեղծված Արտակարգ հանձնաժողովը հայտնի է նաև ..... անունով.
  - 1) Ժողկոմխորհ
  - 2) Կենտգործկոմ
  - 3) Չեկա
  - 4) ՌՀԿ

- 9. Փետրվարյան ապստամբության ժամանակ Երևանում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր՝**
- 1) Հայաստանի հեղափոխական կոմիտե 3) Հայրենիքի փրկության կոմիտե  
2) Հայաստանի փրկության կոմիտե 4) Հայաստանի օգնության կոմիտե
- 10. Խորհրդային Հայաստանին արտաքին օգնություն կազմակերպելու գործում նշանակալից դեր կատարած կազմակերպությունը, որ հիմնվել էր Երևանում, կոչվում էր՝**
- 1) Հայ օգնության միություն 3) Հայրենիքի օգնության կոմիտե  
2) Հայաստանի օգնության խորհուրդ 4) Հայաստանի օգնության կոմիտե
- 11. ՀՍԽՀ-ում իշխանության տեղական գործադիր մարմինները, որոնք նշանակովի էին և ժամանակավոր, կոչվում էին՝**
- 1) խորհուրդներ 3) շրջկոմներ  
2) գեմստվոներ 4) հեղկոմներ
- 12. ՀՍԽՀ-ում իշխանության ընտրովի մարմինները կոչվում էին՝**
- 1) շրջկոմներ 3) խորհուրդներ  
2) գեմստվոներ 4) հեղկոմներ
- 13. ՀՍԽՀ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը, որ գործում էր խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, կոչվում էր՝**
- 1) Ժողկոմխորհ 3) Կենտկոմ  
2) Կենտգործկոմ 4) ՌՀԿ
- 14. ՀՍԽՀ գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կոչվում էր՝**
- 1) Ժողկոմխորհ 3) Կենտկոմ  
2) Կենտգործկոմ 4) ՌՀԿ
- 15. Ստալինի մշակած «ՌՍԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ինչ անվանում ստացավ.**
- 1) միութենական ծրագիր 3) ինքնավարացման ծրագիր  
2) անկախության հռչակագիր 4) միութենական հռչակագիր
- 16. Ո՞րն էր նէպի տնտեսական բովանդակությունն ու նպատակը.**
- 1) ազատ առևտրի վերականգնման հիման վրա պարենհարկի արմատավորմամբ աշխուժացնել և զարգացնել երկրի տնտեսությունը  
2) ազգայնացնել մասնավոր ձեռնարկությունները, շինություններն ու բանկերը  
3) ինդուստրացնել երկիրը  
4) ավարտին հասցնել կուլտուրական հեղափոխությունը

**17. Ինչ էր արտելը.**

- 1) գյուղում տեղական իշխանության մարմին
- 2) գյուղացիների միավորում
- 3) գյուղացիական միացյալ տնտեսություն
- 4) գյուղացիական խորհրդային տնտեսություն

**18. Թվարկվածներից որո՞նք են բնորոշում նեպը.**

- 1) վերականգնվեց ազատ առևտուրը
- 2) արգելվեց դրամական աշխատավարձի կիրառումը
- 3) աշխուժացան ապրանքադրամական հարաբերությունները քաղաքի և գյուղի միջև
- 4) պարենհարկի փոխարեն մտցվեց պարենմասնատրումը
- 5) խոշոր և միջին բուրր ձեռնարկությունները սեփականաշնորհվեցին

**19. Թվարկվածներից որո՞նք խորհրդային ամբողջատիրական համակարգի բնորոշ գծերից չեն.**

- 1) երկկուսակցական համակարգի հաստատումը
- 2) իշխանության երեք ճյուղերի իրական տարանջատումը
- 3) միակուսակցական համակարգի հաստատումը
- 4) իշխող կուսակցության ներսում ընդդիմության ոչնչացումը
- 5) իշխանության բռնազավթումը այդ կուսակցության կողմից
- 6) ընդդիմության առկայությունը խորհրդարանում
- 7) գաղափարախոսական բազմակարծության վերացումը
- 8) եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական քաղաքականությունը

**20. Թվարկվածներից որո՞նք են բնորոշ իրավապաշտպանին.**

- ա) պայքարում էր բնության և շրջակա միջավայրի պաշտպանության համար  
բ) անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները  
գ) խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը  
դ) խորհրդային իշխանության դեմ զինված պայքար էր մղում  
ե) պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար

- 1) բ, ե                      2) ա, դ                      3) գ, ե                      4) գ, դ

**21. Թվարկվածներից որո՞նք են բնորոշ այլախոհին.**

- 1) պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար
- 2) անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
- 3) խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը

- 4) խորհրդային իշխանության և մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ գաղափարական պայքար էր մղում
- 5) ընդունում էր խորհրդային օրենքներն ու պաշտոնապես հռչակված արժեքները և պայքարում էր դրանց պաշտպանության համար
- 6) խորհրդային իշխանության և մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ պայքարում էր ուժային և գաղափարական միջոցներով

**22. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու նպատակով իրականացվող քաղաքականությունը ստացել է «..... դիվանագիտություն» անվանումը.**

- 1) Շախմատային
- 2) Ֆուտբոլային
- 3) Հայկական հարցի
- 4) Նախապայմանների

**23. Շուշիի ազատագրման գործողությունը ստացավ «.....» անվանումը.**

- 1) Օղակ (Կոլցո)
- 2) Աղեղ
- 3) Հարսանիք լեռներում
- 4) Հարսանյաց հանդես

**24. Ազգերի լիզայի ընդունած որոշմամբ՝ Կիլիկիայում կամ Թուրքիայի հյուսիսարևելյան վիլայեթներում հայ գաղթականների բնակության համար ստեղծվելիք շրջանը կոչվեց՝**

- 1) Հայկական տուն
- 2) Տունն Կիլիկիոյ
- 3) Ազգային օջախ
- 4) Հայոց օջախ

**25. Խորհրդային Հայաստան ներգաղթն իրականացնելու համար կառավարությանն առընթեր ստեղծված մարմինը կոչվում էր՝**

- 1) Գաղթականների զբաղվածության կոմիտե
- 2) Ներգաղթողների պետական կոմիտե
- 3) Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե
- 4) Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե

**26. Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում էր՝**

- 1) Հայկական համաշխարհային կոնգրես կամ Ազգային խորհուրդ
- 2) Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ
- 3) Ազգային պատվիրակություն
- 4) Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե

**27. Ինչ է սոցիալիստական ռեալիզմը.**

- 1) խորհրդային հասարակության իրական վիճակ
- 2) խորհրդային մշակույթի մեջ ստեղծագործական գլխավոր սկզբունք
- 3) խորհրդային գիտության մեջ նոր ուղղություն
- 4) խորհրդային փիլիսոփայության նոր ուղղություն

**28. Ինչ է պրոլետարկուլտը.**

- 1) պրոլետարական երաժիշտների միություն
- 2) պրոլետարների քաղաքական խմբակ
- 3) պրոլետարական գրական շարժում
- 4) պրոլետարիատի իշխանության ձև

**29. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բացատրությանը.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) նէպ                   | 3) արդյունաբերացում        |
| 2) սոցիալիստական ռեալիզմ | 4) համատարած կոլեկտիվացում |
|                          | 5) կուլակաթափություն       |

ա. խորհրդային երկրում կիրառված քաղաքական կուրս, որի շնորհիվ երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը պետք է գերազանցեր գյուղատնտեսական արտադրանքի ծավալին

բ. խորհրդային երկրում կիրառված քաղաքական կուրս, որի շնորհիվ երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը պետք է հասներ առևտրի ծավալին

գ. միջակ և չքավոր բոլոր գյուղացիների բռնի անդամագրումը կոլեկտիվ տնտեսություններին

դ. խորհրդային արվեստի և գրականության մեջ իրականության արտացոլման սկզբունք

ե. ունևոր գյուղացիության ունեզրկում

զ. խորհրդային երկրում կիրառված քաղաքական կուրս, որի նպատակն էր շուկայական հարաբերությունների հենքի վրա վերականգնել ու զարգացնել տնտեսությունը

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-զ | 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե |
| 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-ե | 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-գ, 5-ե |

**30. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երեք ճիշտ բացատրությունները.**

- 1) Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր շահապ:
- 2) Հայդուկ արաբերեն նշանակում է տասնապետ:
- 3) Օսմանյան կայսրությունում ազդեցություն ձեռք բերելու և նրանից զանազան զիջումներ կորզելու նպատակով եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը:
- 4) Կիլիկիայում XIII դ. սկզբներին ստեղծված պաշտպանական ամրությունները կոչվել են սղնախներ:

- 5) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ:
- 6) «Այլախոհ» հասկացությունը խորհրդային երկրում ի հայտ եկավ 1960-ական թթ. և բնութագրում էր մարդկանց, ովքեր գաղափարական պայքար էին մղում խորհրդային իշխանության և մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ:
- 7) Խորհրդային երկրում կիրառված քաղաքական կուրսը, որի շնորհիվ երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը պետք է գերազանցեր գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, հայտնի է «ազատականացում» անունով:

**31. Թվարկվածներից որոնք են բնորոշ նէպին.**

- 1) դրամական աշխատավարձի կիրառումից հրաժարումը
- 2) ազատ առևտրի վերականգնումը
- 3) քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը
- 4) պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կիրառումը
- 5) հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
- 6) գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
- 7) մանր և միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը
- 8) հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումների արգելումը

## **5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

---

### **1. Բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբությունը պարտվեց, որովհետև՝**

- 1) ընթանում էր թուրք-հայկական պատերազմը, և բնակչությունը չպաշտպանեց նրանց
- 2) Խորհրդային Ռուսաստանը չաջակցեց
- 3) Վրաստանը չտրամադրեց խոստացված օգնությունը
- 4) լուրջ նախադրյալներ չկային
- 5) բոլշևիկները հույսը դրել էին միայն իրենց ուժերի վրա
- 6) ապստամբությունը միաժամանակ չսկսվեց տարբեր վայրերում
- 7) Ադրբեջանը խորհրդայնացվել էր

### **2. Անգլիան Անդրկովկասում վարում էր ադրբեջանամետ քաղաքականություն, որովհետև՝**

- 1) կարիք ուներ Ադրբեջանի զինված ուժերի աջակցությանը Բաքվի կոմունայի դեմ պայքարում
- 2) ձգտում էր իր վերահսկողության տակ պահելու անդրկովկասյան երկաթուղին
- 3) ձգտում էր իր տնօրինության տակ պահելու Բաքվի նավթը
- 4) օգտագործում էր Ադրբեջանին որպես հակակշիռ Թուրքիայի դեմ

### **3. ՀՀ-ն 1920 թ. վերջին խորհրդայնացվեց, որովհետև՝**

- 1) Վրաստանը չտրամադրեց խոստացված օգնությունը
- 2) Խորհրդային Ռուսաստանն այդ ժամանակ դրեց Հայաստանն անմիջապես խորհրդայնացնելու պահանջ
- 3) Թուրքիան ու Ռուսաստանը դարձել էին սերտ դաշնակիցներ և ուզում էին կործանել Անտանտի դաշնակից Հայաստանի Հանրապետությունը
- 4) Անտանտի երկրները ՀՀ կառավարությանը ուշացումով տրամադրեցին խոստացված օգնությունը
- 5) հայ բոլշևիկներին աջակցեցին ռուսական Կարմիր բանակը և Խորհրդային Ադրբեջանը
- 6) հաղթականորեն ավարտվեց աշխատավոր ժողովրդի ապստամբությունը
- 7) ՀՀ խորհրդարանական ընտրություններում հաղթեցին բոլշևիկները

### **4. Փետրվարյան ապստամբությունը ավարտվեց պարտությամբ, որովհետև՝**

- 1) ընթանում էր թուրք-հայկական պատերազմը, և բնակչությունը չպաշտպանեց ապստամբներին
- 2) Խորհրդային Ռուսաստանը կանգնած էր Հայիեղկոմի թիկունքին
- 3) Վրաստանը չտրամադրեց խոստացված օգնությունը
- 4) Փետրվարյան ապստամբությունը համաժողովրդական բնույթ չունեց

**5. Թվարկվածներից որոնք են Փետրվարյան ապստամբության հետևանքներ.**

- 1) Այն սթափեցնող ազդեցություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն գործել:
- 2) Արցախը և Սյունիքը մնացին ՀՄԽՀ-ի կազմում:
- 3) Հայաստանում սկսեցին կիրառել ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:
- 4) Հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու նպատակով Հայիեդկոմը համաներում ընդունեց:
- 5) Մոսկվայի և ռուսական այլ բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր հայ մարդիկ:
- 6) Սկսվեց Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը:
- 7) Խորհրդային իշխանությունը ձեռնամուխ եղավ հայկական բանակի արքայազն սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործին:

**6. Հայ-վրացական սահմանազատման համաձայնագրով՝**

- ա. Ջավախքն ամբողջությամբ միացվեց Խորհրդային Հայաստանին
- բ. Լոռին, բացառությամբ Հյուսիսային Լոռու հայկական մի խումբ գյուղերի (Աղ-Քյորփի, Օփրեթ, Խոժոռնի և այլն), մնում էր Խորհրդային Հայաստանին
- գ. Լոռին, բացառությամբ Հարավային Լոռու հայկական մի խումբ գյուղերի, միացվեց Խորհրդային Վրաստանին
- դ. Ջավախքն անցավ Վրաստանին
- ե. Ախալքալաքը մնաց Հայաստանին, իսկ Ախալցխան՝ Վրաստանին

- 1) ա, դ                      2) բ, ե                      3) բ, դ                      4) գ, ե

**7. Թվարկվածներից որոնք են Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ.**

- ա. Հիմնադրվեց քիմիական արդյունաբերությունը:
- բ. Գյումրին դարձավ պղնձարդյունաբերության կենտրոն:
- գ. Երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն:
- դ. Առաջին երկու հնգամյակների տարիներին կառուցվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
- ե. Ղափանը դարձավ ոսկու արդյունահանման կենտրոն:
- զ. Բանվորների թիվն աճեց և 1940 թ. կազմեց 500 000:
- է. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:

- 1) ա, դ, է                      2) ա, գ, ե                      3) բ, ե, գ                      4) բ, դ, է



**8. Նէպի ձախողման և այդ քաղաքականությունից հրաժարվելու պատճառներից էին՝**

- 1) ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակերպի վերականգնումը
- 2) գների ազատականացումը
- 3) պետության՝ տարեցտարի մեծացող միջամտությունը երկրի տնտեսական կյանքին
- 4) հացամթերումների բնագավառում 1927–1928 թթ. առաջացած դժվարությունները
- 5) ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության ավելացումը
- 6) անցումը կառավարման ժողովրդավարական եղանակին
- 7) ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը

**9. Թվարկվածներից որոնք են Հայաստանում նէպի կենսագործման արդյունքներ.**

- ա. դասակարգային պայքարի վերացումը երկրում
- բ. գյուղատնտեսության վերականգնումը
- գ. ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության վերացումը
- դ. արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնումը
- ե. տնտեսության արդյունաբերացումը
- զ. տնտեսության հասնելը զարգացման նախապատերազմյան՝ 1939 թ. մակարդակին
- է. բնակչության կենսամակարդակի բարելավումը

- 1) դ, գ, է                      2) բ, դ, է                      3) բ, դ, է                      4) ա, գ, զ

**10. Նէպի սկզբնական շրջանում շուկայական հարաբերությունների աշխուժացումը նպաստեց, որ՝**

- 1) պետությունը հրաժարվի տնտեսական կյանքին միջամտելուց
- 2) երկրում հաստատվի իրական ժողովրդավարություն
- 3) անցում կատարվի խորհուրդների իշխանությունից հեղկոմների իշխանության
- 4) բնամթերային հարկաձևը փոխարինվի դրամական հարկաձևով

**11. Խորհրդային կառավարությունը 1953 թ. մայիսին պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի, որովհետև՝**

- ա. Թուրքիան դարձել էր ԽՍՀՄ-ի դաշնակից երկիր
- բ. սկսվել էր սառը պատերազմը
- գ. Ստալինը խուսափեց Թուրքիայի հետ ռազմական բախումից
- դ. ստեղծվել էր Հյուսիսատլանտյան դաշինքը, և Թուրքիան անդամակցել էր դրան
- ե. Վարշավյան դաշինքի երկրները չաջակցեցին խորհրդային պետությանը այդ հարցում

- 1) ա, դ                      2) բ, գ                      3) բ, դ                      4) գ, է

**12. Ինչո՞ւ Ստալինը Պոտսդամի կոնֆերանսում զիջեց և քննարկումից հանեց հայկական տարածքների հարցը.**

- 1) ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը պաշտպանում էր Թուրքիային:
- 2) Անգլիայի վարչապետ Չերչիլը պաշտպանում էր Թուրքիայի շահերը:
- 3) Ճապոնիան և Գերմանիան պաշտպանում էին Թուրքիային:
- 4) Ստալինը զգուշացավ, թե ԱՄՆ-ն կհարձակվի ԽՍՀՄ-ի վրա:
- 5) ԱՄՆ-ի նախագահ Թրումանը փորձում էր հարցը դարձնել խորհրդա-թուրքական երկկողմ քննարկման առարկա:

**13. Թվարկվածներից որո՞նք են «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթղթի դրույթների կենսագործման արդյունքներ.**

- ա. ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի պատմության մեջ սկսվեց առաջին հանրապետության շրջանը:
- բ. Հանրապետությունում ամբողջ գործադարությունը կատարվում է միայն հայերենով:
- գ. Երկրի տնտեսության հիմքում դրվեցին պետական սեփականատիրական և պլանային տնտեսության սկզբունքները:
- դ. Հայաստանը ստեղծեց սեփական դրամական միջոցներ:
- ե. Բոլոր ձեռնարկությունները պետականացվեցին:
- զ. Հողը՝ իբրև մասնավոր սեփականություն, տրվեց գյուղացուն:

- 1) բ, դ, զ                      2) ա, գ, դ                      3) բ, ե, զ                      4) գ, դ, ե

**14. 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը՝**

- 1) ընդունեց «Հայաստանի անկախության մասին հոչակագիրը»
- 2) դուրս եկավ ԱՊՀ-ի կազմից
- 3) մտավ ԱՊՀ-ի կազմը
- 4) հոչակվեց անկախ պետություն

**15. 1996 թ. սեպտեմբերի 22-ի նախագահական ընտրությունների հետևանքով՝**

- 1) հանրապետության նախագահ ընտրվեց Ռ. Քոչարյանը
- 2) մարդիկ դուրս եկան հանրահավաքի և ցույցերի
- 3) ընդդիմադիր հիմնական ուժերը միավորվեցին ՀՀՇ-ի շուրջը
- 4) վարչապետ նշանակվեց Անդրանիկ Մարգարյանը

**16. 1991 թ. փետրվարին ընդունված օրենքի արդյունքում՝**

- 1) ՀՀ-ում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ
- 2) կասեցվեց դաշնակցության գործունեությունը Հայաստանում
- 3) ձևավորվեց «Հանրապետություն» քաղաքական միավորումը
- 4) սկսվեցին ընդդիմության առաջնորդների ձերբակալությունները

**17. ՀՀ ընդդիմադիր ուժերի միավորման հետևանքով 2008 թ. օգոստոսին ձևավորվեց՝**

- 1) ՀԱԿ-ը                      2) ՀՀԿ –ն                      3) ԲՀԿ –ն                      4) ՄԱԿ-ը

**18. Թվարկվածներից ո՞րը 1930–ական թթ. երկրորդ կեսին հայրենադարձության ընդհատման պատճառ չէր.**

- 1) Խորհրդային երկրում ծավալված քաղաքական բռնությունները  
2) Խորհրդային Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման վտանգի աճը  
3) Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև հարաբերությունների ընդհատումը  
4) հայրենադարձների նկատմամբ Խորհրդային իշխանությունների կիրառած բռնությունները

**19. Հայ գաղթականներն առաջին հերթին ձգտում էին հաստատվելու այն երկրներում, ուր կար հայկական համայնք, որովհետև՝**

- 1) ակնկալում էին այդ երկրների սոցիալիստական իշխանությունների աջակցությունը  
2) այդ երկրներում կար ժողովրդավարական ուժեղ իշխանություն  
3) ակնկալում էին իրենց ազգակիցների օժանդակությունը  
4) այդ երկրները հեռու էին Թուրքիայից

**20. Անկարայի պայմանագրի արդյունքում՝**

- 1) Ռուսաստանը հրաժարվեց Սևրի պայմանագիրը իրագործելուց  
2) սրվեցին հարաբերությունները Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև  
3) Ֆրանսիան Կիլիկիայի մանդատը հանձնեց Անգլիային  
4) Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց թուրքերին

**21. Գտնել սխալ պատասխանը.**

*Չմերժելով հայրենադարձության կարևորությունը՝ դաշնակցությունը փազնապարհ էր զանգվածային ներգաղթ իրականացնելու հարցի վերաբերյալ, որովհետև՝*

- 1) Հայ դատի, հայ պահանջատիրության միակ արձարժողը մնում էր սփյուռքահայությունը  
2) Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից, իսկ ԽՍՀՄ-ը մտադիր չէր հանդես գալ Հայկական հարցի լուծման օգտին  
3) զանգվածային ներգաղթը կարող էր վնասել խոշոր և կայացած գաղթօջախներին  
4) ԽՍՀՄ կառավարությունը հրաժարվել էր հայկական հողերը վերադարձնելու պահանջից

**22. Թվարկվածներից որո՞նք են Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության պատճառներից.**

- 1) ԱՄՆ-ի հեղինակության բարձրացումը  
2) Հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու հայ քաղաքական-ազգային ուժերի մտայնության աճը

- 3) Խորհրդային Միության ղեկավարության հայանպաստ դիրքորոշումը
- 4) Յալթայի կոնֆերանսի կողմից հայանպաստ որոշումների ընդունումը
- 5) Թուրքիայի անդամակցելը ՆԱՏՕ–ին

**23. Թվարկվածներից որը Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության ընդհատման պատճառներից չէր.**

- 1) սառը պատերազմի իրողությունը
- 2) խորհրդա–թուրքական բարեկամական հարաբերությունների սերտացումը
- 3) խորհրդային երկրի տնտեսական դժվարությունները
- 4) ԽՍՀՄ–ի ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները

**24. Թվարկվածներից որը Արմֆանի ստեղծման պատճառ չէր.**

- 1) գիտահետազոտական հիմնարկների թվաքանակի աճը
- 2) գիտական աշխատանքների համակարգման անհրաժեշտությունը
- 3) միասնական գիտական կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը
- 4) գիտատեխնիկական հեղափոխության ծավալումը

**25. Թվարկվածներից որոնք են 1950–1960–ական թթ. հայագիտության զարգացման արդյունքներ.**

ա. «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հրատարակման սկիզբը  
 բ. «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաների նախագծումը  
 գ. «Հայ նոր գրականության պատմություն» երեք հատորների հրատարակումը  
 դ. ուրարտական և հելլենիստական շրջանի հուշարձանների պեղումները  
 ե. Բյուրականի աստղադիտարանի վերածվելը գիտահետազոտական խոշոր կենտրոնի  
 զ.«Երկունք» և «Նահապետ» պատմական կինոնկարների ստեղծումը

- 1) բ, գ, զ
- 2) գ, դ, ե
- 3) ա, բ, դ
- 4) ա, գ, դ

**26. Թվարկվածներից որոնք են հանդիսացել Խորհրդային Հայաստանում հայագիտության զարգացմանը խոչընդոտող պատճառներ.**

- 1) պատմական և փիլիսոփայական գիտությունների զարգացման կասեցումը
- 2) անհատի պաշտամունքը
- 3) հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր ժամանակաշրջանների կանխակալ լուսաբանումը
- 4) քաղաքական բռնաճնշումները և հալածանքները
- 5) գաղափարական իշխող կարծրատիպերը
- 6) ազգային գրական ժառանգության սխալ գնահատումը
- 7) այլախոհական շարժման ծավալումը

**27. Թվարկվածներից որոնք են բնութագրում Առաջին հանրապետության տնտեսական քաղաքականությունը.**

- 1) Հողի մասին նոր օրենքի հիմքում դրվեց հողի սեփականաշնորհման ծրագիրը:
- 2) Արդյունաբերության և առևտրի բնագավառում թույլատրվեց սեփականության տարբեր ձևերի՝ պետական, մասնավոր, կոոպերատիվ, կոնցեսիա, գոյությունը:
- 3) Վերացվեց հողի պետական սեփականությունը, թույլատրվեց հողի առքն ու վաճառքը:
- 4) Պետականացվեցին բոլոր մասնատիրական, վանքապատկան, վակուֆային, եկեղեցական ու լքյալ հողերը:
- 5) Մոցվեց եկամտային-առաջադիմական հարկ:
- 6) Մոցվեց մեկ միասնական հարկ բոլոր տնտեսվարողների համար:
- 7) Պետությունը խրախուսում էր միայն օտարերկրյա կապիտալիստների ներդրումները տնտեսության մեջ:
- 8) Հողը տրվեց գյուղացիներին որպես սեփականություն հավասարության սկզբունքով՝ ըստ շնչերի կամ աշխատող ձեռքերի:
- 9) Կալվաճատիրական հողատիրությունը վերացվեց մասնակի փոխհատուցմամբ:

**28. Սևրի պայմանագիրը պատմական տվյալ պայմաններում չհրազործվեց, որովհետև՝**

- 1) Անկարայի երիտթուրքական կառավարությունը չճանաչեց պայմանագիրը և վարեց այն ձախողելու քաղաքականություն
- 2) Խորհրդային Ռուսաստանը չկատարեց իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները
- 3) Թուրքիայի սուլթանական կառավարությունը երկրում այլևս փաստական իշխանություն չունեց
- 4) չվավերացվեց այն ստորագրած դաշնակից գլխավոր երկրների կողմից
- 5) դաշնակից երկրները ոչ միայն ճնշում չգործադրեցին քեմալականների վրա պայմանագիրը կատարելու հարցում, այլև համագործակցեցին նրանց հետ:
- 6) Հայաստանը չստացավ Վրաստանի աջակցությունը
- 7) հայկական երկու պատվիրակությունները միասնական չէին գործում
- 8) կնքվել էր Բրեստ-Լիտովսկի հաշտությունը

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Պետականությունները դասավորել ըստ ստեղծման ժամանակագրական հաջորդականության.

ա. Վրաստանի Հանրապետություն

բ. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն

գ. Հայաստանի առաջին հանրապետություն

դ. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն

1) դ, բ, ա, գ

2) բ, գ, ա, դ

3) դ, ա, բ, գ

4) բ, ա, դ, գ

### 2. Դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. ՀՀ խորհրդարանի առաջին ընտրությունները

բ. Հայաստանի անկախության մասին կոչի հրապարակումը Թիֆլիսի մամուլում

գ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը

դ. Հ. Քաջազնունու ընտրվելը ՀՀ վարչապետ

ե. ՀՀ առաջին կառավարության ժամանումը Երևան

1) դ, բ, ա, գ, ե

3) բ, ե, ա, գ, դ

2) դ, բ, ե, գ, ա

4) բ, դ, ե, գ, ա

### 3. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. հողային բարեփոխման անցկացումը ՀՀ մի շարք շրջաններում

բ. Նժդեհի գորաջոկատի հաղթանակը Որոտանի կիրճում Նուրի փաշայի զորքի նկատմամբ

գ. «Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհրդի» ստեղծումը

դ. Անդրանիկի հռչակվելը Զանգեզուրի գերագույն զինվորական հրամանատար

ե. Ադրբեջանի խորհրդայնացումը

զ. արցախահայության առաջին համագումարը Շուշիում

է. Ա. Խատիսյանի կառավարության հրաժարականը

ը. Մայիսյան ապստամբության պարտությունը

թ. Բաքվի հայության կոտորածը թուրքական զորքերի և թուրք-թաթարական խաժամուժի կողմից

ժ. վրաց-հայկական կարճատև պատերազմի ավարտը

1) թ, գ, դ, ժ, գ, բ, ե, է, ա, ը

3) գ, թ, դ, ժ, գ, բ, ե, է, ը, ա

2) գ, թ, ժ, դ, գ, ե, բ, է, ը, ա

4) թ, գ, բ, ե, ա, դ, է, ժ, գ, ը

**4. Գտնել այն իրադարձությունը, որն, ըստ ժամանակագրական հաջորդականության, տեղի է ունեցել վերջինը.**

- 1) Պողոս Նուբարի նախաձեռնությամբ Փարիզում Հայոց ազգային համագումարը
- 2) ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը
- 3) Արևմտահայերի երկրորդ համագումարը
- 4) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական առաջին ընտրությունները

**5. Գտնել այն իրադարձությունը, որն, ըստ ժամանակագրական հաջորդականության, տեղի է ունեցել առաջինը.**

- 1) ՀՀ փաստացի ճանաչումը Անտանտի գլխավոր երկրների ղեկավարների նիստի կողմից
- 2) գեներալ Հարբոդի պատվիրակության գործուղումը Փոքր Ասիա և Անդրկովկաս
- 3) Սան Ռեմոյի կոնֆերանսը
- 4) ՀՀ կառավարության կողմից Միացյալ Հայաստանի անկախության հռչակումը

**6. Տրված իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Արարայի ճակատամարտը
- 2) «Լոռու չեզոք գոտու» ստեղծումը
- 3) Արցախահայության 9-րդ համագումարը
- 4) Վիլսոնի իրավարար վճռի հրապարակումը
- 5) ՀՀ զինանշանի մասին օրենքի ընդունումը
- 6) թուրք-հայկական երկրորդ պատերազմի ավարտը

**7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. ԱԽԴԱՀ-ի ստեղծումը  
բ. պարենհարկի ընդունումը խորհրդային Հայաստանում  
գ. համաժողովրդական ապստամբության ժամանակ Ղարաքիլիսա-Դիլիջան գավառների ռազմահեղափոխական կոմիտեի ստեղծումը  
դ. Հայիեդկոմի որոշմամբ բոլոր տեսակի բռնագրավումների արգելումը, առևտրի և գների ազատականացումը  
ե. Վրաստանի ամբողջ տարածքում խորհրդային կարգերի հաստատումը  
զ. Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումը

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) գ, ե, դ, բ, զ, ա | 3) ե, բ, գ, դ, զ, ա |
| 2) ե, գ, բ, զ, ա, դ | 4) գ, դ, ե, բ, ա, զ |

**8. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. խորհրդային զորքերի մուտքը Կապան  
բ. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն  
գ. խորհրդային զորքերի մուտքը Գորիս

- դ. Ինքնավար Սյունիքի ստեղծումը
- ե. Խորհրդային զորքերի մուտքը Սիսիան
- զ. Ինքնավար Սյունիքի հռչակումը «Լեռնահայաստան»

- 1) գ, բ, ե, դ, ա, գ
- 2) գ, դ, ա, բ, ե, գ
- 3) դ, բ, գ, գ, ե, ա
- 4) դ, գ, բ, ե, գ, ա

**9. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի բացումը
- բ. Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի սկիզբը
- գ. քեմալական զորքերի հեռանալը Ալեքսանդրապոլի գավառից
- դ. Ա. Բեկզադյանի պատվիրակության մեկնումը Մոսկվա
- ե. ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի կողմից «Կարսի կոնֆերանսի մասին» որոշման ընդունումը
- զ. Խորհրդային զորքերի մուտքը Մեղրի. Զանգեզուրի Խորհրդայնացման ավարտը

- 1) ա, գ, դ, բ, գ, ե
- 2) ա, գ, ե, գ, բ, դ
- 3) դ, ա, գ, գ, ե, բ
- 4) դ, գ, ա, ե, գ, բ

**10. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. համատարած կղեկտիվացման անցկացումը Երևանի գավառում, Լենինականի ու Լոռու գավառների մեծ մասում
- բ. ՀՅԴ, այսպես կոչված, ինքնավերացման համագումարը Երևանում
- գ. Հայաստանում գավառային բաժանման վերացումը և շրջանների ստեղծումը
- դ. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
- ե. Լենինականի հէկի գործարկումը
- զ. ՀԿԵՄ-ի ստեղծումը

- 1) գ, բ, ե, դ, ա, գ
- 2) գ, բ, դ, ե, ա, գ
- 3) բ, գ, գ, ե, դ, ա
- 4) բ, դ, գ, ե, ա, գ

**11. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել վերջինը.**

